ԷՋՄԻԱԾԻՆ

1972

ԺԱ.



ԻԸ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Հոյակերտեր

1972

ՍՊ-15-464



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ Տ. ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(1972 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ 12)

Սուրբ Էջմիածնի բազմադարյան կամարների ներքև ուրախության զանգեր են հնչում, ավետելու հայ հավատացյալ ժողովրդին, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, այցելությունը՝ Մոսկվայի և Համայն Ռուսաստանի նորընտիր Սրբազան Պատրիարքի, հայ եկեղեցու կենտրոնին և Ամենայն Հայոց կաթողիկոսին:

Այսօր, կիրակի, 12 նոյեմբեր, մեր Մայր տաճարում միասին աղոթելուց հետո, այս հանդիսավոր պահին, ս. Գրիգոր Լուսավորչի գահից Մեր սրտի խոսքն ենք ուզում ասել Մեր մեծ Հյուրին, Մեր սիրեցյալ Եղբորը՝ Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքին և Նրա շքախմբի ամենապատիվ անդամներին:

Ձերդ Սրբություն, նախ մի անգամ ևս Մեր խոր գոհունակությունն ենք հայտնում և Մեր հրճվանքը, որ սիրով ընդունեցիք Մեր եղբայրական հրավերը և եկաք Հայաստանյայց առաքելական եկեղեցու Մայր Աթոռը ի ս. Էջմիածին, Մեզ հետ միատեղ աղոթելու համար հնադարյան մեր Մայր տաճարի սեղանների առաջ, բերելու համար Մեզ քրիստոնեական ողջույնը ռուսաց պրավոսլավ սուրբ եկեղեցու, բերելու նաև Ձեր հայրապետական օրհնությունը մեր հավատացյալ ժողովրդին: Վստահ եղեք թե Ձեր այս այցելությունը, Ձեր ողջույնը և Ձեր օրհնությունը չափազանց թանկ են Մեզ համար, մեր հոգևորականության և ամբողջ մեր ժողովրդի համար:

Քրիստոնեական եկեղեցիների պետերի հանդիպումներն ու փոխադարձ այցելությունները, մասնավոր իմաստ ու կարևորություն են ստանում մեր դարաշրջանում որ եկեղեցական կյանքի մակարդակի վրա բնորոշվում է էկումենիզմով, այսինքն՝ հետզհետե զարգացող այն շարժումով որ առաջնորդում է եկեղեցիներին դեպի մերձեցում, դեպի գործակցություն, դեպի փոխադարձ հարգանք ու գնահատանք և դեպի իրականացումը համայն քրիստոնեության տիեզերական եղբայրության՝ Քրիստոսի սիրո մեջ: Մենք երջանիկ ենք որ աստվածային նախախնամությունը, մեր օրերին բոլոր եկեղեցիների առաջ բաց արեց այս ճանապարհը, էկումենիկ շարժման ճանապարհը, որ հավատում ենք թե հետզհետե առավել պիտի լուսավորվի ու պիտի ընթա-

նա դեպի ավելի լայն հորիզոններ, ի փառս մեր Տիրոջ Հիսուսի Քրիստոսի և հերջանկություն ու խաղաղություն մարդկային աշխարհի:

Այսօր երբ խոսում ենք էկումենիկ շարժման, էկումենիկ ոգու մասին, չենք կարող չհիշատակել թե այդ ոգին տակավին վաղուց սկիզբ է առել ու զարգացել մեր երկու քույր եկեղեցիների՝ ռուս պրավոսլավ և Հայաստանյայց եկեղեցիների միջև: Պատմության ընթացքում, մեր եկեղեցիների միջև երբեք չեն արձանագրվել ոչ բարեկամական երևույթներ, կամ անհանդուրժողություն և ոչ իսկ անտարբերություն: Ընդհակառակը, մեր եկեղեցիների միջև միշտ առկա է եղել ու զարգացել ավետարանական փոխադարձ սերն ու հարգանքը: Պատմությունը վկայում է հետևաբար թե էկումենիկ ոգին անցյալում էլ զարդարել է մեր հոգևոր կյանքը ամեն անգամ և ամենայն տեղ երբ և ուր հանդիպել են մեր եկեղեցիները, երբ և ուր հանդիպել են ռուս և հայ հոգևորականներ:

Շարունակելով Մեր խոսքը, կկամենայինք ավելացնել թե էկումենիկ շարժումը Մենք ըմբռնում ենք իբրև մի եկեղեցական շարժում որ ինքնանպատակ չէ, այլ որ առնչվում է և պետք է առնչվի մեր օրերի մարդկությունը հուզող հարցերի հետ: Նրա առաջին նպատակը զուտ կրոնական լինելով հանդերձ, նա չի կարող հեռու մնալ այն հրամայականներից որ դրված են այսօր աշխարհի առաջ: Չմոռանանք երբեք որ քրիստոնեական ուսմունքը նաև մի աշխարհայացք է երկրային կյանքի վերաբերյալ: Մանավանդ այսօր, եկեղեցին չի կարող հրաժարվել իր այդ առաքելությունից: Այլապես նա կարող է մեկուսանալ կյանքից և լեզու չգտնել գալիք սերունդների հետ: Մեր համոզումն է հետևաբար որ էկումենիզմի ճանապարհին, եկեղեցիների պատասխանատու ղեկավարները պետք է իրենց մտահոգությանց և համատեղ խորհրդակցությանց առարկա դարձնեն մարդկությունը այսօր հուզող ընկերային, բարոյական և դաստիարակչական հարցերը Քրիստոսի Ավետարանի լույսի ներքև: Այս հարցերի շարքին, կասկած չկա թե առաջին տեղը գրավում է աշխարհի խաղաղության պահպանման հրամայականը: Համաշխարհային երկու մեծ պատերազմների ահավոր ողբերգություններից հետո արդյոք կա՞ մեզ բոլորիս համար, բոլոր ժողովուրդների համար ավելի մեծ մտահոգություն, ավելի արդար իղձ քան աշխատել ու պայքարել բոլոր այն ուժերի ու ձգտումների դեմ որոնք մեր օրերին նոր պատերազմների կրակն են բորբոքում: Մեր պատասխանը, հայ եկեղեցու պատասխանը, եղել է ու միշտ պիտի լինի՝ անձանձրույթ աղոթել ու գործել վասն աշխարհի խաղաղության և պետությունների համերաշխ գործակցության, արդարության, հավասարության ու առաջադիմության պայմաններում բոլոր ազգերի համար:

Մեզ համար հոգեկան մխիթարություն է հաստատել թե մեր երկու եկեղեցիները, վրացական քույր եկեղեցու հետ միատեղ, տակավին 1949 թվականից սկսյալ, Ստոկհոլմի խաղաղության պատմական կոչից անմիջապես հետո, հանդես եկան իրենց հստակ վերաբերումը ճշտելով ու իրենց վճռական խոսքն ասելով ի պաշտպանություն աշխարհի խաղաղության դատի: Հայաստանյայց եկեղեցին այսօր էլ նույն ջերմությամբ ու վճռականությամբ պաշտպան է կանգնած այդ սրբազան դատին Ձեր կողքին, ձեր մեծ եկեղեցու կողքին:

Մենք կարծում ենք որ բոլոր եկեղեցիները որոնք էկումենիկ ոգով միատեղ աղոթում են ու գործում, միասնաբար հանդես պիտի գան, աշխարհին իրենց խոսքը ասելու հանուն կյանքի և հանուն խաղաղության: Կարելի չէ

Քրիստոսի Ավետարանը քարոզել, կարելի չէ քրիստոնյա լինել և հանդուրժել սնուցումը պատերազմի հրեշային ոգու։

Ամեն ժողովուրդ իր պատմության արյունոտ էջերը ունի, սակայն հայ ժողովրդի ճակատագիրը տևական մի մարտիրոսություն եղավ, մանավանդ տասներորդ դարից սկսյալ երբ խորտակվեցին Բագրատունյաց հայկական թագավորությունը ու Հայաստանը բաժանվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև և երբ նույն դարի կեսերից սկսվեցին սելջուկյան աղետալի արշավանքները։ Տասնմեկերորդ դարի պատմիչ Արիստակես Լաստիվերտցին իր կյանքի վերջում գրում է. «Ոչ մի օր ու ժամանակ խաղաղություն և հանգիստ չտեսանք. մեր կյանքի բոլոր ժամանակները լի եղան խռովությամբ ու նեղությամբ, և օրըստօրե միայն ավելացան մեր չարչարանքներն ու տառապանքները։ Ամեն առավոտ սկիզբ էր դրվում նոր աղետների, որովհետև նրանց բոլորի նպատակն էր մեզ բնաջնջել իբրև հնացած ձորձեր և վերացնել մեր հիշատակը, որպեսզի բնավ չտեսնեն մեզ կենդանի, այլ մեր գերեզմանները անհետանան իրենց ոտների տակ»։ Եվ այս եղավ հայ ժողովրդի ճակատագիրը հազար տարի շարունակ, մինչև 1915 թվականը, երբ սուլթանական Թուրքիան վերջին մի հարվածով ամբողջովին բնաջինջ արեց Արևմտյան Հայաստանը, կոտորելով մոտ երկու միլիոն հայ ազգաբնակչություն։ Այս ողբերգական ճակատագրից փրկվեց՝ պատմական Հայաստանի մի մասը միայն, Արևելյան Հայաստանը, որ 1828-ին գտել էր իր կյանքի ապահովությունը քրիստոնյա Ռուսաստանի հովանու ներքև։ Ու այսօր, այդ նույն հողամասի վրա է, որ պատմական զարգացումների և հայ ժողովրդի հերոսական ճիգերի շնորհիվ, հիմնվեց հայկական նոր պետությունը, Սովետական Հայաստանը, իբրև լիիրավ անդամ սովետական ժողովուրդների մեծ միության։ Մանավանդ ա՛յս օրերին, Մենք հիշում ենք մեր ժողովրդի տխուր անցյալը և հրճվում՝ լուսավոր ներկայով, որովհետև այս տարի, մի ամիս հետո, հանդիսավոր կերպով պիտի տոնախմբվի Սովետական Միության ազգային հանրապետությունների եղբայրական դաշնակցության հոչակման հիսնամյակը։

Այսօր, այդ տոնախմբումի նախօրյակին և ռուսաց եկեղեցու Պատրիարքի ներկայությամբ արդար է երախտագիտությամբ ոգեկոչել նվիրական անունը հայրենասեր մեծ կաթողիկոս Ներսես Աշտարակեցու, որ անցյալ դարի սկզբին տակավին, կարողացավ հստակ տեսնել հայ ժողովրդի փրկության ճանապարհը և նախախնամական դեր կատարել Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացվելու գործում։

Ռուսական զենքի և հայ կամավորների հաղթանակից հետո, ականատես ռուս զինվորական դեկաբրիստ Լաչինովը իր հուշերի մեջ պատմում է, թե Ներսես կաթողիկոսը գնում է Աշտարակ և ծնկի գալով իր հոր գերեզմանի առաջ, ասում է. «Հայր, ես իմ խոստումը կատարեցի, քո և մեր ժողովրդի երազը իրականացած է»։

Այսօր, հարյուր և հիսուն տարի հետո, մենք էլ կանգնած Ներսես կաթողիկոս Աշտարակեցու գերեզմանի առաջ, կարող ենք ասել. «Հայրենյաց պաշտպան Հայրապետ, մեր ժողովուրդը, քո՛ ցույց տված ճանապարհով անշեղորեն ընթանալով, իր քաջ որդվոց սուրբ արյունով և նույն ռուսաց ժողովրդի օգնությամբ, վերականգնեց՝ հազար տարի առաջ խորտակված իր ազգային պետությունը»։

Թե՛ հայրենաբնակ մեր ժողովուրդը և թե՛ արտասահմանյան երկրներում ապրող մոտ երկու միլիոն հայերը, պատմության փորձով, այսօր պայծառ գիտակցությունը ունեն իրենց ազգային կենսական շահերի, և ներկա Հայաս-

տանի վերածնունդի ու ծաղկումի, որ խարսխված է ռուս ու հայ ժողովուրդների անքակտելի բարեկամության դաշինքի վեմի վրա: Այսպե՛ս, և միմիայն այսպե՛ս է որ հայ ժողովուրդը, ապահովության ու ինքնավստահության խոր զգացումով գոտեպինդ, նայում է դեպի իր է՛լ ավելի լուսավոր ապագան, տեսիլքովը իր բարի իղձերի իրականացման:

Ձերդ Սրբություն, Մենք այստեղ կամեցանք հիշատակել այս բոլորը, որովհետև մեր երկու եկեղեցիների էկումենիկ եղբայրությունը հիմնված է՝ նա՛և մեր ժողովուրդների այդ անքակտելի բարեկամության ու եղբայրության վեմի վրա:

Վերջացնելուց առաջ Մեր խոսքը, հաճելի է Մեզ վկայությունը բերել նաև մեր անձնական բարեկամության և ճշմարիտ եղբայրական զգացումների որոնք կապում են Մեզ երկար տարիներից ի վեր՝ Ձեր սրբազան անձին: Դուք, Ձերդ Սրբություն, մարմնավորում եք բազմադարյան ռուսական պրավոսլավ ոգին և ռուս ժողովրդի կրոնական սուրբ ավանդությունները: Մենք քաջ ճանաչում ենք Ձեզ: Դուք բարեսիրտ եք, Դուք քաղցրաբարո եք, Դուք մեծահոգի եք, Դուք հարազատ ռուս Հայրապետ եք, սիրելի ու հարգելի մեզ բոլորիս համար: Մեր ամենաջերմ աղոթքն է որ Տերը Ձեզ պարգևի հովվապետության երկար տարիներ՝ լիակատար առողջությամբ, նոր լույսերով, նոր վկայություններով փառավորելու համար ռուսական պատմական սուրբ եկեղեցին, որին Դուք նվիրած եք Ձեր ամբողջ կյանքն ու հոգին:

Հանուն Հայաստանյայց եկեղեցու, հանուն հայ եկեղեցու հոգևոր մեր եղբայրների, խնդրում ենք ընդունել Մեր եղբայրական սերն ու հարգանքը:

«Աստուած յուսոյ լի արասցէ զՁեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելով Ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13). ամեն:



Տ. ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

Ձերդ Սրբություն, սիրելի Եղբայր Վազգեն Առաջին, կաթողիկոս Ամենայն Հայոց,

Երուսաղեմի ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարք,

Սիրելի եպիսկոպոս եղբայրներ,

Հարգելի հոգևորականներ Հայաստանյայց եկեղեցու,

Թանկագին բարեկամներ,

Ինձ համար պատիվ է և ուրախություն ողջունել այս հանդիսավոր հավաքույթը ռուս պրավոսլավ եկեղեցու կողմից, նրա նվիրապետության, հոգևորականության և հավատացյալների անունից: Մենք ձեր անկեղծ բարեկամներն ենք ոչ միայն նրա համար, որ կրում ենք մեզ համար ընդհանուր եղող քրիստոնյա անունը, այլ մանավանդ նրա համար, որ դուք և մենք միացած ենք մեր երկրի ժողովուրդների եղբայրական մեկ ընտանիքում, ընտանիք, որի կազմության 50 տարին լրանում է այժմ:

Պողոս առաքյալի խոսքերով ողջունում եմ ձեզ, որպես «գործակցաց իմոց ի Քրիստոս Յիսուս», ողջունում եմ ձեզ որպես «վաստակաւորաց ի Տէր» և որպես եղբայրական Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու զավակների:

Պողոս առաքյալը կորնթացիներին ուղղված իր Ա թղթում գրում է.

«Աղաչեմ զձեզ, եղբարք, անուամբն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի զնոյն բան ունիցիք ամենեքեան, և մի՛ իցեն ի ձեզ հերձուածք, այլ զի իցէք ի նոյն միտս և ի նոյն հանճար» (Ա 11): Այս խոսքերը միշտ հիշեցնում են մեզ այն բարի ձգտումի մասին, որով պետք է ղեկավարվենք մենք բոլորս՝ վերացնելու համար մեր միջև եղած բաժանումները և վերահաստատելու համար, մասնավորապես, լիակատար միությունը մեր միջև:

Մեր հիշողության մեջ վերակենդանացնելով առաքելական այս կոչը, մենք ձգտում ենք փոխադարձ հաղորդություն մեկ, սուրբ, ընդհանրական և առաքելական եկեղեցու ծոցում, հաղորդություն, որը արգելք չի կարող հանդիսանալ մեզ համար, որպես ինքնագլուխ եկեղեցիների՝ պահպանելու և զարգացնելու մեր յուրաքանչյուրին հատուկ հոգևոր մշակույթի հարստությունները, մեր կանոնական, իրավական ինքնուրույնությունը, մեր կարգը, պատարագամատույցը և ավանդությունները:

Ռուս պրավոսլավ և հայ առաքելական եկեղեցիների միջև եղած բարեկամական հարաբերությունները անցյալի երկարատև պատմություն և փորձ ունեն, հարաբերություններ՝ որոնք տարեցտարի ավելի են ամրանում:

Մենք միանգամայն գնահատում ենք այն արդյունավետ համագործակցությունը, որ միմյանց միջև ունեն մեր երկու եկեղեցիները՝ վկայության և ծառայության զանազան ոլորտներում:

Դրա հետ միաժամանակ մենք մտածում ենք էկումենիկ ասպարեզում, մասնավորաբար Եկեղեցիների համաշխարհային խորհրդում ունեցած մեր միասնական աշխատանքների մասին:

Մենք ուրախանում ենք մեր ընդհանուր, խաղաղարար ջանքերի հաջողությամբ, ջանքեր, որոնք միասնաբար ի կատար են ածվում մեր երկրում գոյություն ունեցող կրոնական համայնքների ու եկեղեցիների կողմից:

Մենք առանձնապես նշում ենք հայ առաքելական և ռուս պրավոսլավ եկեղեցիների մասնակցության կարևորությունը քրիստոնեական համաշխարհային կոնֆերանսների գործունեության մեջ, որի դրական ազդեցությունը քրիստոնյա հասարակության լայն շրջանների վրա, Աստուծո ողորմությամբ, ուժեղանում է:

Մեր երկու եկեղեցիների փոխադարձ մերձեցումը ավելի ցայտուն է դառնում անշահախնդիր եղբայրության և համագործակցության այն հարաբերություններով, որ ռուս և հայ ժողովուրդները մտցնում են մեր երկրում ստեղծվող նոր և արդար կյանքի մեջ:

Մենք ուրախանում ենք հայ և ռուս ժողովուրդների եղբայրական բարեկամությամբ և ձգտում ենք մեր ուժերի ներած չափով ծառայել նրա ամրապնդմանն ու բարգավաճմանը:

Թույլ տվեք, Ձերդ Սրբություն, արտահայտել մեր սրտագին բարեմաղթությունները սքանչելի հայ ժողովրդին, հայ առաքելական եկեղեցուն, նրա պատրիարքներին, Հայաստանյայց սուրբ եկեղեցու եպիսկոպոսներին և ցանկանալ արևշատություն՝ մեզ համար շատ սիրելի Ձերդ Սրբությանը:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՑ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ
ԻՐԵՆՑ ՇՔԱԽՄԲԵՐՈՎ ՎԵՀԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ԱՌԱՋ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ժամանում

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա.-ի եղբայրական ու սիրալիր հրավերով սույն թվականի նոյեմբերի 10-ին, ուրբաթ օրը, Մայր Աթոռ է ժամանում Մոսկվայի և Համայն Ռուսիայի **Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը:**

Նորին Սրբություն Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքին այս ուրախ առիթով ուղեկցում էին Մոսկվայի ռուսաց պատրիարքության եկեղեցական արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ, Տուլայի և Բելեևի միտրոպոլիտ **Յուվենալի սրբազանը,** Վոլոկոլամսկու **արքեպիսկոպոս Պիտիրիմ** սրբազանը և շքախմբի չորս այլ անդամներ:

Նոյեմբերի 10-ին, ժամը 14-ին, Երևանի օդանավակայանում Մոսկվայի և Համայն Ռուսիո Նորին Սրբություն **Տ. Պիմեն Պատրիարքին** և Նրա շքախմբի բարձրաստիճան անդամներին անձամբ դիմավորեց և բարի գալուստ մաղթեց **Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝** շրջապատված Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ **տ. Կոմիտաս** և Ռումինիայի ու Բուլղարիայի հայոց առաջնորդ **տ. Տիրայր** սրբազաններով, Մայր Աթոռի միաբան վարդապետներով և մայրավանքի ղեկավար պաշտոնեությամբ:

Բարձրաստիճան հյուրին դիմավորեց և բարի գալուստ մաղթեց նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի հայոց պատրիարք **ամենապատիվ տ. Եղիշե արքեպ. Տերտերյանը,** որը անցյալ տարի մայիսին Երուսաղեմի հայոց սրբոց Հակոբյանց վանքում ողջունել և ծանոթացել էր Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքին: Այս առթիվ Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքին ուղեկցում էր Երուսաղեմի հայոց Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի տեսուչ ու պատրիարքարանի դիվանապետ **տ. Շահե եպս. Աճեմյանը:**

Մոսկվայի և Համայն Ռուսիո Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքին Երևանի օդանավակայանում դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Հայ-

կական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Ս. Գասպարյանը** և տեղակալ **Ս. Հովհաննիսյանը:**

Մայր Աթոռի թանկագին հյուրերը օդանավակայանից ավտոմեքենաների շարասյունով հանդիսավորապես առաջնորդվեցին Մայր Աթոռ, ուր մայրավանքի արևելյան դարպասի առաջ նրանց դիմավորեց Մայր տաճարի լուսարարապետ **տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:**

Երկու քույր եկեղեցիների Հովվապետները «Հրաշափառ»-ով և եկեղեցական թափորով, Մայր տաճարի զանգերի ավետավոր ղողանջի ներքո, մուտք գործեցին Մայր տաճար, ուր Իշման ս. սեղանի առաջ ծնրադիր կատարեցին իրենց ուխտն ու աղոթքը բարեպաշտ երկյուղածությամբ:

Եկեղեցական կարճ արարողությունից հետո Հայոց Հայրապետը ջերմորեն ողջունեց և բարիգալստյան սրտագին խոսք ուղղեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքին, Նրա շքախմբի անդամներ տ. Յուվենալի միտրոպոլիտին և տ. Պիտիրիմ արքեպիսկոպոսին՝ արտահայտելով անձամբ Իր, Երուսաղեմի ամենապատիվ սրբազան պատրիարքի, ինչպես նաև Մայր Աթոռի և հայ եկեղեցու ողջ հոգևորականության ու հավատացյալ ժողովրդի ուրախությունն այս պատմական բացառիկ այցելության առիթով՝ բարեմաղթելով նաև, որ Աստված օրհնի այս երջանիկ հանդիպումը երկու քույր եկեղեցիների համագործակցության և հայ ու ռուս եղբայրական ժողովուրդների դարավոր, անքակտելի բարեկամության Է՛լ ավելի ամրապնդման ճանապարհի վրա:

Ողջույնի փոխադարձ ջերմ և նույնքան սրտագին խոսքով հանդես եկավ Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը՝ գոհություն հայտնելով Աստծուն, որ Իրեն հոգևոր բերկրանք շնորհեց ուխտի գալու հայ հավատքի կենտրոն ս. Էջմիածին և բիբլիական Հայոց աշխարհ, ուր դարեր առաջ հայ եկեղեցու մեծ Հայրապետ ս. Գրիգոր Լուսավորիչը Ավետարանի լույսը տարածեց հայ հոգիներից ներս: Նորին Սրբությունը, այնուհետև, ուրախությամբ նշեց միաժամանակ, որ մեր դարաշրջանում ռուս պրավոսլավ և հայ առաքելական եկեղեցիների միջև տեղի ունեցող փոխադարձ այցելություններն ու համագործակցությունը ավանդական են դարձել Քրիստոսի Ավետարանի փառքի համար: Ապա Տ. Պիմեն Պատրիարքը բարեմաղթություններ արեց Հայոց Հայրապետի կենաց արևշատության, Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնության և հովանու ներքո հայ առաքելական եկեղեցու պայծառության և անսասանության, հայոց վերածնված հայրենիքի բարօրության համար՝ եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում:

Մայր տաճարում եկեղեցական արարողության ավարտին երկու Հայրապետները Իրենց շքախմբերով և եկեղեցական թափորով առաջնորդվեցին Վեհարան, որի շքամուտքի առաջ Տ. Պիմեն Պատրիարքին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ **տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը,** Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ և Արգենտինայի հայոց առաջնորդ **տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը** և Մայր Աթոռի միաբան **տ. Գնել եպս. Ճերեճյանը**՝ Բեյրութից:

Վեհարանում Մայր Աթոռի միաբանները աջահամբույրով ստացան Տ. Պիմեն Պատրիարքի օրհնությունը և հրաժեշտ առան:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի ընդունարանում տեղի ունեցավ ջերմ զրույց երկու Հայրապետների, Երուսաղեմի հայոց պատրիարքի, հայ և ռուս

եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականների միջև ջերմ և սրտագին մթնոլորտում:

Եղբայրական սույն զրույցից հետո Վեհարանի սեղանատանը, ի պատիվ Մայր Աթոռի հարգարժան հյուրերի և հայ եկեղեցու հոգևոր իշխանավորների, տրվեց ճաշկերույթ, որը վերածվեց ճշմարտապես սիրո սեղանի:

Կարճ հանգստից հետո բարձրապատիվ հյուրերը այցելեցին Մայր տաճար, նրան առընթեր եկեղեցական սրվեստի թանգարան և ապա՝ Հին Վեհարանի կաթողիկոսաց թանգարան:

Այցելություններ

Նոյեմբերի 11-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, **երկու Հայրապետները** Իրենց շքախմբերով այցելեցին Երևանում ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ուր Նրանց հարգալիր մեծարանքով ընդունեց Մատենադարանի փոխ-տնօրեն պրն. **Բաբգեն Զուգասզյանը**՝ ձեռագրաց սույն հաստատության ղեկավարության այլ անդամներով և գիտական աշխատողներով:

Հյուրերն այստեղ մեծ հիացմունքով ծանոթացան հայ մշակույթի, արվեստի և գիտության անկրկնելի գանձերին, ինչպես նաև գոհունակության և երախտագիտության խոր զգացումով դիտեցին Մատենադարանում գուրգուրանքով պահվող ռուսական մշակույթի և պատմության վերաբերյալ թանկագին հիշատակարանները:

Ժամը 12-ին երկու Հայրապետները, դարձյալ Իրենց շքախմբերով, ուխտի մեկնեցին ս. Գեղարդ վանք:

Հայ մշակույթի կենտրոն պատմական այս վանքի մեծ դարպասի առաջ երկու Հայրապետներին և նրանց շքախմբի բարձրաստիճան անդամներին աղ ու հացով դիմավորեցին **տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը, տ. Նարեկ վրդ. Շաքարյանը,** վանքի միաբանությունը և պաշտոնեությունը:

Այնուհետև երկու Հայրապետները առաջնորդվեցին հնադարյան տաճարից ներս, ուր Նրանց պատմական մանրամասն տեղեկություններ տրվեցին ս. Գեղարդ վանքի մասին, որպես Հայաստանում հոգևոր տիպի բարձրագույն ուսումնարանի և հայ մշակույթի փառավոր օջախներից մեկի:

Ս. Գեղարդ վանքում միաբանության կողմից ջերմորեն հյուրասիրվելուց հետո բարձրապատիվ հյուրերը հրաժեշտ առան անմոռանալի տպավորություններով:

Այց հոգևոր ճեմարան

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, երկու Հայրապետները և Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքը հանդիսավորապես առաջնորդվեցին Մայր տաճար և նախագահեցին երեկոյան ժամերգությանը:

Ժամը 19-ին հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում, ի պատիվ Մայր Աթոռի թանկագին հյուրերի, կազմակերպվեց ուսանողական հանդես, որին ներկա եղավ նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Հանդեսը բացվեց թիվ արտասանված հայերեն և ռուսերեն Տերունական աղոթքով, որից հետո հոգևոր ճեմարանի տեսուչ **տ. Հովհաննես քհն. Մարությանը,** հանուն ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության, բարիգալատյան և ողջույնի հետևյալ խոսքն ուղղեց թանկագին հյուրերին.

«Հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության համար երջանկություն է նվիրական այս հարկի տակ ողջունել և բարի-գալստյան խոսք ասել Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքին և Նրա շքախմբի անդամներին:

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի 1971 թ. հունիսի համարում մենք կարդացինք Ձերդ Սրբության ընտրության և գահակալության հանդիսությունների մասին, որոնց անձամբ մասնակցեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ բերելով Մայր Աթոռ ս. Էջմիածնի և հայ հավատացյալ ժողովրդի խնդակցությունը Ձեր ընտրության առթիվ: Դուք ուխտի գնացիք Երուսաղեմ, այնտեղ եղաք նաև հայոց ս. Հակոբյանց Մայր տաճարում և ս. Գլխադիր մատրան մեջ Ձեր ուխտը կատարեցիք: Հյուրընկալվեցիք Երուսաղեմի նորին ամենապատվություն տ. Եղիշե հայոց պատրիարքի կողմից: Դուք այցելեցիք նաև Դամասկոսի և Կահիրեի հայոց եկեղեցիները՝ բերելով Ձեր օրհնությունը և ամրապնդելով հայ առաքելական և ռուս պրավոսլավ եկեղեցիների 200-ամյա դարավոր բարեկամական կապերը:

Եվ այսօր Դուք, որպես ռուսաց եկեղեցու Հովվապետ, ուխտի եք եկել Հայաստան աշխարհ, Հայաստանյայց եկեղեցու կենտրոն ս. Էջմիածին՝ Ձեր եղբայրական ողջույնը բերելու Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Սրբություն Վազգեն Ա-ին և Ձեր շնորհաբեր օրհնությունները՝ մեր ժողովրդին և հոգևոր ճեմարանի սաներին:

Ս. Էջմիածնի հոգևոր կրթության այս հաստատությունը սկիզբ է առել չորրորդ դարից, Գրիգոր Լուսավորչի օրով: Այստեղ է, որ Ե դարում մեր թարգմանիչ վարդապետները Աստուծո խոսքը հայ լեզվով թարգմանել և քրիստոնեության լույսը տարածել են հայ ժողովրդի մեջ: Եվ այդ լույսը երբեք չի հանգել, հակառակ բազում դարերի մեր ժողովրդի և եկեղեցու անլուր նահատակությունների:

Հոգևոր ճեմարանում այսօր սովորում են 40 սաներ, որոնց մեկ երրորդը սիրյուքահայ պատանիներ են: Նրանք նվիրումով պատրաստվում են Աստուծո ս. Սեղանների սպասավորության գործին: Մեր շրջանավարտ սաներից շատերը իրենց կրոնագիտական և աստվածաբանական գիտելիքները հաջողությամբ ստացել են ռուսաց պատրիարքարանի Զագորսկի հոգևոր ակադեմիայում:

Պատմության մեջ ոչ մի ժողովուրդ այնքան երախտիք չի ունեցել հայ ժողովրդի նկատմամբ, որքան ռուս ազնիվ ժողովուրդը, որի օժանդակությամբ մեր ժողովուրդը փրկվեց կործանումից: Եվ այսօր մեր ժողովուրդը իր լուսավոր ապագան է կերտում հայ և ռուս ժողովուրդների և եկեղեցիների եղբայրության, բարեկամության սուրբ դաշինքով: Մեր երկու եկեղեցիների և ժողովուրդների եղբայրությունն ու բարեկամությունը զոդված են միատեղ թափած նրանց արյունով և առ Աստված ուղղված աղոթքով:

Ձերդ Սրբության այցելությունը ս. Էջմիածին նշանակալից է դառնում նաև նրանով, որ մեր դարաշրջանում եկեղեցիները մեկուսացնող պատվարները, անհասկացողությունները օրըստօրե վերանում են: Մեր օրերին եկեղեցիների միմյանց ավելի մոտիկից ճանաչելու և ըմբռնելու ձգտումը գնալով ավելի հրամայական է դառնում: Դավանանքով տարբեր եկեղեցիներ էկումենիկ ոգով փորձում են միասին աղոթել և աշխատել Քրիստոսի մի և ընդհանրական եկեղեցու փառքի համար, աշխարհի խաղաղության և ժողովուրդների եղբայրության համար:

Թույլ տվեք ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսա-

կան կազմի և ուսանողության կողմից ողջունել Ձեզ՝ մեր թանկագին և սիրելի հյուրերին:

Թող Աստված երկա՛ր ու երկա՛ր կյանք պարգևի Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքին, որպեսզի Նա Իր հոգևոր դասի հետ միասին վառ պահի Ավետարանի լույսը քրիստոնասաեր ռուս ժողովրդի սրտում: Թող ծաղկի ու պայծառանա ռուսաց պրավոսլավ եկեղեցին Պիմեն Պատրիարքի օրով:

Թող անշարժ և անսասան մնա ռուսաց սուրբ եկեղեցին:

Կեցցե՛ հայ և ռուս եկեղեցիների և ժողովուրդների եղբայրությունը և համագործակցությունը:

Կեցցե՛ Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը»:

Այնուհետև գործադրության դրվեց խնամքով պատրաստված գեղարվեստական մի ծրագիր: Հոգևոր ճեմարանի սաները, **տ. Մասիս աբղ. Գալստյանի** ղեկավարությամբ, կատարեցին «Էջ Միածինն ի Հօրէ», «Անձինք նուիրեալք», «Որք զարդարեցին», «Գովեա, Երուսաղէմ» շարականները, ճեմարանի քայլերգը և «Քաղհան», «Ծաղկիր, ազատ իմ հայրենիք», «Գալիկա» խմբերգերը: Գ լսարանի ուսանող Հակոբ սրկ. Խաչատրյանը ռուսերեն լեզվով արտասանեց մի հատված Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթագրքից: Նույն լսարանի ուսանող Ավետիք սրկ. Արաբաջյանը խոր ապրումով արտասանեց Ներսես Շնորհալու «Արևագալ»-ի ռուսերեն թարգմանությունը: Բ լսարանի ուսանող Գրիգոր Զմրուխտյանը դաշնամուրի վրա կատարեց Արամ Խաչատրյանի «Անտանտինա»-ն: Ապա ելույթ ունեցավ ճեմարանի «Զվարթնոց» նվագախումբը, որը կատարեց «Առաւօտ լուսոյ», «Ալագյազ», «Պոլյուշկա պոլե» և «Ուտրո կրասիտ» երգերը:

Հանդեսի ավարտին ճեմարանի տեսչի հրավերով ճեմարանի ուսանողությանն ու դասախոսական կազմին ուղղված հետևյալ հայրական ջերմ պատգամով հանդես եկավ **Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը.**

Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի խոսքը հոգևոր ճեմարանում

«Ձերդ Սրբություն,

Թանկագին վերատեսուչ հայր,

Էջմիածնի հոգևոր ճեմարանի թանկագին դասախոսներ և սաներ,

Տերը ձեզ բերել է աստվածաբանական գիտությանը նվիրված այս բարեպաշտ վայրը մի այնպիսի ժամանակ, երբ այդ գիտությունն առանձնահատուկ կերպով հարկավոր է եկեղեցուն:

Աստվածաբանությունը եկեղեցուն պետք է ստորյա կյանքում, իր մասնակցության մեջ էկումենիկ շարժմանը, որի մեջ, դուք գիտեք, իր արժանավոր տեղն ունի և Հայաստանյայց առաքելական եկեղեցին: Աստվածաբանությունը անհրաժեշտ է քրիստոնեական ծառայության համար աշխարհին, նրա կենսական կարիքների մեջ: Գտնվելով այստեղ, ձեր մեջ, մենք մեզ զգում ենք մի մթնոլորտում, որ հավասարապես առանձնահատուկ է ռուս պրավոսլավ եկեղեցու հոգևոր ճեմարանին, այսինքն՝ եկեղեցականության հնավանդ կառույցին հավատարմության մթնոլորտում, որի մեջ անխուսափելիորեն մուտք է գործում բարենորոգման շունչը: Հասկանալ ավանդությունների և բարեկարգման միջև եղած կապը, աստվածաբանորեն հաստատել մշտականությունն ու անընդհատականությունը այն բանի, ինչ մեզ տրված է եղել սկզբից, փոփոխվող միջավայրի պայմաններում կազմում է մեր ժամանակի աստվածաբանու-

թյան խնդիրը, մի խնդիր, կրկնում եմ, որ չափազանց կարևոր է ինչպես հայ, այնպես էլ ռուս եկեղեցու համար:

Մենք կարծես թվեցինք աստվածաբանական մտածողության երեք երեսները. էկումենիզմ, ծառայություն աշխարհին և ինքնագիտակցություն: Թվարկված այս երեք երեսները պարփակող հարցերի պատասխանը նման է այն հայտնաբերումներին, որոնց մասին պատմվում է Ղուկասի Ավետարանում: Մոլորյալ ոչխարին գտած հովիվը կամ կորած դրամը գտած կինը (Ղուկաս ԺԵ 4—10)՝ ահա ավետարանական կերպարներ մեզ՝ աստվածաբաններիս համար, որ ժամանակի կողմից առաջադրված այժմեական խնդիրներին պատասխաններ ենք փնտրում: Հովիվը, գտնելով ոչխարը, այն վերցնում է իր ուսերին ուրախությամբ, իսկ տունդսրձին կանչում է բարեկամներին ու հարեվաններին և նրանց ասում. «Ուրախացե՛ք ինձ հետ, ես գտա իմ կորուսյալ ոչխարը»: Դրամը գտած կինը կանչում է ընկերուհիներին ու հարևանուհիներին և նույնպես ասում նրանց. «Ուրախացե՛ք ինձ հետ, ես գտա կորած դրամը»: Այսպես էլ՝ աստվածաբանները. եթե նրանք ժամանակի կողմից առաջադրված հարցերին պատասխաններ ստանան, ոչ միայն իրենք կուրախանան, այլ նաև իրենց ուրախությունը կփոխանցեն եկեղեցիներին, որպեսզի այդ ուրախությունը լինի ընդհանուր ամբողջ քրիստոնյա աշխարհում, որպեսզի այն ծառայի նաև մերձավորներին, «մեր հարևաններին», որ քրիստոնեությունից դուրս են: Սա հիրավի ազնիվ խնդիր է:

Մեզ՝ ուղղափառներիս համար էկումենիզմը նախ և առաջ մի կոչում է քրիստոնեական աշխարհում ընդհատված միասնականության վերականգնման և, առաջին հերթին, հին արևելյան (ոչ քաղկեդոնական) եկեղեցիների միասնականության վերականգնման վերաբերյալ: Մենք և դուք ներկայացուցիչներն ենք քրիստոնեական տարբեր ավանդությունների. սրտով զգում և աստվածաբանորեն հասկանում ենք այդ մասնատման և խզման դադարեցման անհրաժեշտությունը: Հավատում ենք, որ Աստուծո օգնականությամբ այդ ակնկալությունները կիրականանան: Բայց դրա համար պետք է դեռ շատ աշխատել, և այդ աշխատանքը պատկանում է ձեզ՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու ներկա և ապագա աստվածաբաններիդ, ինչպես նաև ուրիշ եկեղեցիների աստվածաբաններին: Կարևոր է ոչ միայն հավատի միասնության նվաճումը, այլ նաև ընդհանուր հասկացողության ձեռքբերումը ինքնուրույն, ինքնագլուխ եկեղեցիների գոյության, մեկ, սուրբ, ընդհանրական և առաքելական եկեղեցու մարմնի մեջ: Մենք, մեր կողմից, կարծում ենք, որ յուրաքանչյուր ինքնագլուխ եկեղեցու կանոնական կարգը, պատարագամատույցը, ավանդությունները պետք է պահպանվեն այն վիճակում, ինչ վիճակում որ դրանք կուզենար պահել յուրաքանչյուր ինքնագլուխ եկեղեցի, քանի որ նա անկախ է իր կառավարման և կառուցվածքի մեջ, ինչպես այդ մասին վկայել են եկեղեցու հայրերն ու վարդապետները հնագույն ժամանակներից ի վեր, զոր օրինակ՝ սուրբ Իրենիոս Լիոնցին, և ինչպես այդ տեղի է ունենում ներկայումս արևելյան եկեղեցիների ընտանիքում:

Ռուս պրավոսլավ եկեղեցու անդամների համար աշխարհին ծառայելն արտահայտվում է ժողովուրդների միջև հանուն խաղաղության, Եվրոպայի և ամբողջ աշխարհի անվտանգության, բոլոր հնարավոր բնագավառներում մարդկանց միջև համագործակցության համար պայքարի մեջ: Կարծում ենք, որ Հայաստանյայց առաքելական եկեղեցին էլ, աշխարհի որ ծագում էլ գտնվելիս լինի, լի է նույնպիսի բարի նախաձեռնությամբ խաղաղության և մեր մոլորակի ու նրա վրա բնակվող մարդկության ծաղկման ու բարգա-

վանման համար: Թող Տերը ձեզ օգնական լինի՝ աստվածաբանորեն հաստատելու այս նախանձախնդրությունը, որն իր արմատներով միանում է սիրո հետ, սեր, որ կազմում է կյանքի օրենքը և ավետարանական խոսքի բուն էությունը:

Ի վերջո, քրիստոնեական ինքնագիտակցությունը մեզ հանգեցնում է հայրենասիրությանը, մի կողմից, մեր հասարակական կառուցվածքի հետ համերաշխությանը, մյուս կողմից: Մենք ներկայացուցիչներն ենք մեր ժողովրդի, մենք անդամներն ենք մեր պետության, մենք գիտակից մասնակիցներն ենք հասարակական ստեղծարարության: Եվ մենք քրիստոնյաներ ենք, Հայաստանյայց առաքելական եկեղեցու և ռուս պրավոսլավ եկեղեցու անդամներ: Մեզ համար գոյություն չունի ընտրություն կամ երկընտրանք. մենք միաժամանակ և՛ հայրենասերներ ենք, և՛ մեր հասարակության անդամներ, և՛ քաղաքացիներ, և՛ քրիստոնյաներ:

Թող Աստված ձեզ օգնական լինի, իմ բարեկամներ, ձեր ծառայության մեջ ձեր ժողովրդին և Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների մեր մեծ Միությանը, որն այժմ նշում է իր հիսնամյակը:

Թանկագին բարեկամներ, միատեղ պիտի աշխատենք՝ նմանվելով այն Հովվին, որը չի վախենում թողնել իննսունինը ոչխարը, որպեսզի գտնի մոլորյալ մեկը. կամ այն կնոջը, որը ճրագ է վառում, խնամքով ավլում է իր սենյակը և փնտրում, մինչև որ գտնի կորցրածը: Կյանքի ամբողջականությունը պիտի փնտրենք Քրիստոսի մեջ, իրար հետ հաղորդության և մեր մերձավորների համար ծառայության սիրո մեջ, և այն ժամանակ մեր ուրախությունը կմիախառնվի հրեշտակների ուրախությանը բարձունքներում և կմտնի մեր Տիրոջ ուրախության մեջ, որին և փառք հավիտյանս հավիտենից»:

Հոգևոր ճեմարանի հարկի տակ սույն հատկանշական հանդիպումն ավարտվում է ռուսերեն «Մնոգոյե լետո» («Երկար տարիներ») մաղթերգով և Տերունական աղոթքով:

Այս առթիվ Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը հուշանվերներ բաժանեց հոգևոր ճեմարանի դասախոսներին և սաներին:

Հայրապետական հանդիսավոր ս. պատարագ և քարոզ Մայր տաճարում

Նոյեմբերի 12, կիրակի:

Այսօր Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Հայոց Հայրապետը:

Ուրա՛խ լեր, սուրբ եկեղեցի:

Այսօր տոն է Մայր Աթոռ ս. Էջմիածնի և հավատացյալ հայ ժողովրդի համար:

Առավոտյան ժամը 11-ին **Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը** ամպհովանու տակ, հայրապետական ողջ զգեստավորման մեջ, ընկերակցությամբ Նորին Սրբություն **Տ. Պիմեն** և Նորին ամենապատվություն **տ. Եղիշե Պատրիարքների, տ. Յուվենալի** միտրոպոլիտի, **տ. Պիտիրիմ** արքեպիսկոպոսի, **տ. Սերովբե, տ. Բաբգեն** արքեպիսկոպոսների, **տ. Գնել, տ. Հուսիկ, տ. Շահե, տ. Տիրայր** եպիսկոպոսների, Մայր Աթոռի ողջ միաբանության, քահանայից դասի, հանդիսավոր շքերթով, խնկով ու աղոթքով, երգով ու շարականով, Մայր տաճարի զանգերի զվարթ հնչյունների ներքո առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու հանդիսավոր օրվա քրիստոնեական եղբայրության սուրբ պատարագը:

Վեհարանից Մայր տաճար ձգվող շքերթի երկու կողմերում կանգնած ուխտավորների բազմությունը խանդավառ արտահայտություններով ողջունում է հայ և ռուս եկեղեցու Հովվապետներին և երկու եկեղեցիների բարձրաստիճան իշխանավորներին:

Մայր տաճարը զարդարվել է տոնականորեն ու լեցուն է աղոթասաց հավատացյալների բազմությամբ: Ամենուրեք խունկ, աղոթք և երկյուղածություն:

Ավագ բեմի առաջ, ատյանում, Տ. Պիմեն և տ. Եղիշե Պատրիարքների համար դրված են մասնավոր պատրիարքական աթոռներ:

Սկսվում է հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագը:

Սուրբ Սեղանին սպասավորում են **տ. Բաբգեն** և **տ. Շահե** սրբազաններ, վարդապետների, քահանաների և սարկավագների դասը:

Մայր տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել պաշտոնական անձնավորություններ, որոնց թվում՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Ս. Գասպարյանը,** տեղակալ **Ս. Հովհաննիսյանը,** հայ եկեղեցու գործերի խորհրդի մյուս անդամները, Գերագույն հոգևոր խորհրդի լրիվ կազմը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամները, մտավորականներ և այլ պաշտոնական անձինք:

Ս. Պատարագի եկմալյան երգեցողությունը խոր ապրումով և ներշնչումով կատարում է Մայր տաճարի երգչախումբը՝ խմբավար **Խորեն Մեյխանեջյանի** շնորհալի ղեկավարությամբ:

Սուրբ պատարագը վեհ տպավորությամբ և խորհրդավորությամբ շարունակվում է մինչև «Հայր մեր»:

Այժմ քարոզի պահն է: **Պատարագիչ Հայոց Հայրապետը** «Հաւատամք և ի սուրբ Հոգին, յԱՆեղն և ի Կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի Մարգարէս և յԱւետարանս» բնաբանով ոգեկոչում է հիշատակը Հոգեգալստյան մեծ դեպքի, երբ վերնատան մեջ հավաքված առաքյալները Քրիստոսի համբարձումից հետո «լցան Հոգւովն սրբով» և, միակրոն ու միախոհ՝ Ավետարանի լույսը տարածեցին ողջ աշխարհում՝ հաստատելով քրիստոնեական ընդհանուր եկեղեցին:

Քրիստոնեական եկեղեցին, շեշտում է Հայոց Հայրապետը, դարերի ընթացքում կատարեց աստվածային իր առաքելությունը մարդկության ծոցում մինչև մեր ժամանակները միշտ առաջնորդված սուրբ Հոգու լույսով: Մեր ժամանակաշրջանում, ասում է Վեհափառ Հայրապետը, միջեկեղեցական կյանքը ևս նույն սուրբ Հոգով լուսավորված, հատկանշվում է էկումենիկ շարժման զարգացումով, և այսպիսով եկեղեցին ավելի խոր պատասխանատվության գիտակցությամբ շարունակում է իր առաքելությունը կատարել մարդկային աշխարհի մեջ: Էկումենիկ այդ շարժումը արտահայտվում է մեր օրերին միջեկեղեցական սերտ հարաբերություններով և եկեղեցու պետերի փոխադարձ այցելություններով: Հայոց Հայրապետը գոհունակությամբ է նշում, որ վերջին մեկ ամսվա ընթացքում այդ ոգով Մայր Աթոռ ս. Էջմիածին այցելեցին վրաց քույր եկեղեցու Պատրիարք-կաթողիկոս Նորին Սրբություն Դավիթ Ե-ը և ապա՝ Ալեքսանդրիայի Պապ, ղպտիական եկեղեցու Պետ Նորին Սրբություն Շենուդա Գ. Պատրիարքը:

Իր քարոզի մեջ Հայոց Հայրապետը ահա այս անգամ էլ մասնավոր սիրով և ջերմությամբ ողջունում է ներկայությունը Մայր տաճարում Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Տ. Պիմենի, որ, ի գլուխ ռուս բարձրաստիճան հոգևորականության, անձամբ է բերել ռուս մեծ և փառավոր



ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ Ս. ԳԵՂԱՐԴԻ ՎԱՆՔՈՒՄ

եկեղեցու, նրա հոգևորականության և հավատացյալ ժողովրդի ողջույնը Մայր Աթոռ ս. Էջմիածնին, նրա Գահակալին, հայ եկեղեցու ողջ հոգևորականությանը և հավատացյալ ժողովրդին՝ է՛լ ավելի ամրապնդելու երկու քույր եկեղեցիների համագործակցությունը եկեղեցիների ցանկալի միության, ժողովուրդների եղբայրության և աշխարհի խաղաղության համար, Ավետարանի վեհ պատգամների լույսի ներքո:

Իր քարոզի ավարտին Հայոց Հայրապետը եղբայրորեն հրավիրում է Ավագ սեղան Նորին Սրբություն **Տ. Պիմեն պատրիարքին**՝ Իր օրհնությունը տալու հայ ժողովրդին:

Հուզիչ էր Ավագ ս. սեղանի բեմի վրա երկու Հայրապետների՝ ի Քրիստոս եղբայրության ու սիրո ողջագուրումը: Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը Իր պատասխան ողջույնի խոսքի մեջ ասաց, որ Ինքը մի տարի առաջ աստվածային օրհնությամբ բարձրանալով Համայն Ռուսիո և Մոսկվայի պատրիարքական գահի վրա՝ իր համար հաճելի պարտականություն է համարել այցելել տարբեր երկրներում գտնվող Քրիստոսի եկեղեցիները, եկեղեցիներ, որոնք փրկության գործ են կատարում այս աշխարհի մեջ տարբեր վայրերում:

Նորին Սրբությունը այնուհետև մասնավոր կարևորությամբ շեշտում է, որ Ինքը Ամենայն Հայոց Հայրապետի եղբայրական և սիրալիր հրավերով ու սրտագին ուրախությամբ ժամանել է ս. Էջմիածին Իր հոգեբուխ աղոթքը մատուցելու առ Աստված և առ Հայոց մեծ Լուսավորիչը սուրբ Գրիգոր, որի քարոզությամբ ու ջանքերով Ավետարանի լույսը սփռվեց Հայոց աշխարհի և հոգիների վրա: Այդ լույսը հինգերորդ դարում հայ լեզվով քարոզվեց հայ ժողովրդին Աստվածաշնչի սահակ-մեսրոպյան թարգմանությամբ: Քրիստոնեական հավատի այդ լույսը, նշում է այնուհետև Սրբազան Պատրիարքը, չհանգավ երբեք, հակառակ բազում դարերի հայ առաքելական եկեղեցու նևահատակության, բնավ չպակասեց այն և միշտ ու հանապազ ս. Էջմիածնից բաշխվեց ու բաշխվում է բոլոր հայ հոգիներին, որտեղ էլ որ նրանք գտնվեն:

Իր խոսքի վերջում Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը բարեմաղթում է, որ Աստված ցույց տա հայ առաքելական և ռուս պրավոսլավ եկեղեցիների համագործակցության ճշմարիտ ճանապարհը Աստուծո փառքի և Քրիստոսի եկեղեցու միության ու հավերժության համար:

Հանդիսություն Վեհարանի գահասրահում

Սուրբ պատարագի ավարտից հետո երկու Հայրապետները, Երուսաղեմի հայոց պատրիարքը, հայ և ռուս բարձրաստիճան հոգևորականները և պաշտոնական այլ անձինք առաջնորդվեցին Վեհարանի գահասրահ, ուր տեղի ունեցավ մասնավոր հանդիսություն:

Հայոց Հայրապետը բազմեց Իր գահի վրա, իսկ Նորին Սրբություն **Տ. Պիմեն Պատրիարքը** և նորին ամենապատվություն **տ. Եղիշե սրբազան պատրիարքը**՝ իրենց համար դրված մասնավոր պատրիարքական գահերի վրա:

Գահասրահում ներկա էին երկու քույր եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, ներքին թեմերի թեմական և եկեղեցական խորհուրդների անդամները, մայրավանքի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, մտավորականներ, թղթակիցներ և ժողովրդի մեծ բազմություն;

ՊԱ-15414

Վեհարանի գահասրահում էին նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Ս. Գասպարյանը** և տեղակալ **Ս. Հովհաննիսյանը:**

Այս հանդիսավոր առիթով Հայոց Հայրապետը կրկին անգամ ողջունեց և բարի գալուստ մաղթեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Պիմենին և Նրա շքախմբի անդամներին ջերմ ու բովանդակալից ողերձով: (Տես էջ 3):

Այնուհետև հանդես եկավ Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը Հայոց Հայրապետին ուղղված Իր ջերմ ու ոգեշունչ ճառով. (Տես էջ 7):

Պատմական այս ընդունելության ավարտին երկու Հայրապետները փոխանակեցին հուշանվերներ:

Պաշտոնական ճաշկերույթ Վեհարանում՝ ի պատիվ Մայր Աթոռի հյուրերի

Ժամը 15.30-ին Վեհարանի սեղանատանը, ի պատիվ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք **Նորին Սրբություն Պիմենի,** տրվեց պաշտոնական ճաշկերույթ՝ մասնակցությամբ շուրջ վաթսուն հրավիրյալների:

Որոշյալ ժամին **երկու Հայրապետները, Երուսաղեմի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարքը** և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Ս. Գասպարյանը** մուտք գործեցին սեղանատուն:

Սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը:

Պատվո սեղանի շուրջ իրենց տեղերը գրավեցին **Ամենայն Հայոց Հայրապետը, Տ. Պիմեն Պատրիարքը, տ. Եղիշե պատրիարքը** և **տիար Սարգիս Գասպարյանը:**

Քույր եկեղեցու հոգևոր Պետի պատվին տրված սույն պաշտոնական ճաշկերույթին ներկա էին **միտրոպոլիտ տ. Յուվենալին, տ. Պիտիրիմ արքեպիսկոպոսը, տ. Սերովբե, տ. Բաբգեն, տ. Կոմիտաս արքեպիսկոպոսները, տ. Գնել, տ. Շահե, տ. Հուսիկ, տ. Տիրայր եպիսկոպոսները,** Մայր Աթոռի միաբան վարդապետները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, մայրավանքի ղեկավար պաշտոնեությունը, Արարատյան թեմի թեմական խորհրդի անդամները: Հրավիրյալների թվում էին **պրոֆ. Արարատ Ղարիբյանը, պրոֆ. Վարազդատ Հարությունյանը,** ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի փոխ-տնօրեն **Բաբգեն Զուգասզյանը** և նկարիչ **Գրիգոր Խանջյանը:**

Ընդունելությանը ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ **Ս. Հովհաննիսյանը,** խորհրդի անդամներ **Մանվել Բաբլոյանը** և **Գրիգոր Բալասանյանը:**

Սեղանների շուրջ ստեղծվեց եղբայրական սրտագին ու հայրենասիրական մթնոլորտ: Փոխանակվեցին ողջույնի և բարիգալստյան ջերմ ճառեր:

Առաջին բաժակը առաջարկեց Հայոց Հայրապետը, օրվա մեծ հյուրի՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Տ. Պիմենի կենացը՝ բարեմաղթելով ռուս պրավոսլավ մեծ եկեղեցուն անսասանություն, պայծառություն Նորին Սրբության գահակալության տարիներին, ռուս բարի ու հավատացյալ ժողովրդին ու հայրենիքին՝ բարօրություն: Հայոց Հայրապետը Իր ելույթի մեջ մի անգամ ևս վեր հանելով պատմական նշանակությունը երկու եկեղեցիների և ժողովուրդների դարավոր բարեկամության՝ շեշ-

տեց ռուս հոգևոր մշակույթի համաշխարհային արժեքը և կրկին բաժակ առաջարկեց ռուս եկեղեցու բարձրաստիճան պատվիրակության կենացը, պատվիրակություն, որը ժամանել էր Մայր Աթոռ ի դեմս միտրոպոլիտ տ. Յուվենալիի, տ. Պիտիրիմ արքեպիսկոպոսի և շքախմբի մյուս անդամների:

Երկրորդ բաժակը առաջարկեց խմել Տ. Պիմեն Պատրիարքը՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնի պայծառության և Հայոց Հայրապետի կենացը՝ շեշտելով, որ Իր այս այցելությունը ս. Էջմիածին և արևային Հայաստան ողողված է քրիստոնեական եղբայրության սիրո արևով:

Նորին Սրբությունը Իր բաժակաճառի մեջ խոսեց այն մասին, որ հայ և ռուս եկեղեցիների ու ժողովուրդների բարեկամությունն սկսվել է քրիստոնեական սիրով, բայց այդ սերը վերածվել է խոր վստահության ու հավատքի դեպի քրիստոնյա Հայոց աշխարհը, հայոց պատմական ու փառավոր եկեղեցին և նրա հոգևոր մշակույթը: Իր խոսքի վերջում Պիմեն Պատրիարքը բաժակ առաջարկեց երկու եկեղեցիների և ժողովուրդների միջև գոյություն ունեցող քրիստոնեական այդ սիրո կենացը, որպեսզի այդ սիրով խորանա և ամրապնդվի քրիստոնեական հավատքը, մանավանդ մեր օրերին՝ Քրիստոսի եկեղեցու փառքի համար:

Վեհափառ Հայրապետը երրորդ բաժակը առաջարկեց խմել ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող ամենապատիվ տ. Եղիշե պատրիարքի և, ի դեմս նրա, սեղանին մասնակից հայ եկեղեցու բարձրաստիճան իշխանավորների, այդ թվում՝ տ. Սերովբե, տ. Բարգեն, տ. Գնել, տ. Շահե, տ. Տիրայր սրբազանների կենացը:

Շնորհակալության խոսքով հանդես եկավ տ. Եղիշե սրբազան պատրիարքը՝ նշելով, որ ամեն անգամ Հայաստան գալիս ինքը և սրբազան իր եղբայրները ուժ և ներշնչում են ստանում հայրենի սրբազան հողից և վերասրբվում ս. Էջմիածնի օրհնությամբ: Պատրիարք սրբազանը ընդգծեց, որ Երուսաղեմի պատրիարքական Աթոռը, որպես մեր եկեղեցու նվիրապետական կառույցի մեկ մասը, իր ոգեկան հարաբերությամբ և հավատարմությամբ միշտ Մայր Աթոռի հետ է եղել և կլինի, և այդ կապը տարբեր էլ չի կարող լինել բոլոր հանգամանքներում և պայմաններում:

Այնուհետև տ. Եղիշե պատրիարքը մասնավոր սիրով ու հանույքով հիշեց անցյալ մայիսին Երուսաղեմի հայոց պատրիարքարանում իր հանդիպումը Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի հետ, որ ուխտի էր գնացել տերունական սրբավայրերը և այցելել նաև սրբոց Հակոբյանց պատմական վանք: «Մեր այս երկրորդ հանդիպումը այստեղ՝ ս. Էջմիածնում,—ասաց Երուսաղեմի հայոց պատրիարք սրբազանը,—մեզ համար է՛լ ավելի սիրելի դարձրեց Նորին Սրբության բարձր անձնավորությունը, որպես ռուս մեծ եկեղեցու Պատրիարքի»:

«Հայ և ռուս եկեղեցիների պատմությունը,—շեշտեց տ. Եղիշե պատրիարքը,—երբեք չի մթագնել կրոնական անհանդուրժողությամբ և դավանական վեճերով: Մենք միմյանց վերքեր չենք հասցրել, որ այսօր փորձենք քողարկել դրանք: Հայ եկեղեցին միշտ սեր, միշտ հարգանք և միշտ երախտագիտություն է ունեցել դեպի ռուս մեծ եկեղեցին և նրա հոգևոր մշակույթը: Թող Նորին Սրբություն Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքի դեմքի վրա միշտ բարի ժպիտ և միշտ սեր տեսնենք, որպես արտահայտությունը երկու եկեղեցիների և ժողովուրդների եղբայրության և բարեկամության»:

Վեհափառ Հայրապետը չորրորդ բաժակն առաջարկեց խմել ընդունելությանը ներկա պրն. **Սարգիս Գասպարյանի,** եկեղեցական խորհրդի մյուս

անդամների և, ի դեմս նրանց, մեր հայրենի բարեխնամ կառավարության կենացը:

Այս առթիվ Հայոց Հայրապետը երախտագիտության և շնորհակալության սրտագին խոսք ասաց հայրենի կառավարության ներկայացուցիչ, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանին, որ, հանուն հայրենի կառավարության, միշտ իր բարոյական և գործնական օժանդակությունը բերել է Հայոց Հայրապետին՝ Նրա գահակալության 17 տարիների ընթացքում Մայր Աթոռում կատարվող հոգևոր, մշակութային և շինարարական-վերանորոգչական աշխատանքներում ու հայ եկեղեցու հետ կապված բոլոր հարցերում:

Հայոց Հայրապետը մասնավոր շնորհակալությամբ և երախտագիտական զգացմունքներով շեշտեց սույն պաշտոնական ճաշկերույթին, ինչպես նաև առավոտյան Մայր տաճարում ս. պատարագին, ներկայությունը հայրենի կառավարության ներկայացուցիչների, որոնք եկել էին մեծարելու և պատվելու Հայոց Հայրապետի և Մայր Աթոռի թանկագին հյուրին՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Պիմենին և Նրա շքախմբի բարձրաստիճան անդամներին:

Իր խոսքի վերջում Հայոց Հայրապետը բաժակ բարձրացրեց մեր բարեխնամ կառավարության հայրենանվեր ու խաղաղասիրական ձեռնարկումների հաջողության, վերածնված Հայոց աշխարհի բարգավաճման, հայրենաբնակ և դեռևս սփյուռքում ապրող հայ ժողովրդի բարօրության և միասնականության կենացը:

Մոսկվայի և Համայն Ռուսիո Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի պատվին տրված սույն պաշտոնական ճաշկերույթն ավարտվեց Վեհափառ Հայրապետի գոհաբանական աղոթքով:

Այց Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ մեծահարգ Բադալ Մուրադյանին

Նոյեմբերի 13-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, **երկու Հայրապետները,** Երուսաղեմի հայոց **սրբազան պատրիարքը,** իրենց շքախմբերով, այցելեցին Երևանում «Էրեբունի» թանգարան և ապա պատմական բերդի ավերակներ, ուր նրանց տրվեցին մանրամասն տեղեկություններ ուրարտական մշակույթի և հայ ժողովրդի հնագույն շրջանի պատմության վերաբերյալ:

Ժամը 12-ին երկու Հայրապետները, տ. Եղիշե սրբազան պատրիարքը, իրենց շքախմբերով, պաշտոնական այցելություն տվեցին Երևանում, Կառավարական տանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ մեծահարգ **Բադալ Մուրադյանին:**

Հայոց Հայրապետը ջերմ սիրով Մինիստրների սովետի մեծահարգ պարոն նախագահին ներկայացրեց իր թանկագին հյուրերին՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Պիմենին, տ. Յուվենալի միտրոպոլիտին, տ. Պիտիրիմ արքեպիսկոպոսին, Երուսաղեմի հայոց պատրիարքին և հայ եկեղեցու բարձրաստիճան մյուս հոգևորականներին:

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի մեծահարգ պարոն նախագահը, հանուն հայրենի կառավարության, ջերմորեն ողջունեց և բարի գալուստ մաղթեց Տ. Պիմեն Պատրիարքին, Նրա շքախմբի անդամներին, Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքին և հայ եկեղեցու բարձրաստիճան մյուս հոգևորականներին:



ԱՂՈԹՔ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ. ԵՐԵՎԱՆ

Ընդունելության ժամանակ ողջույնի և բարիգալստյան ճառեր փոխանակեցին **Հայոց Հայրապետը, Տ. Պիմեն Պատրիարքը, տ. Եղիշե պատրիարքը** և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ **Բադալ Մուրադյանը:**

Ընդունելությունն անցավ հայրենասիրական ջերմ ու խանդավառ մթնոլորտում:

Սույն ընդունելությանը և զրույցին ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Ս. Գասպարյանը** և տեղակալ **Ս. Հովհաննիսյանը:**

Աղոթք Ծիծեռնակաբերդում՝ հայ նահատակաց հիշատակին

Նույն օրը, ժամը 13-ին, երկու Հայրապետները, տ. Եղիշե սրբազան պատրիարքը, իրենց շքախմբերով, այցելեցին Երևանում Ծիծեռնակաբերդի հայ նահատակաց հուշարձան:

Հանուն ռուսաց Պատրիարքի և ռուս պրավոսլավ եկեղեցու թարմ վարդեր և մեխակներ դրվեցին հայ նահատակաց հուշարձանին:

Այնուհետև տեղի ունեցավ հոգեհանգստյան մասնավոր կարգ և աղոթք՝ նվիրված 1915 թվի առաջին աշխարհամարտին զոհված հայ նահատակների խնկելի հիշատակին:

Քույր եկեղեցու պատվիրակությունը, Տ. Պիմեն Պատրիարքի գլխավորությամբ, իր աղոթքը միացրեց հայ եկեղեցու հոգևորականության աղոթքին՝ ոգեկոչելով հիշատակը եղեռնի հայ նահատակների, որոնք իրենց կյանքը զոհաբերեցին հանուն քրիստոնեական իրենց հավատքի և վասն հայրենյաց:

Կառավարական ճաշկերույթ՝ ի պատիվ Մայր Աթոռի հյուրերի

Նույն օրը, ժամը 14.30-ին, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհուրդը, ի պատիվ Մայր Աթոռի բարձրաստիճան հյուրերի, «Արմենիա» հյուրանոցում տվեց պաշտոնական ճաշկերույթ:

Ընդունելությանը ներկա էին **Հայոց Հայրապետը, Տ. Պիմեն, տ. Եղիշե սրբազան Պատրիարքները,** ռուս և հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները, ինչպես նաև պաշտոնական այլ հրավիրյալներ՝ շուրջ 30 հոգի:

Հարգարժան հյուրերին ջերմորեն ընդունեց և բարի գալուստ մաղթեց Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Ս. Գասպարյանը,** որը և ղեկավարեց կառավարական սույն ճաշկերույթը:

Ընդունելության ժամանակ կրկին անգամ ողջույնի, բարիգալստյան և ողջերթի ջերմ ու սրտառուչ ճառեր արտասանեցին **Ս. Գասպարյանը, Հայոց Հայրապետը, Տ. Պիմեն և տ. Եղիշե սրբազան Պատրիարքները:**

Կառավարական այս ընդունելությունը անցավ խանդավառ ու ջերմ մթնոլորտում, որպես սրտառուչ արտահայտություն հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության նաև մեր օրերում՝ Սովետական բազմազգ մեծ Միության եղբայրական ընտանիքում:

Էկումենիկ աղոթք և հոգևոր համերգ Մայր տաճարում

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, երկու Հայրապետները Իրենց շքախմբերով ներկա եղան Մայր տաճարում երեկոյան ժամերգությանը և միասին աղոթեցին եկեղեցիների միջև քրիստոնեական սիրո և եղբայրության ամրապնդման, աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարեկամության համար:

Ժամերգության ավարտին Մայր տաճարում տեղի ունեցավ հոգևոր համերգ՝ ի պատիվ Մոսկվայի և Համայն Ռուսիո Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի:

Հոգևոր համերգի ծրագրում կային հատվածներ հայկական, ռուսական և արևմտաեվրոպական դասական հոգևոր երաժշտությունից:

Մայր տաճարի երգչախումբը, խմբավար Խորեն Մեյխանեջյանի ղեկավարությամբ, խոր ապրումով և արվեստի նուրբ զգացողությամբ կատարեց Կոմիտաս Վարդապետի «Խորհուրդ խորին»-ը, «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»-ը, «Հայրապետական մաղթերգ»-ը, Մակար Եկմալյանի «Քրիստոս պատարագեալ»-ը և «Հայր մեր»-ը, Օհան Դուրյանի «Քրիստոս յարեաւ»-ը, Պ. Ի. Չայկովսկու «Գոսպոդի պոմիլույ»-ը, Կաստալսկու «Մնոգոլետիե»-ն, Ա. Շարպանտիեի «Լաուդատե Դոմինում»-ը և Դմ. Բորտնյանսկու 6-րդ կոնցերտը:

Հոգևոր համերգի ընթացքում Մայր տաճարի երգչախմբի մենակատարները հանդես եկան առանձին մեներգների կատարմամբ: Լուսինե Զաքարյանը կատարեց Նարեկացու «Յարութեան տաղ»-ը, Մարիա Պոզապալյանը՝ «Ես ձայն զառիւծուն ասեմ» միջնադարյան մեղեդին, իսկ Արաքսյա Մանսուրյանը՝ Մոիսեևի «Խվալիտե իմեյա Գոսպոդնե»-ն:

Հոգևոր երաժշտության սույն համերգի ներշնչող մթնոլորտում մի անգամ ևս վերացան ներկաների հոգիները դեպի քրիստոնեական եղբայրության վեհ բարձունքները, «Յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն» ավետարանական աստվածատուր պատգամի խորհրդի տակ:

Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը հրաժեշտ է առնում Մայր Աթոռից

Նոյեմբերի 14, երեքշաբթի:

Այսօր ավարտվեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Տ. Պիմենի և Նրա շքախմբի այցելությունը Մայր Աթոռ:

Առավոտյան ժամը 10-ին երկու Հայրապետները Վեհարանի ընդունարանում, Իրենց շքախմբի անդամներով, ունեցան վերջին հանդիպումը, ուր քննության առնվեցին հայ և ռուս եկեղեցիների հետագա համագործակցության հետ կապված կարևոր հարցեր էկումենիկ մակարդակի վրա:

Ժամը 12-ին Հայոց Հայրապետը և Տ. Պիմեն Պատրիարքը, Իրենց շքախմբերով, ավտոմեքենաների շարասյունով մեկնեցին Երևանի օդանավակայան, ուր թանկագին հյուրերին ճանապարհելու համար եկել էր նաև տ. Եղիշե սրբազան պատրիարքը:

Հուզիչ էր հրաժեշտի պահը: Մի անգամ ևս երկու Հովվապետները, տ. Եղիշե պատրիարքը, շքախմբի բոլոր անդամները ջերմորեն ողջագուրվեցին քրիստոնեական եղբայրության համբույրով:

Մոսկվայի և Համայն Ռուսիոց Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքին, տ. Յուվենալի միտրոպոլիտին, տ. Պիտիրիմ արքեպիսկոպոսին և ռուս պրավոսլավ եկեղեցու պատվիրակության մյուս անդամներին օդանավակայանում բարի ճանապարհ մաղթեցին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Ռուս պրավոսլավ եկեղեցու գահակալ Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի և Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի հանդիպումը Մայր Աթոռում սույն թվականի նոյեմբերի 10—14 օրերին հանդիսացավ երկու պատմական եկեղեցիների միջև գոյություն ունեցող հոգևոր. դարավոր կապերի վառ արտահայտություն՝ էկումենիկ շարժման այս ժամանակաշրջանում միջեկեղեցական հարաբերությունների մակարդակի վրա:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա-ի եղբայրական հրավերով, այս թվականի նոյեմբերի 10-ին Մայր Աթոռ ժամանեց ռուսաց պրավոսլավ եկեղեցու հովվապետ, Մոսկվայի և Համայն Ռուսիո նորընտիր Պատրիարք Նորին Սրբություն Պիմենը:

Սրբազան Պատրիարքին ուղեկցում էին Մոսկվայի պատրիարքարանի արտաքին եկեղեցական հարաբերությունների բաժնի նախագահ, Տուլայի և Ռելեևի միտրոպոլիտ տ. Յուվենալին, Վոլոկոլամսկու արքեպիսկոպոս տ. Պիտիրիմը և շքախմբի չորս այլ անդամներ:

Նոյեմբերի 10-ին, ժամը 14-ին, Երևանի օդանավակայանում բարձրաստիճան հյուրերին ողջունեցին Ամենայն Հայոց Հայրապետը, Մայր Աթոռում հյուրաբար գտնվող Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ տ. Եղիշե արքեպիսկոպոսը, Մայր Աթոռի միաբան եպիսկոպոսները, վարդապետները և պաշտոնեությունը:

Համայն Ռուսիո Պատրիարքին օդանավակայանում դիմավորեցին Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ մեծահարգ տիար Ս. Գասպարյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Երկու Հայրապետները, շրջապատված իրենց հետևորդներով, հանդիսավոր շքերթով ժամանեցին Մայր Աթոռ, ուր Իջման սուրբ սեղանի առաջ փոխանակեցին ողջույնի ջերմ խոսքեր:

Նոյեմբերի 11-ին երկու Հայրապետները Մայր տաճարում ներկա եղան երեկոյան ժամերգությանը, ապա՝ հոգևոր ճեմարանում իրենց պատվին կազմակերպված հանդեսին:

Նոյեմբերի 12-ին, կիրակի օրը, Հայոց Հայրապետը Մայր տաճարում մատուցեց ս. պատարագ, որի ընթացքում երկու Հայրապետները հանդես եկան եղբայրական սիրո փոխադարձ բարեմաղթություններով:

Ս. Պատարագից հետո Վեհարանի գահասրահում տեղի ունեցավ հանդիսավոր ընդունելություն՝ ի պատիվ ռուս բարձրաստիճան հյուրերի: Ջերմ ուղերձով հանդես եկավ Հայոց Հայրապետը, որից հետո պատասխան ճառով Իր խոսքն ասաց ռուսաց եկեղեցու Հովվապետը:

Հետևյալ օրը, նոյեմբերի 13-ին, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ մեծարգո տիար Բ. Մուրադյանն ընդունեց Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքին, Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետին, Երուսաղեմի

հայոց պատրիարք տ. Եղիշե արքեպիսկոպոսին, ինչպես նաև արտասահմանից Մայր Աթոռ ժամանած հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներին:

Ժամը 14.30-ին «Արմենիա» հյուրանոցում, ի պատիվ հյուրերի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ հայ եկեղեցու գործերի խորհրդի կողմից:

Երեկոյան երկու Հովվապետները Մայր տաճարում ներկա եղան երեկոյան պաշտամունքին և միասին աղոթեցին քրիստոնեական սիրո ու եղբայրության ամրապնդման և աշխարհի խաղաղության համար:

Եկեղեցական արարողությունից հետո տեղի ունեցավ հոգևոր երաժշտության համերգ Մայր տաճարի երգչախմբի կատարմամբ:

Մայր Աթոռում գտնվելու օրերին մեծահարգ հյուրերը, Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ, այցելեցին Մայր տաճարի և Հին Վեհարանի թանգարանները, Երևանի Մատենադարան, ս. Գեղարդ վանք, «Էրեբունի» թանգարան և Մեծ եղեռնի հուշարձան, ուր միասին աղոթեցին և զետեղեցին ծաղկեպսակներ:

Նոյեմբերի 14-ին, երեքշաբթի օրը, ռուսաց պրավոսլավ եկեղեցու Հայրապետը և շքախմբի անդամները հրաժեշտ առան Հայոց Հայրապետից:

Օդանավակայանում հարգարժան հյուրերին ճանապարհեցին Վեհափառ Հայրապետը, Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ տ. Եղիշե արքեպիսկոպոսը, Մայր Աթոռի միաբանությունը և պաշտոնեությունը:

Օդանավակայանում բարձրաստիճան հյուրերին բարի ճանապարհ մաղթեց նաև մեծարգո տիար Ս. Գասպարյանը:

Ռուսաց եկեղեցու գահակալ Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի և Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի հանդիպումը Մայր Աթոռում հանդիսացավ երկու պատմական եկեղեցիների սերտ կապերի վառ արտահայտություններից մեկը՝ էկումենիկ համագործակցության ոգով:

Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը Հայոց Հայրապետին սիրով հրավիրեց Մոսկվա իբրև Իր հյուրը: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդունեց այդ հրավերը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

15-ը նոյեմբերի 1972 թ.,
Ս. Էջմիածին



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետի հրավերով եպիսկոպոսաց ժողովի բարեկարգությանց հանձնախումբը, նախագահությամբ Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ տ. Եղիշե արքեպիսկոպոսի, իր երկրորդ նստաշրջանը գումարեց Մայր Աթոռ ս. Էջմիածնում սույն թվականի նոյեմբերի 6—9 օրերին:

Հանձնախմբի աշխատանքներին մասնակցեցին՝

Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը՝ հայրապետական պատվիրակ Արևմտյան Եվրոպայի.

Տ. Բաբգեն արքեպիսկոպոս Ապատյանը՝ հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի.

Տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը՝ առաջնորդական փոխանորդ Արարատյան թեմի.

Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանը՝ առաջնորդ Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի.

Տ. Գնել եպիսկոպոս Ճերեճյանը՝ Բեյրութից.

Տ. Շահե եպիսկոպոս Անեմյանը՝ դիվանապետ Երուսաղեմի հայոց պատրիարքության:

Առաջին նիստը բացվեց նոյեմբերի 6-ին, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետի աղոթքով և ողջույնի խոսքով:

Հանձնախումբը գումարեց 4 նիստ, որոնց ընթացքում վերանայեց անցյալ տարի իր պատրաստած ծիսական բարեկարգությանց նախագիծը, վերջին մեկ տարվա ընթացքում ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա: Հանձնախումբը պարտավորություն ստանձնեց ընդունելի նկատված բոլոր թելադրությունները մուծել նախագծի մեջ և մոտ ապագայում Նորին Սրբությանը ներկայացնել իր վերջնական ձևի մեջ:

Նոյեմբերի 14-ին, ժամը 13-ին, հանձնախումբը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, իր փակման նիստը գումարեց և զեկուցեց իր կատարած աշխատանքի մասին:

Նորին Սրբությունը Իր բարձր գնահատանքի խոսքն ուղղելով հանձնախմբին՝ հույս հայտնեց, որ սկսված գործը իր ցանկալի ավարտին կհասնի շուտով ի պայծառություն Հայաստանյայց եկեղեցու:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

18-ը նոյեմբերի 1972 թ.,
Ս. Էջմիածին

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 4-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 20-ին, **Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի** հրավերով Մայր Աթոռ ս. Էջմիածին է ժամանում Երուսաղեմի հայոց ամենապատիվ **տ. Եղիշե սրբազան պատրիարքը:**

Նորին ամենապատվությանը ուղեկցում էր Երուսաղեմի հայոց Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի տեսուչ ու պատրիարքարանի դիվանապետ **տ. Շահե եպս. Ահեմյանը:**

Երևանի օդանավակայանում նորին ամենապատվությանը, հանուն Հայոց Հայրապետի, ողջունում և բարի գալուստ է մաղթում Մայր տաճարի լուսարարապետ **տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝** ընկերակցությամբ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ **տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանի, տ. Մուշեղ, տ. Աղան** վարդապետների և **տ. Մասիս** աբեղայի:

Նորին ամենապատվությունը «Հրաշափառ»-ով ու եկեղեցական թափորով մուտք է գործում Մայր տաճար, ուր իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո առաջնորդվում է Վեհարան, ուր Հայոց Հայրապետի հետ ունենում է ողջագուրում ջերմ մթնոլորտում:

Վեհափառ Հայրապետի հրավերով նոյեմբերի 6—9 օրերին Մայր Աթոռում գումարվում է եպիսկոպոսաց ժողովի «Բարեկարգությանց հանձնախումբը»՝ ամենապատիվ **տ. Եղիշե սրբազան պատրիարքի** նախագահությամբ:

Այս առիթով հանձնաժողովի նիստերին մասնակցելու համար Մայր Աթոռ էին ժամանել հանձնախմբի անդամները, որոնց թվում՝

Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը՝ Փարիզից, **տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը՝** Բուենոս-Այրեսից, **տ. Տիրայր եպս. Մարտիկյանը՝** Բուխարեստից, **տ. Գնել եպս. Ճերեճյանը՝** Բեյրութից, **տ. Շահե եպս. Ահեմյանը՝** Երուսաղեմից:

Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում էր նաև **տ. Կոմիտաս սրբեպ. Տեր-Ստեփանյանը՝** Երևանից:

Ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը Մայր Աթոռում գտնված օրերին մասնակցում է նաև Մոսկվայի և Համայն Ռուսիայի Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի՝ նոյեմբերի 10—14 օրերին Մայր Աթոռ ս. Էջ-

միածին այցելության առիթով Մայր տաճարում կատարված սրբազան արարողություններին և այլ առիթներով կազմակերպված պաշտոնական ընդունելությանց, ուր հանդես է գալիս սրտագին, հայրենասիրական ելույթներով և Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքին ուղղած ողջույնի և բարիգալստյան ջերմ խոսքերով:

Նոյեմբերի 17-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 19-ին, **Վեհափառ Հայրապետը և տ. Եղիշե սրբազան պատրիարքը** այցելում են հոգևոր ճեմարան, ուր հանդիսությանց սրահում նորին ամենապատվությունը հանդիպում է ունենում դասախոսական կազմի և ուսանողության հետ:

Ի պատիվ Հայոց Հայրապետի և սրբազան պատրիարք հոր, գործադրության է դրվում գեղարվեստական մի կոկիկ ծրագիր ուսանողության ուժերով՝ շարականներից, երգերից, խմբերգերից, արտասանություններից բաղկացած:

Հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարուքյանը, ի դիմաց դասախոսական կազմի և ուսանողության, ողջունում է Հայոց Հայրապետի և սրբազան պատրիարքի ներկայությունը:

Հանդիպման ավարտին տեսչի հրավերով ուսանողությանն ուղղյալ օրհնության սրտագին խոսք է ասում տ. Եղիշե սրբազան պատրիարքը:

Սույն հանդիպումը հոգևոր ճեմարանի հարկի տակ ավարտվում է Տերունական աղոթքով:

Նոյեմբերի 24-ին, ուրբաթ օրը, ժամը 15-ին, Վեհարանի սեղանատանը, ի պատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի, տ. Գնել, տ. Տիրայր և տ. Շահե եպիսկոպոսների, տրվում է ողջերթի ճաշկերույթ, որին մասնակցում են նաև տ. Կոմիտաս, տ. Հուսիկ սրբազանները, տ. Արսեն և տ. Արիս ծ. վարդապետները, Հ. Առաքելյանը, Ա. Հատիտյանը և Պ. Շահբազյանը:

Ճաշկերույթի ժամանակ Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս Իր բարձր գնահատանքի խոսքն է ուղղում «Բարեկարգությանց հանձնախմբին», որը, ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի նախագահությամբ գումարվելով Մայր Աթոռում նոյեմբերի 6—9 օրերին, կատարել է շատ գովելի և օգտակար աշխատանք, վերանայելով անցյալ տարի Երուսաղեմում պատրաստած ծիսական բարեկարգությանց իր ծրագիրը՝ վերջին մեկ տարվա ընթացքում եպիսկոպոսներից ստացված առաջարկությունների ու թելադրությունների հիման վրա, և պարտավորություն է ստանձնել ընդունելի համարված բոլոր առաջարկները մուծել նախագծի մեջ և մոտ ապագայում, այն ներկայացնել Հայոց Հայրապետին, իր վերջնական ձևի մեջ:

Իր խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ և լավատեսությամբ հույս է հայտնում, որ եկեղեցական բարեկարգությանց սկսված գործը շուտով իր ցանկալի ավարտին կհասնի՝ ի պայծառություն Հայաստանյայց սուրբ եկեղեցու:

Ապա Նորին Սրբությունը ջերմ ու խանդավառ սիրով բաժակ է բարձրացնում ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի, տ. Գնել, տ. Տիրայր և տ. Շահե սրբազանների և հանձնախմբի մյուս անդամների կենաց՝ մաղթելով բոլորին բարի ճանապարհ և հաջողություն՝ նրանց հետագա եկեղեցանվեր ու հայրենասիրական գործունեության ճանապարհի վրա:

Հանուն Մայր Աթոռի միաբանության, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի և «Էջմիածին» ամսագրի խմբագրության, ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքին, տ. Գնել, տ. Տիրայր և տ. Շահե սրբազաններին ուղղված ողջերթի սրտագին խոսք է ասում նաև Ա. Հատիտյանը:

Իր պատասխան խոսքում տ. Եղիշե սրբազան պատրիարքը, հանուն

«Բարեկարգությանց հանձնախմբի» և իր անունից, շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում Վեհափառ Հայրապետին, Մայր Աթոռում հանձնախմբին և անձամբ իրեն ցույց տրված ջերմ հոգածության ու ուշադրության համար և վստահեցնում Նորին Ս. Օծությանը, որ ինքը և հայ եկեղեցու եպիսկոպոսաց ողջ դասը այսուհետև ևս միշտ պատրաստ են իրենց աշխատանքի բաժինը բերելու անսակարկ նվիրումով Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Հայաստանյայց սուրբ եկեղեցու պայծառության գործին, Հայոց Հայրապետի տյառնական հրամանի և օրհնության ներքո:

Վեհափառ Հայրապետին ուղղյալ որդիական երախտագիտության և շնորհակալության ջերմ խոսք է ասում նաև տ. Գնել եպս. Ծերեճյանը:

Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքի պատվին տրված ողջերթի ճաշկերույթն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և Տերունական աղոթքով:

Նոյեմբերի 25-ին, շաբաթ օրը, տ. Եղիշե սրբազան պատրիարքը հրաժեշտ է առնում Հայոց Հայրապետից և Մայր Աթոռից ու, տ. Շահե եպս. Ադեմյանի ուղեկցությամբ, մեկնում ս. Երուսաղեմ՝ իր Աթոռը:

Երևանի օդանավակայանում նորին ամենապատվությանը ճանապարհում են, հանուն Հայոց Հայրապետի, տ. Հուսիկ եպիսկոպոսը, տ. Մուշեղ և տ. Աղան վարդապետները:

Օդանավակայանում նորին ամենապատվությանը բարի ճանապարհ մաղթեց նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը:



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետության Մայր Աթոռս ցավով տեղյակ դարձավ Անթիլիասում 23—26 հոկտեմբեր 1972-ին գումարված կիլիկյան Աթոռի ազգային ընդհանուր ժողովի՝ մամուլում հրատարակված փաստաթղթերին:

Ի ս. Էջմիածին անցյալ տարի նոյեմբերին այցելությունից հետո Անթիլիասի պատվիրակության, որ իր հետ տարավ Մայր Աթոռիս կանոնական ու հաշտարար հինգ կետերից բաղկացած առաջադրանքները, սպասելի էր, որ կիլիկյան Աթոռի ընդհանուր ժողովը բարի կամեցողությունը ցույց տար՝ գեթ մեղմելու արտասահմանի մեր եկեղեցու ծոցում ստեղծված տագնապը, սրբագրումով ծանոթ օրինազանցությանց:

Այժմ մեզ մնում է հուսախաբություն և վիշտ հայտնել, որ հիշյալ ժողովը, ընդհակառակը, ձգտել է առավել խորացնել 1956 թվականից իր որդեգրած քաղաքականությունը, այն է՝ բաժանել ավյուռքի թեմերն ու հավատացյալ ժողովուրդը սուրբ Էջմիածնից և ենթարկել նրանց իր իշխանության:

Այս կացության առաջ Մայր Աթոռս պարտք է համարում հրավեր կարդալ հայ հոգևորականության ու հավատացյալ ժողովրդին, որ վճռական վերաբերմունքով Անթիլիասին ցույց տան մեր եկեղեցու միության և մեր ժողովրդի միասնության ուղին սուրբ Էջմիածնի օրհնության ներքո:

Որպեսզի մեր եկեղեցին ու համայն մեր ժողովուրդը հստակորեն տեղյակ դառնան Մայր Աթոռիս օրինական կեցվածքին և արդար սպասումներին, հրապարակում ենք Ամենայն Հայոց Հայրապետի 9 հոկտեմբեր 1972 թվակիր նամակը՝ ուղղյալ Անթիլիասի Գահակալին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

4-ը դեկտեմբերի 1972 թ.,
Ս. Էջմիածին

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ԿԻԼԻԿԻՅԱՆ ԱԹՈՌԻ ԳԱՀԱԿԱԼ Տ. ԽՈՐԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Անթիլիաս

Զերդ Սրբություն,

Այսու Մեր գրով կհաստատենք Զեր 4 սեպտեմբեր 1972 թվակիր նամակը ի պատասխան Մեր 14 փետրվար 1972 թվակիր նամակի: Այս նամակով, Դուք կկրկնեք Զեր 7 դեկտեմբեր 1971 թվակիր հրավերը, Անթիլիասի մեջ նոր հանդիպում մը գումարելու, Մայր Աթոռիս և Զեր ներկայացուցիչներու միջև:

Ինչպես հստակ կերպով արտահայտված էինք Զեզի, Մեր վերոհիշյալ 14 փետրվարի նամակով, Մայր Աթոռս անհրաժեշտ կգտնե որ Զերդ Սրբությունը պաշտոնապես իր վերաբերումը ճշտե այն հինգ սկզբունքներուն նկատմամբ զոր ներկայացուցած ենք Զեզի անցյալ տարի նոյեմբերին, Զեր պատվիրակության միջոցավ: Այդ հինգ սկզբունքները Զեր կողմե ևս ընդունելի և իրագործելի հայտարարվելով միայն, կրնա գետին մը ստեղծվիլ նոր հանդիպումներու, այդ սկզբունքները կյանքի կոչելու նպատակավ:

Ի նկատի ունենալով վերջին ավելի քան տասնևհինգ տարիներու, և հատկապես Երուսաղեմի մեր ողջագուրման փորձառությունը, Մենք վերջնականապես եկած ենք այն եզրակացության, որ Զեր Աթոռը, գործնական ապացույցը պետք է տա՝ թե պատրաստ է ընդունելու մեր եկեղեցվո պատմականորեն նվիրագործված ավանդական կարգն ու կանոնը, որոնք կարտահայտվին Մեր կողմե Զեզի ներկայացված սկզբունքներուն մեջ: Այլապես իմաստ չեն կրնար ունենալ նոր հանդիպումներ, նոր բանակցություններ, և ընդհակառակը՝ կրնան նոր բարդություններ ստեղծել: Մայր Աթոռիս առաջադրած հինգ սկզբունքները քննարկման կամ սակարկության առարկա չեն և չեն

կրնար ըլլալ երբեք: Մենք այս ճշմարտությունը ջանացած ենք հայտնի դարձնել՝ Ձեզի ուղղյալ բազմաթիվ Մեր նամակներով և կոչերով, մանավանդ 1963-են ի վեր, սակայն դժբախտաբար Ձեր Աթոռի մտայնության ու գործելակերպին մեջ դրական փոփոխություն մը չենք տեսած: Եվ վշտով նկատեցինք թե նույնիսկ վերոհիշյալ 4 սեպտեմբեր թվակիր Ձեր վերջին նամակին մեջ, նույն մտայնությամբ կարտահայտվիք՝ «զույգ կաթողիկոսներու» մասին խոսելով, մինչդեռ մեր եկեղեցվո ծոցին մեջ չեն եղած ու չկան հավասարազոր զույգ կաթողիկոսներ, որովհետև՝ չկան զույգ եկեղեցիներ: Կա մեկ հայ ժողովուրդ, մեկ Հայաստանյայց եկեղեցի, մեկ նվիրապետական կառույց, մեկ ընդհանրական հայրապետություն՝ իր պատմական Աթոռով ի ս. Էջմիածին: Կիլիկյան Աթոռը մասնավոր Աթոռ մըն է տեղական իշխանությամբ միայն, որ իր գոյությունը և գործունեությունը կրնա դրապես իմաստավորել միմիայն իր տեղը գրավելով հայ եկեղեցվո նվիրապետական կառույցի ամբողջին մեջ, որուն միակ գլուխը, որպես գլուխ եկեղեցվո՝ Հայոց Ընդհանրական Հայրապետության Աթոռն է ի սուրբ Էջմիածին: Շեղվիլ այս դարավոր կանոնեն և դրութենեն, կնշանակե ժխտել սկզբունքը Հայաստանյայց եկեղեցվո միության, ժխտել սկզբունքը մեր եկեղեցվո նվիրապետական կառույցի մեկության, ժխտել սկզբունքը հայ ժողովուրդի հոգևոր-ազգային միասնության:

Հետևաբար Մայր Աթոռիս սպասումն է որ Ձերդ Սրբությունը հստակ ու վճռական իր խոսքով, կետ առ կետ հաստատե առաջադրված հինգ սկզբունքները և իր պատրաստակամությունը հայտնե՝ Մեզի հետ գործակցելու, ի խնդիր անոնց կենսագործման:

Հիշեցման կարգով ստորև վերստին Ձեզի կներկայացնենք Մայր Աթոռիս բանաձևած հինգ սկզբունքները՝

«Ա. Անթիլիասի Կիլիկիո կաթողիկոսության Աթոռը ընդունի կանոնական և պատմությամբ նվիրագործված Հայաստանյայց եկեղեցվո միության սկզբունքը հոգևոր վերին իշխանությանը ներքև Ամենայն Հայոց կաթողիկոս-Պատրիարքի, որ եղած է միշտ և կմնա միակ գերագույն պետը և գլուխը ամբողջ հայ եկեղեցվո և անոր նվիրապետության, որուն հավասարազոր այլ եկեղեցական իշխանություն ընդունելի չէ հայ եկեղեցվո կառույցին մեջ:

Բ. Անթիլիասի Կիլիկիո կաթողիկոսության Աթոռը հարգե հայ եկեղեցվո նվիրապետական Աթոռներու իրավասությանց սահմանները և առանց Ամենայն Հայոց կաթողիկոսի համաձայնության և կարգադրության եպիսկոպոս կամ այլ հոգևոր պաշտոնյա չղրկե՝ Սյուրիո, Լիբանանի և Կիպրոսի թեմերեն դուրս, թեմեր՝ որոնցմե Լիբանանի և Դամասկոսի թեմերը Անթիլիասին հանձնվեցան 1929-ին Երուսաղեմի պատրիարքության կողմե, որով չեղյալ պետք է համարվին Անթիլիասի կիլիկյան Աթոռի նոր կանոնագրության 32 և 33 հոդվածները:

Գ. Անթիլիասի կիլիկյան Աթոռը հանձն առնե Մայր Աթոռ ս. Էջմիածնի իրավասության վերադարձնել Իրաքի, Հունաստանի և Միացյալ Նահանգաց թեմերը և Կարակասի համայնքը:

Դ. Անթիլիասի Կիլիկիո կաթողիկոսության Աթոռը ընդունի սկզբունքը որով միջեկեղեցական և միջազգային մակարդակի կազմակերպություններուն և համաժողովներուն Հայաստանյայց եկեղեցին ներկայացվի Ամենայն Հայոց կաթողիկոս-Պատրիարքի կողմե նշանակված անձերով կամ պատվիրակություններով, մասնակցությամբը նաև կիլիկյան Աթոռի ներկայացուցիչներուն:

Ե. Անթիլիասի կիլիկյան Աթոռը հարգե սկզբունքը որ Ամենայն Հայոց կաթողիկոս-Պատրիարքի պատժական կամ կարգալուծման վճիռները վերջ-

նական են և պարտադիր հայ եկեղեցվո նվիրապետական բոլոր Աթոռներուն և թեմերուն համար»:

Նույնպես հիշեցման կարգով, ստորև կրկին անգամ Ձեր լուրջ ուշադրության կհանձնենք Մեր խոհերը, ուղղյալ Ձեր ներկայացուցիչներուն սուրբ Էջմիածնա մեջ, 14 նոյեմբեր 1971-ին.

«Ա.—Արտասահմանի մեջ ստեղծված եկեղեցական տագնապը կվնասե ոչ միայն մեր եկեղեցին, պառակտելով զայն, այլ ծանրորեն կվնասե նաև մեր ժողովուրդին, տկարացնելով, խանգարելով հայ եկեղեցվո ազգային-հայրենասիրական առաքելությունը:

Բ.—Տագնապը ստեղծվեցավ իբրև հետևանք Անթիլիասի և իր կուսակիցներու հստակորեն ծրագրած քաղաքականության, որով հետապնդվեցավ ու քայլ առ քայլ գործադրվեցավ արտասահմանի հայ եկեղեցվո և ժողովուրդի բաժանումը ս. Էջմիածնեն և անոնց միացումը Անթիլիասի Աթոռին: Անթիլիասի կարգախոսը եղավ «Արտասահմանի հայ եկեղեցին և ժողովուրդը Անթիլիասին, Հայաստանի հայ եկեղեցին ու ժողովուրդը ս. Էջմիածնին»:

Գ.—Այս պայմաններու մեջ անհնար դարձավ պահպանել հայ եկեղեցվո միությունը և ժողովուրդի միասնությունը: Անհնար դարձավ որ հայ եկեղեցին և ս. Էջմիածինը կարողանան բնականոն և ամբողջական կերպով կենսագործել իրենց ազգային-հայրենասիրական առաքելությունը, առաքելություն զոր Անթիլիաս ինք չի կրնար ստանձնել, այդ անհնարին բան է: Անթիլիասի կիլիկյան Աթոռը երբեք չի կրնար փոխարինել ս. Էջմիածինը, Լիբանանը երբեք չի կրնար փոխարինել Մայր Հայաստանը:

Դ.—Եթե Անթիլիասի մեջ իրոք բան մը փոխված է այժմ, և իրապես ու վճռապես կա ցանկությունը վերոհիշյալ քաղաքականությունը հիմնովին փոխելու, հրաժարելու անկե, այդ ժամանակ, այո, հնարավոր կդառնա վերահաստատել միությունը մեր եկեղեցվո և բնականոն փոխհարաբերությունները ու գործակցությունը մեր Աթոռներու միջև: Այլապես իզուր կըլլան մեր և ձեր ջանքերը, և այս հանդիպումները՝ ժամանակի կորուստ»:

Երանի թե արտասահմանի հայ կյանքին մեջ վերջապես տիրական դառնային եկեղեցական օրինակությունը և ազգային ողջմտությունը, որպեսզի վերջ գտնեին բաժանումները ու անվերջանալի խռովությունները, և լայնորեն բացվեին «դռներն հուսոյ» հայ գաղթաշխարհի առջև, ի խնդիր միացյալ ուժերով կազմակերպման հայապահպանման նվիրական գործին:

Հետևաբար, կրկին ու կրկին անգամ կոչ կուղղենք Ձեզի և ձեր Աթոռին որպեսզի վերջ տրվի հայ եկեղեցին երկփեղկելու և արտասահմանի մեր հավատացյալ ժողովուրդը Մայր Աթոռեն բաժնելու քաղաքականության, որ բուն պատճառն է մեր եկեղեցական կյանքի տագնապին: Միմիայն բուն պատճառը հեռացնելով է որ կչքանա հետևանքը, այսինքն տագնապը:

Մեր վերջին կոչն ու հորդորն է այս՝ ուղղյալ Ձեր Սրբության:

Լավատես ոգիով և լի ամենաբարի իղձերով, Ձեզի կհղենք Մեր եղբայրական ողջույնը Փրկչի Իշման սուրբ սեղանեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ց-ը հոկտեմբերի 1972 թ.,
Ս. Էջմիածին



ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ 200-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Այս տարի լրացավ Մայր Աթոռի տպարանի հիմնադրության 200-ամյակը:

Պատմական ու հիշարժան այս հոբելյանը նշելու համար նոյեմբերի 4—5 օրերին Մայր Աթոռում կատարվեցին հետևյալ հանդիսությունները Վեհափառ Հայրապետի 1972 հունվար 28 թվակիր սրբատառ կոնդակի հրահանգով:

Ս. ՊԱՏԱՐԱԳ, ՔԱՐՈԶ ԵՎ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ

Նոյեմբերի 4, շաբաթ: Այսօր, օրվա հոբելյանական հանդիսության առիթով, առավոտյան ժամը 10.30-ին, ս. Գայանե տաճարում պատարագ է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարոզում հոգևոր ճեմարանի փոխ-տեսուչ **տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը՝** «Զբարիս գործել, մեծանալ գործովք բարութեան» (Ա Տիմթ. Զ 18) բնաբանով՝ ոգեկոչելով անունն ու հիշատակը, ուսանելի կյանքը ու բազմակողմանի գործունեությունը մեծագործ **Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի:**

Ժամը 11-ին ժամանում է **Վեհափառ Հայրապետը** և առաջնորդվում եկեղեցի՝ ուղեկցությամբ **տ. Սերովբե, տ. Բաբգեն, տ. Գնել, տ. Տիրայր** սրբազանների և Մայր Աթոռի միաբանության:

Ս. պատարագին ներկա են լինում հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունն ու հավատացյալների հոծ բազմություն:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է ս. Գայանե եկեղեցու գավթում թաղված լուսահոգի Տ. Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի շիրիմ, որը զարդարված էր ծաղիկներով ու մոմերով, և նախագահում հոգեհանգստյան մասնավոր արարողությունը՝ ոգեկոչելով հիշատակը Հայոց մեծագործ Հայրապետի և Մայր Աթոռի լուսամիտ ու կրթանվեր միաբանների, որոնց ջանքերով 1771 թվականին Մայր Աթոռի հովանու ներքո բացվում էր հայերեն առաջին տպարանը Հայաստանում, տպարան, որն անընդմեջ գործում էր 150 տարի՝ հարստացնելով մեր մշակույթի գանձարանը մեծարժեք և բովանդակալից բազմապիսի ու բազմաժանր հրատարակություններով:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Նոյեմբերի 5, կիրակի:

Մայր Աթոռում հայերեն առաջին տպարանի հաստատման 200-ամյակի առիթով այսօր, առավոտյան ժամը 11-ին, Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար ս. Էջմիածնում գտնվող **տ. Գնել եպս. Ճերեճյանը:**

Ժամը 12-ին **Վեհափառ Հայրապետը,** ավետավոր զանգերի ղողանջի ներքո, եկեղեցական թափորով և հանդիսավորապես, առաջնորդվում է Մայր տաճար՝ ընկերակցությամբ Երուսաղեմի հայոց ամենապատիվ **տ. Եղիշե սրբազան պատրիարքի, տ. Սերովբե, տ. Բաբգեն, տ. Շահե, տ. Տիրայր** սրբազանների, Մայր Աթոռի միաբանության անդամների:

Մայր տաճարը լիքն է աղոթավոր և ուխտավոր բազմությամբ:

Այսօրվա հանդիսության առիթով ս. պատարագի երգեցողությունը փայլուն հաջողությամբ կատարում է Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երգչախումբը՝ խմբավար Լևոն Բաբայանի ղեկավարությամբ:

«Հայր մեր»-ից առաջ ս. Սեղանի ավագ բեմից **տ. Արսեն վրդ. Բերբերյանը** ի լուր ժողովրդի ընթերցում է Հայոց Հայրապետի 1972 հունվար 28 թվակիր կոնդակը, որով Նորին Ս. Օծությունը շեշտելով Մայր Աթոռում հայերեն առաջին տպարանի հաստատումը, Սիմեոն Ա Երևանցու օրով, որպես պատմական, մշակութային մեծ ձեռնարկ մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ, հրահանգում էր բոլոր հայ եկեղեցիներում հանդիսավոր և սրբազան արարողություններով ոգեկոչել հիշատակը ս. Էջմիածնի տպարանի հիմնադրության 200-ամյակի, տպարանի հիմնադիր երջանկահիշատակ Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի, բարեպաշտ բարերարների և Մայր Աթոռի կրթանվեր միաբանների, որոնց նյութական, բարոյական միահամուռ ջանքերով բացվում էր առաջին տպարանը Հայաստանում:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 200-ԱՄՅԱԿԻՆ

Նոյեմբերի 5-ին, կիրակի, երեկոյան ժամը 18-ին, **Վեհափառ Հայրապետի** բարձր նախագահությամբ, Վեհարանի հանդիսությանց ջահազարդ և շքեղ դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Մայր Աթոռի տպարանի հաստատման 200-ամյակին:

Հանդիսությանը ներկա են լինում Երուսաղեմի հայոց ամենապատիվ **տ. Եղիշե սրբազան պատրիարքը, տ. Սերովբե, տ. Բաբգեն, տ. Կոմիտաս** արքեպիսկոպոսները, **տ. Գնել, տ. Շահե, տ. Տիրայր** եպիսկոպոսները, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամները, բազում մտավորականներ, թղթակիցներ և մասնավոր հրավիրյալների մի ընտիր խումբ, շուրջ 300 հոգի:

Հանդիսությանը ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Ս. Գասպարյանը** և տեղակալ **Ս. Հովհաննիսյանը:**

Հոբելյանական հանդիսությունը բացվում է «Հայր մեր»-ով և «Էջ Միածինն ի Հօրէ» շարականով, որոնք կատարում է հոգևոր ճեմարանի երգչախումբը:

Այնուհետև ունկնդրվում է ՀՍՍՀ պետական հիմնի նվագը:

Մայր տաճարի լուսարարապետ **տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը,** ներածական խոսքով բացելով հոբելյանական հանդիսությունը, նշում է մեր մշակույթի զարգացման շնորհակալ գործում երջանկահիշատակ Տ. Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կատարած լուսավոր ու հայրենասիրական մեծ նախաձեռնության հոգևոր նշանակությունը, Մայր Աթոռի հովանու տակ, օժանդակությամբ հայ ժողովրդի արժանավոր զավակների նվիրատվության և միաբանության անդամների կրթանվեր ջանքերի:

Հանդիսությունը բաղկանում էր երկու մասից:

Առաջին մասում՝ զեկույց և ողջույնի խոսքեր, իսկ երկրորդ մասում՝ գեղարվեստական ծրագրի կատարում:

Մայր Աթոռի տպարանի հաստատման 200-ամյակի առիթով բովանդակալից զեկուցումով հանդես է գալիս «Էջմիածին» ամսագրի խմբագիր և հոգևոր ճեմարանի ավագ դասախոս **Արթուն Հատիտյանը:** Հարգելի բանախոսը նախ նշում է, որ այս տարի լրացավ Մայր Աթոռի տպարանի՝ նաև Հայոց աշխարհում առաջին հայատառ տպարանի հաստատման 200-ամյակը, տպարան, որը «կանոնավորապես սկսում էր գործել 1772 թվից, որպես հայ ժողովրդի հոգևոր լուսավորության և ազգային-մշակութային զարթոնքի հիմնական ազդակներից մին, հանդիսանալով մեծ երևույթ ԺԸ դարի մեր ժողովրդի պատմության մեջ:

Գուտենբերգյան մեծ գյուտից հետո, ԺԵ դարի 60-ական թվականներին, երբ տպագրության արվեստը տարածվում էր Եվրոպայում ու վայելում էր պետական հովանավորություն ու պաշտպանություն, հայ ժողովուրդը առաջիններից մեկն էր հանդիսանում, որ այդ գյուտից շուրջ 50 տարիներ

հետո, 1512 թվականին, տիրանում էր տպագրական արվեստի հրաշալիքին՝ սկիզբ դնելով հայ կյանքում տպագրությանը:

Հայ տպագրությունը ս. սահակ-մեսրոպյան հոգևոր-մշակութային ու հայրենասիրական, ազգային, ինքնապահպանության հրաշքի շարունակությունն էր՝ մեսրոպատառ տպագրված հայ գրի ու գրականության միջոցով:

ԺԶ դարում մեր երկրում տիրող քաղաքական-տնտեսական ծանր պայմանների բերումով, երբ քաղաքականապես և մշակութապես խողխողվում էր մեր ժողովուրդը, հայերեն առաջին տպարանները բացվում էին հայրենիքից հեռու, գաղթօջախներում, ս. Էջմիածնի հովանավորությամբ և նախաձեռնությամբ: «Հայերեն տպագրությունները ներմուծվում էին Հայաստան, իբրև դրսի ապրանք»:

Մայր Աթոռում տպարան հաստատելը կաթողիկոսների և միաբանների երազանքն էր:

Ս. Էջմիածնում, հայրենի հողի վրա, առաջին հայ տպարանի հաստատումը պատմականորեն կապվում է Սիմեոն Ա Երևանցի մեծագործ կաթողիկոսի անվան ու գործունեության հետ:

Հնդկաստանի նվիրակության երեք ու կես տարիներին Երևանցին մտերմական կապ է հաստատում մանավանդ Մադրասում, տեղի բարեպաշտ, եկեղեցասեր ու հարուստ հայ իշխանների հետ, որոնք հետագայում մեծապես օգտակար են հանդիսանում Երևանցուն, նրա կաթողիկոսության տարիներին, իշխանական նվիրատվություններով օժանդակում մեծագործ Հայրապետի եկեղեցանվեր, կրթական, տպագրական և հայրենասիրական ձեռնարկներին: Այդ բարերարներից պետք է հիշել Գրիգոր Միքայելյան Խոջաջան Զաքիկենցին, որի անունը հետագայում սերտորեն կապվում է Մայր Աթոռի տպարանի և թղթի գործարանի հաստատման պատմության հետ:

Սիմեոն Երևանցին իր 17-ամյա հայրապետական գործունեությամբ, հակառակ ժամանակի դաժան և աննպաստ պայմաններին, Մայր Աթոռում կատարում է փառավոր, մեծածախս և ծավալուն բազմաթիվ շինարարություններ, որոնց իրագործումը պահանջում էր նյութական լայն միջոցներ:

Սիմեոն Երևանցու շինարարական գործունեության փառապսակը հանդիսացավ, սակայն, Մայր Աթոռում և հայրենի հողի վրա, հայերեն առաջին տպարանի հաստատումը 1771 թվականին:

ԺԶ—ԺԸ դարերում մեր երկրում տիրող քաղաքական, տնտեսական աննպաստ պայմանների բերումով, հայերեն առաջին տպարանները բացվում էին հայրենիքից հեռու, հայկական գաղթօջախներում, ս. Էջմիածնի գահակալների և միաբանների նախաձեռնությամբ և հովանավորությամբ:

Գաղթօջախներում հաստատված առաջին հայ տպարաններից շատերը կոչվում էին «Ս. Էջմիածնի» կամ «Ս. Գրիգոր Լուսավորչի» տպարաններ:

Հայ տպագրությունը 260 տարի գաղթօջախներում «պանդուխտ» մնալուց հետո, 1512—1772, վերջապես հայրենադարձվում է Հայոց աշխարհ:

1765 թվականից սկսած Երևանցին գործնականապես և վճռականորեն զբաղվում է տպարանի հաստատման նախապատրաստական աշխատանքներով:

Վերջապես, երկարատև ու եռանդագին ջանքերից հետո, 1771 թվականին, Սիմեոն կաթողիկոսին հաջողվում է հայրենի հողի վրա, Մայր Աթոռում, հաստատել տպարան: Երևանցին հանդիսանում է հայաստանյան տպագրության նախահայրը:

Այս գործում Երևանցուն մեծապես օգնում են Մայր Աթոռի բազում միաբաններ, որոնց թվում՝ Հարություն եպս. Էջմիածնեցին՝ որպես փորագրող և քանդակող, և Մկրտիչ եպս. Շոռոթեցին: «Եվ սա ապացույց է տպագրական գործի կարևորության նշանակություն տալուն և միաբանների միահամուռ ուժերով գործի հաջողությանը նվիրված լինելուն»:

Մայր Աթոռի շնորհալի միաբաններն էին, որ պատրաստում էին տպագրական տառերը, զարդագրերը, բացել էին ձուլարան: Նրանք էին միաժամանակ առաջին գրաշարները, սրբագրիչները, տպագրիչներն ու կազմարարները: «Այսպիսով սկիզբն դրվեցավ Հայաստանի հողի վերա գրքերի տպագրության»: Դա ժամանակի աննպաստ պայմաններում արդարև «հայրապետական մեծագործություն էր», «փառավոր մի գործ, որի նմանը մինչև այդ Էջմիածնում չէր եղել»:

Սակայն տպագրական գործի արագ կերպով զարգացումը խանգարող մի ուրիշ աննպաստ հանգամանք ևս կար: Դա տպագրական թղթի պակասն էր: Տպագրության համար անհրաժեշտ թուղթը բերվում էր Եվրոպայից մեծ դժվարություններով:

Արիասիրտ Հայրապետը հաղթահարում է բոլոր դժվարությունները, և նրա գործնական միտքը լուծում է ամենայն հաջողությամբ նաև թղթի հարցը: Մայր Աթոռում նա հաստատում է նաև թղթի գործարան, 1776 թվականին, Գրիգոր աղա Խոջաջան Զաքիկենցի բարերարությամբ:

«Այստեղ արդեն լիուլի արտահայտվում էր Սիմեոն կաթողիկոսի խիզախ, ձեռնարկող ոգին, կամքի ուժը, վառ սերը դեպի

կուլտուրական հիմնարկությունները»: Բայց Երևանցին «մենակ իր սեփական միջոցներով չէր կարող հաջողեցնել այսպիսի եվրոպական ձեռնարկությունները Էջմիածնի պարիսպների մեջ, եթե նրան եռանդագին աջակցություն ցույց չտար հայ վաճառականությունը, մանավանդ ջուղայեցի խոջաները»:

Սիմեոն Երևանցու օրով, 1772—1780 թթ., Մայր Աթոռի տպարանից լույս են տեսել հիմնականում նրա գրչին պատկանող 6 արժեքավոր աշխատություններ»:

Այնուհետև հարգելի բանախոսը հանգամանորեն ներկայացնում է Սիմեոն Երևանցու տպագրած մատենագրական վաստակը՝ վեր հանելով «Զբօսարան հոգևոր» (1772), «Տաղարան փոքրիկ» (1772), «Տօնացոյց» (1774—75), «Գիրք որ կոչի Պարտավճար» (1779—1783), «Զամբռ» (գրված 1765-ին, տպագրված՝ 1873-ին), «Գիրք հանդիսությանց տօնից կայսերականաց» (գրված 1771-ին) հրատարակությունների գաղափարական, հայրենասիրական բովանդակությունն ու արժեքը, նաև մե՛ր օրերին:

Մայր Աթոռի տպարանի հաստատման 200-ամյակի առիթով կարդացված սույն արժեքավոր բանախոսությունը ամբողջությամբ հրատարակվելու է «Էջմիածնի» ամսագրի դեկտեմբերի համարում, համար, որը նվիրվելու է Մայր Աթոռի տպարանին:

Հանդիսության ժամանակ, օրվա հոբելյանի առիթով, ողջույնի գեղեցիկ խոսքով հանդես է գալիս նախ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ **տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:**

Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

«Վեհափառ Տեր,

Հանուն ֆրանսահայ գաղութին և ընդհանրապես Արևմտյան Եվրոպայի հայության, այսօր այս հանդիսավոր առիթով մեր երախտագիտության և շնորհակալության տուրքը կմատուցանենք այն մեծագործ Հայրապետին՝ Սիմեոն Երևանցիին որ ասկե 200 տարի առաջ ձեռներեցությունը, իմաստությունը ունեցավ Մայր Աթոռի մեջ հիմնելու առաջին հայերեն տպարանը: Այս տուրքը, այս հանդիսությունը հավանաբար տեսակ մը հանդիսություն է նաև Եվրոպայի հայ գաղութի, եթե այդպես կարելի է ըսել, վասնզի, ինչպես հիշատակվեցավ գլխավոր բանախոսին ելույթին մեջ, առաջին հայ գիրքերը տպագրված են Եվրոպայի մեջ: Բայց ասոնք անցողակի պարագաներ են: Այս տոնակատարության, այս հանդիսության մասնավոր նշանակությունը ան է որ դարձյալ կը հայտնվի ս. Էջմիածնի և անոր գահակալներու բազմակողմանի և բազմարդյուն գործունեությունը մեր ժողովուրդին մեջ: Տարակույս չկա որ ս. Գրիգոր Լուսավորչեն սկսյալ մեր Հայրապետները քրիստոնեական հավատքի, աստվածային սկզբունքներու և հոգևոր կյանքի մեծագույն ջահակիրները եղած են: Այսօր այս լուսավոր և պայծառ և մեծագործ Հայրապետներեն մեկուն՝ Սիմեոն Երևանցիի լուսեղեն մարմնացումին գովքն է որ կփառավորենք:

Վեհափառ Տեր, ես կրկին հանուն ֆրանսահայ գաղութին և թերևս ամբողջ արտասահմանին հայության, մեր երախտագիտությունը կհայտնեմ Էջմիածնի այդ լուսապայծառ դեմքերուն, որոնք մեր հոգևոր մշակույթը հովանավորած և կերտած են: Անսասանություն կմաղթենք Մայր Աթոռ ս. Էջմիածնին, ույժ և կարողություն՝ երկար կյանք՝ Ձեզի, Վեհափառ Տեր, որ այդ լուսապայծառ դեմքերուն արժանավոր հաջորդը և գահակալն եք, որպեսզի անոնց ոգիով հովանավորեք, ստեղծագործեք, խանդավառեք, մխիթարեք և մեր հայրենիքին, մեր եկեղեցիին և Մայր Աթոռ ս. Էջմիածնին կապեք, ոչ միայն հոգիները մայր հայրենիքին մեջ գտնվող Ձեր զավակներուն, այլ մանավանդ պանդուխտ, աշխարհին չորս ծագերուն ցրված Ձեր զավակներուն որոնց միակ հույսը, որոնց միակ մխիթարությունը, որոնց միակ ուրախությունը մայր հայրենիք, ս. Էջմիածին և Ձեր անձով փառավորվող հոգևոր կյանքի աշխատանքն է ս. Էջմիածնի մեջ»:

Այնուհետև ողջույնի գեղեցիկ և տպավորիչ խոսք է ասում Երուսաղեմի ամենապատիվ գրագետ **սրբազան պատրիարքը.**

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

«Վեհափառ Տեր,

Տիար Գասպարյան,

Հոգեշնորհ եղբայրներ և հարգելի ներկաներ,

Ինձի համար իրական երջանկություն մը կնկատեմ այս պահուս որ քաղցր պատեհությունը կունենամ իմ ուրախությունս բերելու հոբելյանական այս հանդեսին: Լատին ա-

ռածը կըսե թե ամեն գիր գրողը, թե ամեն գիրի համար աշխատողը, սատանային՝ այսինքն չարիքին աչքին ասեղ մը կնետե:

Այսօրվան հոբելյարը այդ նվիրական, սրբազան գործն է որ ըրած է, բարիքով զարդարելու ոչ միայն Էջմիածինը, այլ մանավանդ հայ ժողովուրդը իր այդ բարերար գործով:

Իմ ուրախությունը՝ և վստահ եմ որ շատերուն ալ ուրախությունը ավելի մեծ պիտի ըլլար, եթե Սիմեոն Երևանցիի տպագրական այդ գործը թեև Էջմիածնի կամարներուն տակ սկզբնավորված է, բայց իբրև գործ՝ համազգային գործ է և պետք է համազգային տոնակատարության և համազգային հոբելյանին արժանանար: Այն ատեն իմ և, վստահ եմ, բոլորին ուրախությունը ավելի մեծ կըլլար:

Եվ կարծե որ այդ մարդը ուրիշ երախտավորյալներու կարգին համազգային սիրո և հարգանքի արժանանա, և այն ատեն միայն մենք իբրև գիրի և գրքի մարդ, իբրև մշակույթի ժողովուրդ մեր ամբողջական պարտականությունը կատարած կըլլայինք այդ մեծ մարդու նկատմամբ:

Երկրորդ ուրախությունս այն է որ ինչպես նախորդ խոսողները ըսին, որ Սիմեոն Երևանցիի գործը չէ կասած, այլ շարունակված է այս Աթոռին մեջ, շարունակված է այս երկրին մեջ, այս ժողովուրդին մեջ և կշարունակվի:

Եվ ատոր ամենեն վերջին և ամենաերախտաշատ ներկայացուցիչներեն մեկը մեր այժմու Վեհափառ կաթողիկոսն է որուն ամենքս սեր և հարգանք կպարտինք»:

Ընդհանուր խանդավառության մեջ խոսք է առնում նաև **Հայոց Հայրապետը**՝ Իր օրհնությունն ու երախտագիտությունը բերելու մեծագործ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի գործին և հիշատակին.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Նման առիթներով միշտ ակնկալվում է, որ կաթողիկոսը Իր օրհնության խոսքը ասի: Առաջին անգամ չէ, որ Մենք այս կացության առջև ենք գտնվում Մեր գահակալության 17 տարիների գործունեության շրջանում: Բայց ամեն անգամ, անկեղծորեն խոստովանենք այս պահին, որ Մենք Մեզ՝ անհարմար վիճակի մեջ ենք տեսնում մտածելով թե՝ արդյոք ո՞վ ում պետք է օրհնի, կամ ավելի ճիշտ՝ ո՞վ ում օրհնության կարիքն ունի, այսօրվա կաթողիկո՞սն է որ պետք է օրհնի իր նախորդներին, թե ընդհակառակը՝ պետք է հայցի ինքը՝ օրհնությունը իր նախորդների, մանավանդ երբ խոսքը վերաբերում է իրապես մեծագործ Հայրապետներին:

Թեև բոլորս ծանոթ էինք առավել կամ նվազ չափով Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կյանքին և գործունեությանը, սակայն այսօր երբ մեր աչքի առաջ պատկերացավ ամբողջապես մեծ վաստակը երանաշնորհ Հայրապետին, որի անունը երբեմն գուցե մոռացվում է դժբախտաբար, Մենք անհուն մխիթարության զգացումով է որ իր հիշատակին ուզում ենք բերել Մեր հարգանքի, երախտագիտության և սիրո խոսքը:

Սիմեոն Երևանցին, ինչպես շատ ու շատ Հայոց Հայրապետներ ս. Գրիգոր Լուսավորչից սկսյալ, ինչպես և այլ հոգևոր սպասավորներ, դարերի ընթացքին գործել են իբրև հայ քրիստոնյաներ: Քրիստոնեական հավատքը միշտ անբաժան է եղել նրանց մտածումներից, աշխատանքից, գործունեությունից, երազանքներից, իրագործումներից:

Հատկապես կենտրոնացնելով Մեր խոսքը հոգևոր գործիչների վրա, կուզենք ասել թե նրանք քրիստոնեական հավատքը և առաքելությունը ընկալել են մի քիչ գուցե տարբեր ձևով, քան թե ուրիշ ժողովուրդների հոգևորականներ: Անտարակույս, նրանք կատարյալ քրիստոնյաներ են եղել, յուրացրել են ամբողջովին Քրիստոսի Ավետարանի ուսմունքը և իրենց առաքելությունը երկրի վրա, ըմբռնել են իբրև անցավոր մի կարճատեվ ժամանակաշրջան, որպես իրենց կյանքի վերջնական նպատակ ունենալով՝ հասնել երկնքի արքայության, արժանի լինել երկնից արքայության և իրենց հոգիների փրկության: Սա ընդհանուր քրիստոնեական հասկացողություն է կյանքի և երկրային աշխատանքի վերաբերյալ: Բայց Մեզ թվում է, թե սխալած չենք լինի, եթե ասենք, որ այս հարցում հայ հոգևորականները երկնից արքայության տեսիլքը իրենց սրտերում վառ պահած առավել քան այլ եկեղեցիների սպասավորներ շեշտը դրել են երկրային իրագործումների վրա, ստեղծարար աշխատանքի վրա ա՛յս կյանքում: Երկնից արքայության տեսիլքը նրանց համար ոգեկան ստեղծարար այն ուժն է եղել, որով նրանք ստեղծագործել են աշխարհի վրա, այս աշխարհում ապրող իրենց ժողովրդի համար: Չգիտենք, եթե դուք համաձայն կլինեք Մեր այս մեկնության հետ, բայց կբավե մի պահ մեր աչքի առաջ ունենալ Հայաստանյայց եկեղեցու ազգային սուրբերի պարագան: Մեր բոլոր ազգային սուրբերը եղել են նման ստեղծագործող մարդիկ այս աշխարհում, այս կյանքում:

Առաջին մեծագործ հոգևորականը, որ կա

ռելի է հիմնադիրը համարել մեր եկեղեցու՝ ս. Գրիգոր Լուսավորիչ, եղել է նաև բյուրեղացնողը հայ ճարտարապետական ոճին: Մեր պատմիչները վկայում են, թե նա լարը ձեռքին մասնակցել է տաճարի շինարարության, իր տեսիլքը իր աչքի առջև ունենալով իբրև օրինակ: Հետո ս. Մեսրոպ և ս. Սահակ անշուշտ որ ամեն բանից առաջ մեծ գիտնականներ եղան: Եթե հիշենք ամբողջ շարքը մեր ազգային սուրբերին, պիտի ընկատենք թե նրանք կամ գիտնականներ են կամ բանաստեղծներ, ինչպես Նարեկացին, Շնորհալին կամ հասարակական հանրային բարիքին նվիրված մարդիկ, ինչպես Մեծն Ներսես, որ առաջին անգամ հիվանդանոցներ, որբանոցներ և անկելանոցներ հիմնեց Հայաստանում, և կամ զեն ի ձեռին ս. հավատքը և հայրենիքը պաշտպանող իշխաններ կամ հոգևորականներ, ինչպես Վարդանանք և Ղևոնդյանք:

Ահա այս է ներկայացնում ճշմարիտ պատկերը և ոգին հայ քրիստոնյա ժողովրդին:

Այս մտածումներով Մենք մոտենում ենք լուսաբնակ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի հիշատակին: Թեև նա սուրբ չի հռչակված մեր եկեղեցու կողմից, բայց սրբության բարձունքին արժանի գործ է կատարած՝ եկեղեցու պաշտպան, կրթական, մշակութային և հայրենասիրական տեսակետից: Մեզ մնում է, այսօրվաններիս, լինենք հոգևորականներ թե աշխարհականներ, հետևել նրա ճանապարհին և նույն ոգով լարել մեր ուժերը, Հայաստանի և արտասահմանի հայ հոգևորական և աշխարհական գործիչներ միասնաբար, որպեսզի մեր փոքրիկ, անցյալում շատ տառապած և հազիվ փրկության ափին հասած և տակավին շատ անելիքներ ունեցող մեր ժողովրդի համար, բոլորս մեր պարտքը կատարենք անկեղծությամբ, ամբողջական նվիրումով, առանց սակարկության, որպեսզի իսկապես արժանի լինենք հայ ժողովրդի սիրուն, գնահատանքին:

Տասը տարի տևող ընդմիջումից հետո գործադրության դրվեց հոբելյանական հանդիսության գեղարվեստական ծրագիր: Առաջինը ելույթ է ունենում **Բաքվի հայոց եկեղեցու երգչախումբը**, որը Լևոն Բաբայանի ղեկավարությամբ կատարում է հետևյալ խմբերգերը. «Օրհնեալ է Աստուած» (Մ. Եկմալյան), «Լակրիմոզա» (Մոցարտ) և «Փա՜ռք քեզ, փա՜ռք» (Ալ. Հարությունյան): Երգչախմբի մենակատար **Զեմմա Զարչօղլյանը** կատարում է Լուչիայի արիան «Լուչիա դի Լամերմուր» օպերայից (Դոնիցետտի) և Ռախմանինովի «Այստեղ լավ է» ռոմանսը: Իսկ նույն երգչախմբի մենակատար **Նոնա Կետուքյանը** կատարում է «Ավե Մարիա» (Լուցի) և Չիո-չիո-սանի արիան համանուն օպերայից (Պուչչինի):

Այնուհետև հանդես է գալիս շնորհալի ասմունքող, հանրապետության վաստակավոր դերասանուհի **Սիրվարդ Մեսրոպյանը**, որը մեծ ապրումով արտասանում է գրաբար և աշխարհաբար թարգմանությամբ հատվածներ Գր. Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ից և Ալիսիա Կիրակոսյանի «Նամակ առ Հայաստան» բանաստեղծությունը:

Վերջում հանդես է գալիս միջազգային մրցույթի դիպլոմակիր **Հայֆիլհարմոնիայի պետական լարային քառյակը Լևոն Մամիկոնյանի** ղեկավարությամբ՝ հետևյալ կազմով. առաջին ջութակ՝ Լևոն Մամիկոնյան, երկրորդ ջութակ՝ Մարտին Երիցյան, ալտ՝ Յուրի Մանուկյան, թավջութակ՝ Ֆելիքս Սիմոնյան:

Նվագախումբը մեծ վարպետությամբ կատարում է երեք հատվածներ պատարագից, «Ալագյազ», «Հաբրբան» և «Վաղարշապատի պար» (Կոմիտաս Վարդապետ) ստեղծագործությունները:

Մայր Աթոռի տպարանի հաստատման 200-ամյակին նվիրված հանդիսության գեղարվեստական մասը նույնպես ավարտվում է ընդհանուր և խանդավառ ծափերի մեջ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմ շնորհակալություն է հայտնում հոբելյանական հանդիսության գեղարվեստական բաժնին իրենց արտագին մասնակցությունը բերած արվեստագետներին և բոլորին՝ իրենց ներկայության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 1-ին, չորեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում տ. Գնել եպս. Ճերեճյանը՝ Բեյրութից, և Ռումինիայի ու Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը՝ մասնակցելու եպիսկոպոսաց ժողովի «Ծիսական բարեկարգությանց հանձնաժողով»-ի նիստերին:

*
* *

Նոյեմբերի 3-ին, ուրբաթ.—Այսօր ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում ս. Էջմիածնի միաբան տ. Վազգեն վրդ. Թադոյանը:

Նույն օրը, երեկոյան, հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում բեյրութաբնակ Հովհաննես Շիրազը (Ճերեճյան) մոգական լապտերով ցուցադրում է ներկայիս Արևմտյան Հայաստանը պատկերող գունավոր նկարների մի շարք:

*
* *

Նոյեմբերի 15-ին, չորեքշաբթի.—Այսօր, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, իրենց պաշտոնատեղիներն են մեկնում, տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը և տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը:

*
* *

Նոյեմբերի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի հայոց սրբոց Հակոբյանց վանքի միաբանության անդամ տ. Ճանե եպս. Անեմյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում ս. Էջմիածնի և Երուսաղեմի հայոց պատրիարքական Աթոռի կատարած հոգևոր, մշակութային և հայրենասիրական առաքելության մասին, մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ:

Ս. պատարագին ներկա են լինում Վեհափառ Հայրապետը և Երուսաղեմի հայոց տ. Եղիշե սրբազան պատրիարքը:

*
* *

Նոյեմբերի 20-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետից հրաժեշտ է առնում և իր պաշտոնատեղին մեկնում տ. Տիրայր եպս. Մարտիկյանը:

*
* *

Նոյեմբերի 21-ին, երեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Իրաքի հայոց առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանը: Մայր տաճարում իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, տ. Ասողիկ սրբազանը Վեհարանում ստանում է Հայոց Հայրապետի օրհնությունը:

*
* *

Նոյեմբերի 24-ին, ուրբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանի հրավերով հովվական այցելության մեկնեց Բուենոս-Այրես Շիրակի թեմի

հայոց առաջնորդական տեղապահ տ. Նարեկ վրդ. Շաքարյանը:

*
* *

Նոյեմբերի 26-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում իր ուխտի անդրանիկ պատարագն է մատուցում նորընծա տ. Տիրան աբեղա Կյուրեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Հայր իմ և մայր իմ թողին զիս և Տէր ընկալաւ զիս» (Սաղմոս ԻԶ 10) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ Գրիգոր Բեքմեզյանի մահվան քառասունքի առիթով:

Եկեղեցական արարողությունից հետո Վեհարանում Հայոց Հայրապետը ընդունում է հանգուցյալի կնոջը, զավակներին, հարազատներին և ընկերներին ու Իր հայրական մխիթարության խոսքով սփոփում նրանց խորը վիշտը:

Նույն օրը Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում իր ուխտի պատարագն է մատուցում տ. Բագրատ աբեղա Գալըստյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Առաջնորդեա ինձ ի ճանապարհի քում և գնացից ի ճշմարտութեան քում և ուրախ եղիցի սիրտ իմ երկնչիլ յանուանէ քումմէ» (Սաղմոս ԶԵ 11) բնաբանով:



ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԸ*

«Վսեմափայլ Տէր Պաւել Նիկոլաևիչ.

Պատիւ կալայ ընդունել զպատասխանագրութիւն վսեմափայլութեան Ձերոյ յ3-ն նոյեմբերի ընդ համարաւ 6166 և ցաւ է ինձ յոյժ, զի յուշադրութենէ Ձերմէ վրիպեալ են և ոչ յարգեալ պատասխանագրութիւնք իմ, յորս մանրամասնեալ իմ զիրաւունս Հայրապետականս զյարատևեալսն ի դարաւոր ժամանակաց հետէ, ըստ կառավարութեան և դրութեան **տպարանի վանաց ս. Էջմիածնի,** ուստի խնդրեմ ներել ինձ, զի ես հարկադրեալ գտանիմ ի խղճէս ոչ դադարել երբեք ի թախանձելոյ զՁեզ՝ վսեմափայլ Տէր, մինչև հաճեսջիք ներկայացուցանել ուր հարկն է, ի հաստատութիւն զառաջարկութիւն իմ. և ընդ այս մեծ է յոյս իմ, զի վսեմափայլութիւն Ձեր ոչ զլաւսջիք զմիջնորդութիւն Ձեր ըստ այսմ խնդրոյ առաջի Նորին Կայսերական Բարձրութեան:

Հանեցէք ընդունել զհաւաստիս խորին յարգանաց և մտերմութեան իմոյ, որով մնամ յաւէտ վասն վսեմափայլութեան Ձերոյ ջերմեռանդ աղօթարար... ի 18 դեկտ. 1876 ըստ տումարիս ՌՅԻԶ համար 367[30]:

Արդյոք Գեորգ Դ կաթողիկոսի այս խնդիրն ընդունե՞ց Կովկասի գլխավոր կառավարչապետն և տպարանը յուր ունեցած դրության մեջ թողնելու համար որևէ կարգադրություն արա՞վ նա. կամ տպարանի կանոնադրությունը ներկայացրե՞ց ի հաստատություն կայսեր, հայտնի չէ. այդ մասին այլևս տեղեկություններ չկան. միայն տպարանը այնուհետև շարունակում է մնալ ու գործել Ամենայն Հայոց կաթողիկոսների անմիջական հսկողության տակ և ուտիկանական մարմինների կողմից որևէ միջամտություն այլևս տեղի չի ունենում մինչև 1897 թվականը:

Մայր Աթոռի տպարանի բարգավաճմանը և նորա գործունեությանը զարկ է տալիս մի այլ հանգամանք ևս: Դեռևս իբրև վարդապետ և ապա եպիսկոպոս առաջնորդ, Գեորգ Դ կաթողիկոսը մեծ հոգս էր քաշել դպրոցական գործի ծաղկման համար: Թե՛ Պրուսայում, թե՛ Պոլսում պաշտոնավարելիս, դպրոցներ բանալը եղել է նորա առաջին հոգսերից մեկը: Կաթողիկոսական գահը բարձրանալուց հետո էլ բնականաբար նորա ամենամեծ հոգսերից մեկը պիտի լիներ ռուսահայերի դպրոցական գործի կարգավորումը, որի մեջ առաջին տեղը պիտի բռներ Էջմիածնի ժառանգավորաց դպրոցը:

Գեորգ Դ-ն մտադրվում է ի կատար ածել այն մեծ ծրագիրը, որ փայփայել էին իրենից առաջ Ներսես Ե և Մատթեոս Ա կաթողիկոսները. այն է՝ ս. Էջմիածնում բարձրագույն դպրոց հիմնել: Եվ նա 1869-ին հիմն է ձգում ու 1874-ին առաջին անգամ բաց է անում ս. Էջմիածնի բարձրագույն դպրոցը, որ հետո «Գեորգյան ճեմարան» կոչվեցավ:

Ճեմարանի բացումով ավելի լայն ասպարեզ է բացվում տպարանի գործունեության համար: Բացի ճեմարանի ու թեմերի դպրոցների կարիքներին

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1972 թվականի №№ Դ—Ժ-ից:

բավարարելը, բացի զանազան տեսակի պատմական, կրոնական և այլն բովանդակությամբ հրատարակությունները, տպարանի այդ շրջանի գործունեության մեջ աչքի ընկնող տեղ է բռնում հայկական ձայնանիշներով տեղի ունեցած հրատարակությունները: Գեորգ Դ-ն մեծ զարկ տվեց հայկական ձայնագրության ուսուցմանը, կամենալով միակերպ ժամերգություն մտցնել բոլոր եկեղեցիներում. դորա համար ամեն կողմից ձայնեղ տղաներ է բերել տալիս՝ ճեմարանում կրթություն ստանալու և իբրև քահանայացու ձայնագրություն ևս սովորելու: Դպրոցներում, ճեմարանում և եկեղեցում ժամապաշտությունը ավելի գրավիչ դարձնելու համար, յուր անմիջական ղեկավարությամբ, և Պոլսից հրավիրված ձայնագրագետ Նիկողայոս Թաշճյանը հորինում, ձայնագրում, սրբագրում և առաջին անգամ տպագրության է հանձնում հայկական ձայնագրությամբ գրված եկեղեցական բոլոր գրքերը՝ **Ձայնագրյալ մեծ շարականը, Ձայնքաղ շարականը, ս. Պատարագի արարողությունը, Ժամագիրքը** և այլն*:

Այս հրատարակությունները իրենց գեղեցկությամբ և իրենց տեսակի մեջ առաջինը լինելով, այսօր էլ գիտնական անձանց ուշադրությունն է գրավում:

Մայր Աթոռի տպարանը լույս է ընծայում հոգևոր բովանդակությամբ գրքերի հետ ոչ միայն աշխարհիկ անձանց՝ այլև Մայր Աթոռի միաբանների ինքնուրույն և թարգմանական աշխատություններն առանձին հրատարակությամբ կամ **Արարատ** ամսագրի մեջ: Այս շրջանում աչքի էին ընկնում իրենց գիտական աշխատություններով Մայր Աթոռի միաբաններից՝ Գաբրիել արք. Այվազովսկի, Աբել Միսիթարյան, և Խորեն Ստեփանե վարդապետնե-

---

* Գեորգ Դ կաթողիկոսը հայտնի էր իբրև հմուտ ձայնագրագետ: Հայոց եկեղեցական շարականների և այլ հոգևոր երգերի բուն եղանակները անաղարտ և անայլայլակ պահվել էին, վերջին դարերի հալածանքների մեջ, առավելապես Կ. Պոլսի ավագ եկեղեցում, որտեղ խոնական և հոգևոր դպրապետների, դասապետների, ձայնապետների ղեկավարությամբ առանձին կազմված քաջաձայն դպիրների խումբեր կային: Ահա այստեղ է Գեորգ Դ-ն ձայնագրության մեջ յուր հմտությունը ձեռք բերում, որն ամենալայն օգտագործում և շահավետ ու արդյունավետ է դարձնում Մայր Աթոռում: **Ձայնագրյալ մեծ շարականի** առաջաբանում Վահրամ վարդապետ Մանկունին այդ առթիվ հետևյալ տողերն ունի նվիրած. «Այնմ աւասիկ հին և հարազատ և ընտիր յեղանակի երգեցողութեան աշակերտեալ գոլով, անդստին ի պատանեկան տիոց առ Աւագ եկեղեցեաւ մայրաքաղաքին, Վեհափառ Հայրապետ Ազգիս Տ. Տ. Գէորգ Դ, որ ի բնուստ անտի աստուածատուր ձրիւք և շնորհիւ քաջաձայն և քաղցրանուագ երաժշտութեան ճոխացեալ է, յօրէ անտի ամբառնալոյն իւրոյ յԱթոռ սրբոյ Լուսաւորչին, զամենայն փոյթ ի մտի կալեալ էր՝ զպատուականն զայն աւանդ ազգային եկեղեցական երգեցողութեան, զոր այնքանեաւ խնամով ուսեալն էր և անխառն պահպանեալ՝ ծանվալել յազգիս մերում, հաստատուն իմն կարգաւորութեամբ, և յայնպիսի առաջնորդել եկեղեցականացն մերոց ի շաւիղ արահետ, զի նախնականն այն և հարազատագոյն երգեցողութիւնն ոչ միայն վերականգնաղեալ բարգաւաճեսցէ առ մեզ, և յամենայն եկեղեցիս ազգիս, միօրինակ դաշնակաւորութեամբ գեղգեղեսցի, այլև անդրդուելի կանոնօք չափաւորեալ և սահմանեալ՝ զերծ մնասցէ գէթ այսուհետև ի վտանգէ այլևս ի խանգարումն գնալոյ կամ խոտորելոյ ի պէտպէս նորաձևութիւնս անհարազատս և օտարոտիս»: (**Ձայնագրեալ շարական հոգևոր երգոց...** Վաղարշապատ, 1875 յառաջաբան Դ):

Գեորգ Դ-ը իբրև խորաթափանց և շատ հեռատես մարդ, ձեռնարկելով այդ աննախընթաց, ծանր գործն, շատ լավ տեսնում էր, որ իրենից հետո էլ ժամանակը չպիտի ներնման տպագրություն անելը, ուստի և տասնյակ հազարներով է տպագրել եկեղեցական գրքերը: Գեորգ Դ-ի այս գործը յուր նմանը չունեցած մի մեծ գործ է, ափսոս որ ժամանակի կորստից նա ազատել է միայն Պոլսի ավագ եկեղեցու բուն եղանակները, իսկ Էջմիածնի շատ հին եղանակները, որ երգում էին յուր ժամանակին ուսանողներիս մեջ եղած լավ հոգևորականները, անուշադիր են մնացել և անհետանալու վրա են:

Ծանոթ.—Ա. Ե. Ս.

ը, Վահրամ վրդ. Մանկունի, Վահան վրդ. Բաստամյանը, Հուսիկ վրդ. Մովսիսյան և այլն:

Այսպիսով Գեորգ Դ կաթողիկոսի օրով ս. Էջմիածնում կուլտուր կրթական մի եռուն կյանք է սկսվում. Մի կողմից դպրոցական ցանցն է պատում երկիրը, մյուս կողմից սպասարանական գործն է ընդարձակվում և Էջմիածնի միաբանությունը ոչ միայն **Արարատ** պաշտոնական ամսագիրն է շարունակում հրատարակել կանոնավոր կերպով ամեն ամիս, ոչ միայն գիտության զանազան ճյուղերի վերաբերյալ գրքեր են լույս ընծայում, այլև այս միաբանների մեկը՝ գիտնական Վահան վարդապետ Բաստամյանը ղեկավարված մեծ կաթողիկոսի՝ Գեորգ Դ-ի օրինակով, **Գայանեի վանքում**, որի վանահայրն էր ինքը, 1874 թվին **առանձին տպարան է բաց անում**, որտեղ և նա **Դպրոց** անունով մանկավարժական ամսագիրն է սկսում հրատարակել, որով մեծապես զարկ է տալիս ազգային եկեղեցական դպրոցների զարգացմանն ու բարգավաճմանը: Նորա անսահման եռանդը և մտքի պաշարի հարստությունը նորանով է արտահայտվում, որ նա ոչ միայն այդ ամսագրի խմբագիրն էր, այլ գրում էր հոդվածներ, թարգմանում լրագրերից, ամսագրերից ու եվրոպական հանդեսներից և այլն և կանոնավոր հրատարակում ամսագիրը: Բաստամյանը հայտնի է մեր եկեղեցու պատմության մեջ նաև **Մխիթար Գոշի Դատաստանագիրք Հայոց**-ի յուր քաջահմուտ վերլուծական երկասիրությամբ*:

ԺԳ.

Գեորգ Դ կաթողիկոսի օրով Մայր Աթոռի տպարանը արդեն հաստատուն հիմքի վրա էր դրված: Հարկավոր էր ոչ միայն այդ դրությունը պահել, այլև հետզհետե հարստացնել տպարանը և ծաղկեցնել այնտեղ տպագրական արվեստը:

Մակար Ա կաթողիկոսը չնայած յուր կարճատև կաթողիկոսության, մեծ հոգատարությամբ զբաղված էր վանքի շենքերի և թե Մայր տաճարի վերանորոգությամբ: Դորա համար հայ ժողովուրդը յուր սրտաբուխ նվերներն էր ուղարկում: Բնականաբար կաթողիկոսը չէր կարող ուշադրություն չդարձնել նաև տպարանի վերա, որ հատուկ շենք չուներ. իսկ դպրոցների 1885 թվի վերաբացվելուց հետո ընդարձակ գործունեություն էր սկսվել, որը նույնպիսի լայն աշխատանք էր պահանջում նաև տպարանից. իսկ գոյություն ունեցող տպարանը դեռ շատ հեռու էր այդ պահանջներին բավարարություն տալուց:

* Ազգային եկեղեցական դպրոցների կյանքի մեջ **Դպրոց** ամսագրի կատարած դերի մասին Գ. Լևոնյանը յուր «Հայ պարբերական մամուլը» վերնագրով գրքի մեջ հետևյալ խորհրդածություններն է անում: «Դպրոցը», ասում է նա, յուր հարուստ ծրագրով, ծառայում էր յուր իսկական նպատակին: Այն հանգամանքներում, որ յուր ամսագիրն հրատարակում էր Հ. Բաստամյանը, այն տոկունությամբ, որ գործում էր վարդապետ խմբագիրը, դժվար թե մի որիշին հաջողվեր: Նա վառված էր յուր սուրբ նպատակով՝ «ձեռնատու լինել ազգային դպրոցների հառաջդիմության, ուղեցույց լինել վարժապետներին, տեսուչներին, հոգաբարձուներին... տալ աշակերտներին ընթերցարան, հարուստ զանազան օգտակար նյութերով»: Բաստամյանը անդադար գրում ու թարգմանում էր ընտիր հոդվածներ և տեղավորում «Դպրոցի» էջերում: «Դպրոցը» առաջինը եղավ, որ ծանոթացրեց հայ հասարակության մեր ազգային ծիսական ուսումնարանների ներքին կազմակերպության հետ, լիուլի ծանոթություններով: «Դպրոց»-ն էր, որ տալիս էր հայ ընթերցողներին դպրոցական հաշիվներ, վիճակագրական տեղեկություններ, ծանոթացնում էր գերմանական մանկավարժների կյանքերի հետ, գրում էր ուսուցչական ժողովների մասին, հետաքրքրվում էր ուսումնարանական-առողջապահական կանոններով, անում էր մանկավարժական դասախոսություններ...»: Գ. Լևոնյան. Հայոց պարբերական մամուլը... Աղեքսանդրպոլ, 1895 թ., էջ 354—355:

Դեռևս Մատթեոս Ա. կաթողիկոսը, կամենալով տպարանի համար նոր շենք շինել, Վաղարշապատի հին շուկայի տեղը այդ շենքի հիմն է ձգում, բայց յուր մահը արգելք է հանդիսանում գործը շարունակելուն:

Մակար կաթողիկոսը 1888 թվի մարտի 28-ին № 132 կոնդակն է տալիս Սինոդին, որով առաջարկում է պայման կապել ճարտարապետ Մ. Սալամբեկյանի հետ տպարանի համար նոր շենք կառուցանելու: Շենքի հիմքը ձգվում է Մայր տաճարի արևելյան կողմը, որի կառուցումը վերջանում է 1889 թվին և տպարանը յուր ամբողջ գույքով, ժառանգավորաց դպրոցին կից տնտեսատնից, վերջնականապես տեղափոխվում է նոր շենքը, որի մասին



Մխիթար Գոշ. Դատաստանագիրք հայոց.
Վաղարշապատ. 1880 թ.

Արարատում հետևյալն է գրված. «Տպարանի նոր շենքը քարուկրյա է: Հիմքը մի սաժենից ավելի գետնի խորության մեջ է ամրացած. արևելյան և արևմտյան կողմերից ունի մեծադիր մուտքեր և լուսամուտներ, որոնք զարդարված են ծաղկենկար փորվածքներով: Այս շինության երկայնությունն է հյուսիսից հարավ 51 արշին մի քառորդ, լայնությունը՝ 24½ արշին արևմուտքից արևելք: Բարձրությունը՝ 11 արշին: Այս շինության մեջ գետեղվում են տպարանի հետևյալ մասերը. 1) գրաշարանոց, 2) տպարան, 3) թուղթ թրջելու սենյակ, 4) ձուլարան, 5) սորա ամբարանոցը, 6) տպարանական ժողովի խորհրդարանն ու գրասենյակը, 7) գրադարան և 8) ընդարձակ նախագավիթ արևմուտքից արևելք ընկած»*:

* «Արարատ», 1889 Դ, էջ 236:

Տպարանն արդեն ուներ իր նոր շենքը, բայց եղած մեքենաներն անկարող էին պահանջներին բավարարություն տալու: Ուստի և տպարանի գործունեությունը ավելի արդյունավորելու համար Մակար կաթողիկոսը Գերմանիայից բերել է տալիս «Augsburg»-ի արագատիպ № 7 մեծ մեքենա, կազմատան համար բերել է տալիս մի հատ ճնշիչ մեքենա կազմերի համար:

Այնուհետև Մայր Աթոռի տպարանը ավելի ծաղկեց, հարստացավ և յուր գործունեությունն ընդարձակեց Խրիմյան Հայրիկ կաթողիկոսի օրով:

Տպարանը այդ ժամանակ որոշ չափով արդյունաբերական հաստատություն էր դարձել: Այնտեղ վաճառվում էին հրատարակված գրքերը, ինչպես նաև **Արարատ** ամսագիրն ու **օրացույց**ները ամեն տարվա: Սակայն, դրամների գանձումն ու հաշիվների պահպանումն կենտրոնացված էր Սինոդում: Տպարանը միայն արտադրում էր, բայց երբեք չգիտեր թե որքան արդյունք է տալիս Մայր Աթոռին և արդյոք վնա՞ս է տալիս, թե օգուտ: Ուստի և թե՛ տպարանի վերահսկողությունն ավելացնելու և կառավարական մասն ուժեղացնելու, թե՛ հաշվարարական մասը կանոնավորելու և հաստատուն հիմքերի վրա դնելու համար Խրիմյան Հայրիկը 1895 թվի փետրվարի 4-ին № 115 հետևյալ կոնդակն է տալիս տպարանական ժողովի նախագահ Արիստակես եպիսկոպոսին:

«Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի... նախագահի տպարանին Մայր Աթոռոյ Գեր. Տ. Արիստակէս եպիսկոպոսի Դաւթեան հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ, ողջոյն և օրհնութիւն.

Քանիցս անգամ ի կողմանէ ձերդ սրբազնութեան խնդիր մատուցաւ մեզ, որով յայտ առնէիք թէ վարչական գործառնութիւնք տպարանին Մայր Աթոռոյ, միայն ի վերայ ձեր ծանրացեալ կայ, չլինելով ձեզ այլ գործակիցս և օժանդակ անդամս: Ի նկատի առեալ զի խնդիրն ձեր կարևոր է և հայի ի բարւոք տնտեսութիւն և յառաջադիմութիւն տպարանին Մայր Աթոռոյ, արժան դատեցաք, այսու հայրապետական կոնդակաւ կարգել ձեզ ի գործակիցս և անդամս զտէր Կոմիտաս և զԵզնիկ նորընծա աբեղայս, որովք կարող լինիջիք յետ այսու ըստ օրինի կազմել դիւան յանուն վարչութեան տպարանի խորհրդով և համաձայնութեամբ նորընտիր անդամոցդ և վարել զամենայն գործս, որք վերաբերին առանձին տեսչութեան տպարանին:

Հարկ համարիմք տալ ձեզ զհետևեալ հրահանգս. նախ ի նկատի առեալ զի տեսչութիւն տպարանին մինչև ցայժմ միայն զելիցն հաշիւս կազմելով մատուցանէր ի Սինոդն, զեկուցեալ ի նմին միայն զքանակութիւն զանազան գրեանց արտադրելոց ի մամուլէն, որ ի վանառ յղեալ են յայլ և այլ վիճակս առ կոնսիստորիայս, առ հոգևոր կառավարութիւնս և կամ առ մասնաւոր անձինս, և այնուհետև ինքն ազատ մնայր ի գանձելոյ զգինս վաճառեալ գրեանց դա նման է առն, որ աշխատ լինի ի վաստակել, այլ չէ հետամուտ ասի գիտել թէ որչափ իցէ շահ վաստակոց իւրոց: Ուղղութիւնս այս կարի դժուարին և անկանոն է և միանգամայն անբնական և հակառակ հաշուական օրինաց, թող զի զբաղմունս յաւելու ի վերայ զբաղմանց Սինոդին, առ ի գանձել զգումարս վաճառեալ գրեանց կազմեալ և առ այն հատուկ թղթակցութիւնս յանախապէս գրել և պահանջել, միայն ի դժուարին դէպս դիմել առ Սինոդն առ ի գանձել զապառիկսն:

Վասն որոյ հարկ դատեցաք կարգադրել զի տեսչութիւն տպարանիդ առցէ ի վերայ իւր և զայս մասն հաշուական և ինքն իսկապէս լիցի պատասխանատու ելից և մտից տպարանի միանգամայն յամենայն ամսագլուխս կազմեալ զհաշիւ մատուցանիցէ ի Սինոդն ցուցեալ ի նմին զվիճակ ելից և

մտից տպարանին, որ ուղիղ և լաւագոյն իսկ է և զգանձեալ գումարս որչափ և իցէ առ վարչութիւնդ պարտիք զայնս յանձնել գանձապահի Մայր Աթոռոյ և անտի ստանալ զվարձս գործաւորաց և զայլ կարևոր ծախս տպարանին:

Երկրորդ. Առ ի բարւոք կառավարել և պահել կարգս ուղղութեան և ճշտութեան, թէ՛ ի վարչական, թէ՛ ի տնտեսական գործս տպարանին Մայր Աթոռոյ, որ այժմ միայն ունի զիւր սոսկ հոչակ, Տեսչութիւնդ փոյթ ունիցի կազմել զմի համառոտագիծ կանոնագիր և ի նմին ճշտել զպաշտօն գործաւարաց յորոց ամենեցուն վերահսկող և պատասխանատու ճանաչի Տեսչու-

ԶԱՅՆՔԱՂ

ՔԸՐԿՈՆ

1888-ՌՈՒԼ

Զայնքաղ շարական. Վաղարշապատ, 1888 թ.

թիւնդ, եթէ լինիցի ի նոսա զեղծումն և գտանիցին ծոյլ և անփոյթս ի գործս աշխատութեան: Օգտակար և շահաւէտ իսկ է թէ՛ շահուց տպարանին և թէ՛ գրաշար գործաւորաց, եթէ գործն կապալաւ տուեալ մղիցէք զնոսա յաշխատութիւն: Զնոյն կարգադրութիւն պարտ է առնել և վասն ձուլարանին: Առ այժմս բաւ համարեալ այսչափ միայն հրահանգս՝ վստահ եմք զի Տեսչութիւնդ առաւել ևս խորհելով քան զտուեալ հրահանգս ևս առաւել ի լաւագոյն բարեկարգութեան վերածիցէք զվիճակ տպարանին Մայր Աթոռոյ: Աղօթեմք զի կարող լինիջիք և յաջողեսցէ Տէր Աստուած զգործս ձեռաց ձերոց ամենայն ուղղութեամբ և հաւատարմութեամբ յառաջ վարեալ պաշտօն ձեր, իսկապէս օգտակար և յառաջադիմութեան կացուցանիցէք առաջի ազգին զհամբաւ տպարանին Մայր Աթոռոյ բարեզարդ գործովք և ճոխ հրատարակութեամբ իւրով:

Ողջ լերուք զօրացեալ Տէրամբ. ամէն»[35]:

ԺԸ դարի երկրորդ կեսից սկսած Մայր Աթոռում տպագրության սկիզբն

լ դրվում և հետզհետե գրքեր են լույս տեսնում, բնականաբար տպարանում առաջին քանակությամբ տպագրված գրքեր պիտի հավաքված լինեին: Հարկավոր էր այդ հրատարակությունները կարգավորել, ցուցակներ կազմել, թե որքա՞ն է ուղարկված վաճառելու և որքա՞ն է մնացել և այլն: Այդ աշխատանքը կատարելու համար 1896 թվի հունվարի 19-ի № 85 հանուն տ. Արիստակես եպիսկոպոս Դավթյանի տված կոնդակով, տպարանական ժողովի նոր անդամներ է նշանակում Նահապետ վրդ. Նահապետյանին, Եղիա վրդ. Հասան Ջալալյանին, Ղուկաս սրկ. Աղավելյանին և Նիկողայոս Քարամյանին: Այդ կոնդակում գրում է նաև.

«Յետ կազմելոյ զվարչական ատեան տպարանական, նախապէս պարտ է կազմել և ի գիր առնուլ զամենայն հաշիւս ընդհանուր գործառնութեանց տպարանին, նախ տպագրութեամբ արտատպեալ զհամայն գրեանս ըստ իւրաքանչիւր տեսակացն. երկրորդ. կազմել ցուցակ ամենայն գոյից և կարասեաց տպարանին, սկսեալ ի մամլոյն, պատրաստի թուղթք շտեմարանին զամենատեսակ զմայր ձուլարանին, զծաղկագիրս և այլն ամենայն իւր պարագայիւք, որպէսզի ի նկատի առեալ տեսցուք թէ զինչ իցեն հին և նոր, նախ առ ի պահպանել զայնս անկորուստ և երկրորդ առ ի լրացուցանել հետզհետէ զթերի մասունս...: Վստահ եմք ի ձեզ և ի վերայ կարգեալ անդամոց և հաւատամք զի յայս նուագ վարչութիւն տպարանիդ, ամենայն անձնուիրութեամբ ջանադիր լինիցի ըստ ամենայնի բարեկարգել և յառաջադէմ և նախանձելի կացուցանել զտպարան Մայր Աթոռոյս, որով հնար լինիցի մեզ ի հարիւրաւոր ձեռագրաց Աստուածաշունչ գրեանց մատենադարանին տպագրել զԱստուածաշունչ գիրս, որոյ ճակատ մակագրեալ լինի ի տպարանի ս. Էջմիածնի ընդ հովանեաւ Մայր Աթոռոյ»[36]:

Նույն կոնդակով Խրիմյան Հայրիկ կաթողիկոսը պատվիրում է տպարանի վարչությանը տպարանի համար կանոնադրության նոր նախագիծ կազմել:

Նույն 1896 թվի հունվարի 26-ի № 131 կոնդակով կաթողիկոսը փոխում է տպարանական ժողովի կազմը: Նախագահ տ. Արիստակես եպիսկոպոսի հրաժարվելովը, տպարանի նոր տեսուչ է նշանակում տ. Նահապետ վրդ. Նահապետյանին և անդամ է կարգում Եղիա և Բենիկ վարդապետներին, Ղուկաս սարկավագին և ճեմարանի տեսչի օգնական տ. Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանին և Նիկողայոս Քարամյանին, կրկնելով յուր թ. 85 կոնդակի իմաստը, Աստվածաշունչ գրքի տպագրության վերաբերությամբ, նաև տպարանի գույքը ցուցակագրելու և նոր կանոնագիր կազմելու[37]:

Սույն կարգադրության մասին կաթողիկոսը հայտնում է նաև ս. Սինոդին թ. 132 կոնդակով[38]:

Տպագրության գյուտից հետո Աստվածաշունչ ս. Գիրքը առաջին անգամ լույս էր տեսել Ոսկան վարդապետ Երևանցու ձեռքով Ամստերդամ քաղաքում: Այնուհետև Մայր Աթոռի անվամբ եղած տպարաններից ս. Գիրքը լույս չէր տեսել նոր հրատարակությամբ*: Խրիմյան Հայրիկը մտածում է Մայր Աթոռի մատենադարանում գտնված բազմաթիվ ձեռագիրների համեմատությամբ նոր հրատարակություն կատարել տալ, որը պիտի լիներ մի գեղեցիկ ու հոյակապ գործ և Մայր Աթոռին պատիվ բերող ձեռնարկություն: Ձեռագիր-

* Տես. «Մշակ» լրագիրը 1893 թվի № 23-ում հաղորդում է թե 1856 թվին Էջմիածնի միաբան Սալլաթյան Միքայել եպիսկոպոսը թույլատրել է «Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանության հրատարակությունը»: Անհայտ է, թե այդ ի՞նչ թարգմանություն է, ով է թարգմանողը և ինչո՞ւ չէ հրատարակվել: (Ա. Ե. Ս.):

ների համեմատությունը հանձնում է ճեմարանի տեսչի օգնական աստվածաբանության լիցենցիատ և փիլիսոփայության դոկտոր, հանգուցյալ տ. Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանին (հետո եպիսկոպոս), որը և ճեմարանի

«Արարատ»-ի 1896 թ. տիտղոսաթերթը

բարձր լսարանների սաների օգնությամբ եռանդուն կերպով սկսեց այդ մեծ և պատասխանատու աշխատանքը կատարել և Աստվածաշունչ ս. Գիրքը բազմաթիվ ձեռագիրների համեմատությամբ տպագրության համար պատրաստել։

Սակայն Աստվածաշնչի նման մի ծանր հրատարակություն կատարելու համար տպարանը շատ պակասություն ուներ: Որպեսզի տպարանը հարընտացնի տպագրական գործի, հատկապես Աստվածաշունչը տպագրելու վերաբերյալ հարկավոր գործիքներով, Խրիմյան Հայրիկը Թիֆլիսի Ավագ եկեղեցու միաբան Գյուտ քահանա Աղանյանին գործուղում է արտասահման նոր մեքենա և այլ պարագայք գնելու: Այս առթիվ կաթողիկոսը Թիֆլիսի առաջնորդ տ. Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանին 1896 թվի մարտի 14-ին № 368 հետևյալ կոնդակն է ուղարկում.

«Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի... գերապատիւ թեմական Վրաստանի և Իմերէթի տ. Գէորգ արքեպիսկոպոսի հարազատի Մայր Աթոռոյս Հայրապետական օրհնութեամբ ծանուցանեմք: Յաղագս անհրաժեշտ գործոց և բարեկարգութեան տպարանի Մայր Աթոռոյս կոչեցաք ի ս. Էջմիածին զմիաբան վանուց Մայր եկեղեցւոյ քաղաքիդ զարժանապատիւ Գիւտ քահանան Աղանեանց, որ եկեալ աստ յընթացս քսանից աւուրց զնեաց զտպարան Մայր Աթոռոյս և պատրաստեալ զտեղեկագիր բարեկարգութեան և անհրաժեշտ մեքենայից և գործեացն, մատոյց Մեզ ի տես և ի տնօրէնութիւն:

Հաւան գտեալ Մեր ընդ մատուցեալ դիտողութիւնս և յանհրաժեշտութիւն մեքենայից և պիտոյից, որք հային ի բարւոք յառաջադիմութիւն տպարանի մերոյ՝ արժան վարկաք առաքել զնոյն ինքն տ. Գիւտ քահանայն յարտասահման, վասն գնելոյ զհարկաւորեալ մեքենայս և զպատկանելութիւնս: Վասն որոյ սովին Հայրապետական կոնդակաւ պատուիրեմք գերապատուութեանդ ի ձեռն վիճակիդ կոնսիստորիայի տեղւոյդ, տալ հանել նմա զպատշաճաւոր արտասահմանեան անցագիր զի ի հրամայելն Մեր նմա՝ ուղևորեսցի ի կատարումն պատուիրանի մերոյ:...

Զայսմ տնօրէնութենէ Մերմէ առանձին կոնդակաւ ազդարարեալ եմք և յիշեալ տ. Գիւտ քահանային: Ողջ լերուք զօրացեալ...»[39]:

Նույն օրը տ. Գյուտ քահանայի անունով կաթողիկոսն արձակում է № 369 հետևյալ կոնդակը, որի մեջ միառմի առաջ է բերում թե ի՞նչ պիտի գնի արտասահմանում.

«Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի... Ցակնարկեալ ի հայտարարութիւն ձեր յ9-ն ամսոյս հանդերձ ներփակ տեղեկագրովք, զորս պատուիրեալ էաք ձեզ վասն անհրաժեշտ կարեաց տպարանի Մայր Աթոռոյս ի բարգաւաճումն և ի յառաջադիմութիւն նորին, հաւան գտաք ընդ այնս: Վասն որոյ այսու կոնդակաւ Մերով պատուիրեմք ձեզ պատրաստ գտանել զի յետ աւուրց Զատկի ուղևորեսջիք յարտասահման ի քաղաքս Եվրոպիոյ ի գնել անտի վասն տպարանի մերոյ՝ ա) զմի արագատիպ մեքենա, բ) զմի ձուլիչ մեքենա ի նորագոյն տեսակաց, գ) զմի գազմոտոր (շարժիչ մեքենա), դ) զմի կտրիչ մեքենա, ե) զմի մամուլ վասն սրբագրութեանց նորագոյն տեսակի և զմի ձեռք մայրք 12 աստիճան տառից և պատշաճ եղանակաւ և անկորուստ հասուցեալ աստ առ Մեզ: Ընդարձակեմք ձեզ զիրաւունս վարձել անդ զմի հմուտ տպարանագէտ գերմանացի, միամեայ ժամանակաւ, ընդ որում և դու եկեալ ի ս. Աթոռս, տայցես Մեզ զհամար գործողութեանդ...»[40]:

Այս առթիվ նույն թվի մայիսի 17-ին № 764 հետևյալ կոնդակն է տալիս ս. Սինոդին՝ բացատրելով Աստվածաշունչ ս. Գրքի տպագրության արժեքն և դորա համար մեքենաներ ձեռք բերելու անհրաժեշտությունը.

«Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի... Սինոդի ս. Էջմիածնի:

Կարի քաջ յայտնի է սրբազան Սինոդիդ թէ տպարան Մայր Աթոռոյս բան զամէն պարտիս, մի գերագոյն և անհրաժեշտ պարտս ունի առ Հայաս-

տանեայց եկեղեցին, այն է զԱստուածաշունչ գիրս տպագրելով զյաւիտենական աստուածային բան իբրև հաց մատակարարել որդւոց եկեղեցւոյ: Աւա՜ղ, զի այս անհրաժեշտ պարտք անվճար մնացեալ է յօրէ անտի մինչ հաստատեալ է մամուլ տպարանական ի ս. Էջմիածին:

Այժմ հաստատապէս ունիմք մտադրութիւն համաձայնութեամբ սրբազան Սինոդիդ վճարել զայս պարտիս և ի սկիզբն յառաջիկայ տարւոյն ձեռնարկել տպագրութեան Աստուածաշունչ սուրբ Գրոց առ որ այժմէն իսկ հոգալ ունիմք ի գործ դնել զնախապատրաստական միջոցս:

Մ. ԱՔԵՂԵԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆՇԵՑՈՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԷՋ

ԲԱՆԵՑԱԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

1901

Մ. Աքեղյան. Հայ ժողովրդական առասպելներ.
Վաղարշապատ, 1901 թ.

Եւ քանզի առ այս նախապէս պէտս ունիմք մի քանի կարևորն տպարանական գործեաց, զորս ի ձեռս բերել յանձնարարեալ եմք արժանապատիւ տ. Գիւտ քահանային Տփղեաց, և առ այս պիտոյ է հինգէն մինչև վեց հազար ռուբլի գումար, վստահ եմք զի համաձայնութիւն լինիցի ընդ մէջ Սինոդիդ կարգադրել հատկացուցանել զայն մասն թողեալ գումարացն հանգուցեալ տ. Գրիգորիս եպիսկոպոսի Աղուանեան, որ կայ այժմ ի դրամատան «Մութաֆեան» առ ի գնել զգործիս տպագրութեան:

Ուստի, պատուիրեմք Սինոդիդ հրամայել կոնսիստորիային Տփղեաց ստանալ զգումարն ի դրամատնէն «Մութաֆեան» հանդերձ տոկոսիւք և յանձնել զմուրհակն. ի սոյն գումարէն առայժմ տալ Գիւտ քահանային միայն հինգ հազար (5000 ր.) ռուբլիս, և զմնացեալ գումարն թողուլ դարձեալ առ «Մութաֆեան» որպէս աւանդ, զի ի հարկաւորեալ ժամանակին դիւրութեամբ փոխադրեսցի այլուր»[41];

Տ. Գյուտ քահանան ստանալով հինգ հազար ռուբլին ուղևորվում է արտասահման, գնում է հարկավոր մեքենաները, վերադառնում է Էջմիածին և հաշիվ ներկայացնում կատարածի մասին Խրիմյան Հայրիկին, որ քննելով ամենատեսակ ծախքերի փաստաթղթերը և վավերացնելով, ուղարկում է Սինոդին 1896 թվի հոկտեմբերի 25-ին № 1432 հետևյալ կոնդակով.

«Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի ... Սինոդի ս. Էջմիածնի յայտ առնեմք կոնդակաւ Մերով թ. 764 ի 17 մայիսի այսր ամի յայտնեալ էաք Սինոդիդ զկարևորութենէ նորանոր ծախուց և մեքենայից տպարանի Մայր Աթոռոյս յաղագս տպագրութեան Աստուածաշունչ ս. Գրոց և առ այն իսկ պատուիրեալ էաք Սինոդիդ կարգադրել առ կոնսիստորիայն Տփղեաց յանձն առնել միաբանի վանաց Մայր եկեղեցւոյ նոյն քաղաքի տ. Գիւտ քահանայի Աղանեանց 5000 ռուբլիս ի դրամոց Աղուանեան հանգուցեալ սրբազանի, որ մնայր առ պ. Կարապետ Մութաֆեան, ասկս գնելոյ զկարևոր մեքենայս յարտասահմանէ, որում յանձնարարեալ էաք երթալ և գնել: Զարդիս վերադարձեալ տ. Գիւտ քահանային յարտասահմանէ՝ մատոյց Մեզ զմանրամասն հաշիւ գործողութեանց իւրոց և գնեալ մեքենայից, յակնարկեալ Մեր ի հաշիւսն յայնոսիկ և քննեալ մանրամասն զամենայն ապացուցաթուղթս և զստացականս, գտաք զայնս ըստ ամենայնի ճիշտ և օրինաւոր, զորս և վաւերացուցեալ անհապաղ առաքեմք ընդ կոնդակիս ի Սինոդդ, պատուիրելով վերստին հրամանագրել կոնսիստորիային Տփղեաց ստանալ ի պ. Կարապետէ Մութաֆեանց զառ ինքն գտանեցեալ զմնացեալ ամբողջ գումարն Աղուանեանց եպիսկոպոսի և յանձն առնել զայն լիովին տ. Գիւտ քահանային, զի վճարեսցէ մնացեալ գինս գնեալ մեքենայից և զճանապարհածախսն նոցին ցսուրբ Էջմիածին»[42]:

Արտասահմանից հետզհետե ստացվում են մեքենաները, որոնց համար հարկավոր էր մեծ մաքս վճարել: Խրիմյան Հայրիկը չկամենալով Մայր Աթոռի աղքատիկ գանձարանի վերա ծանրանալ, 1896 թվի հոկտեմբերի 30-ին թ. 1462 հետևյալ կոնդակով տ. Գյուտ քահանային ուղարկում է Աղեքսանդր Մանթաշյանի մոտ, խնդրելով և օրհնելով նրան, որ նա հանձն առնի վճարել մեքենաների համար պահանջված ճանապարհածախսը և մաքսը:

«Մկրտիչ ծառա Հիսուսի Քրիստոսի... Գերազնիվ պ. Աղեքսանդր Մանթաշյան, բարեպաշտ սիրելի Մեր, կոնդակս կմատուցանեն ձեր սիրելիության արժանապատիվ տ. Գյուտ քահանան, որ նա ինքն անձամբ պիտի պատմե ձեզ թե ինչպես Մեր հրամանալ հԵվրոպա ուղևորվելով ըստ Մեր հանձնարարության գնած է զանազան տեսակ մեքենաներ Մայր Աթոռի տպարանի համար: Այժմ այդ գնված մեքենաների մի մասը հասած է ի Պաթում, ուր պիտի գնա տ. Գյուտ քահանայն մաքսեն հանելու: Հայտնեմ ձեր ազնվության, որ գնված մեքենաներու արժեքը հասած է մինչև ութ հազար ռուբլու: Մաքսատան այս գործը կարգադրելու համար բոլորովին ձեր ազնվամտության խնամոց կհանձնեմ: Դուք հիշում եք և չեք կարող մոռնալ, որ Հայրիկ՝ Մանթաշյանի հարստության իններորդ ժառանգորդն է: Ուստի այս անգամ փոքրիկ բաժին մի խնդրում եմ ձեզմե հանուն Մայր Աթոռի տպարանին և կհավատամ, որ ձեր շնորհիվ մեքենաները մաքսեն հանվելով կհասնին ս. Էջմիածին և ես կօրհնեմ զձեզ և ձեր բարեճոխ գերդաստանը և մնալով միշտ աղոթարար...»[43]:

Շնորհիվ Ա. Մանթաշյանի առատաձեռն նվիրատվության, մեքենաներն հանվում են մաքսատնից և Էջմիածին ուղարկվում: Այնուհետև Մայր Աթոռի տպարանի կյանքն ու գործունեությունը հիմնովին փոխվում է, նոր կերպարանք է ստանում ձեռք բերած նոր մեքենաների շնորհիվ, որոնք եվրոպական

տպարանների հառաջադիմությունները պիտի մտցնեին նաև Մայր Աթոռի տպարանում: Նախ մեքենաների բաժինը հարստանում է Konig 8 Boaer-ի (Kloster obersel bei Würzburg № 5170) արագատիպ և մի հատ «Ամերիկանկա» կոչված մեքենաներով:

Երկրորդ. մինչև այդ ժամանակ տպարանի մեքենաներն աշխատում էին մարդկային ձեռքի ուժով, դորա համար հատուկ բանվորներ կային, որոնք երկու երկու փոխ առ փոխ մեքենայի մեծ անիվը պտտեցնում էին: Խրիմյան Հայրիկի օրով 1896 թվին առաջին անգամ բերվեց «Otto Veir»-ի նավթի շարժիչ մեքենան (газамотор) և Մայր Աթոռի տպարանը սկսեց օգտագործել


ՀԱՅՈՑ
ՆՈՐ ՎԿԱՆԵՐԸ
(ժողովրդական հրատարակություն)
ՀԱՏՈՐ Հ.
(1155—1485)
Հրատարակեցին
Ն. Ա. ՄԵԼՔՈՆԻ Ա.
Վանական և Պերգամենական Կաթուղիկոսի
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Հոգաբարձին
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆՑ ԵՒ Հ. ՊՈՍՈՅԵԱՆՑ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1901

Հայոց նոր վկաներ. Վաղարշապատ. 1901 թ.

գազամոտորի ուժը տպարանի բոլոր մասերում: Գազամոտորով ոչ միայն բոլոր մեքենաներն սկսեցին աշխատել, այլ կարճ ժամանակ անց հատուկ ջրամբարներ պատրաստվեցին, որտեղից մոտորի ուժով ջուր էր հանվում և դեպի Գայանեի վանքի առաջի հողերը մղվում՝ պարտեզն ու բանջարանոցներն ոռոգելու համար: Միևնույն ժամանակ գազամոտորը էլեկտրական լույս էր մատակարարում վանական բոլոր հաստատություններին՝ ճեմարանին, հրապարակներին:

Երրորդ՝ Մայր Աթոռի տպարանը միշտ էլ ունեցել է յուր հատուկ ձուլարանը:

Մատթեոս Ա կաթողիկոսի օրով տառերը ձուլում էին ձեռքի ֆորմայով: Այդ ֆորմաները 150 տարվա հնություն ունեին, որոնք գործ են ածվել տպա-

ռանում մինչև Մատթեոս Ա-ն: Գործիքը կազմված էր մի հնոցից. արձիճը հալում էին և հնոցի չորս կողմը նստած վարպետները ձուլում էին տառերը:

ԺԹ դարում տպարանի ձուլարանի հին վարպետ եղել է վաղարշապատցի տիրացու Հարությունը, իսկ փորագրող եղել է Մկրտիչ եպս. Շողոթեցին: Նորանից հետո եղել է նույն տեղացի Վլասը: Իսկ վերջինից հետո տպարանի ձուլարանի վարպետ է եղել վաղարշապատցի Վարդան Բունիաթյանը, որը փորագրություններ էլ է կատարելիս եղել:

Այդ ժամանակ նորա մոտ նույն արհեստը սովորելիս է եղել յուր որդի Ցագորը: Վերջինս գնում է Թիֆլիս ձուլարանի արհեստը այն ժամանակ հայտնի «Մատերի» մոտ կատարելագործելու: Գեորգ Դ կաթողիկոսի օրով Ցագորին հրավիրում են Էջմիածնի տպարանում աշխատելու: Ցագորը ձուլարանի վարպետ է մնում մինչև Հայաստանի խորհրդայնացումը յուր երկու օգնական՝ Վաղարշակ և Ալեքսան եղբայրների հետ, որոնք աշխատում էին նորա ձեռքի տակ իբրև ձուլիչներ:

Գեորգ Դ կաթողիկոսի օրերը տպարանի ձուլարանում եղել է ձուլելու երկու տախտականի մեքենա: Ինքն է բերել տալիս տառեր ձուլող մի նոր մեքենա, որից պատրաստի տառեր ստանալու համար բավական ժամանակ էր հարկավոր: Ցագորը կարգի է բերում մեքենաները և սկսում է տառեր ձուլել և փորագրել նաև շիմշատ փայտի վերա, ինչպես և ամեն տեսակ նկարներ փորագրել:

Տպարանի ձուլարանի աշխատանքներն այդպես շարունակվեցին մինչև Խրիմյան Հայրիկի օրերը, երբ նա Լայպցիգից բերել տվեց «Küstermann»-ի տառեր ձուլող մեծ մեքենան, որը մեկ ժամում տալիս էր 8—10.000 պատրաստի տառ: Դժբախտաբար այս մեքենայի վառարանը շուտ փչացավ և պակասում էին նաև ինչ որ մասեր: Թիֆլիսից ու Բագվից հրավիրված վարպետներն էլ չկարողացան հասկանալ թե ինչ է պակաս և ոչ էլ կարողացան վառարանը նորոգել: Ուստի և մեքենան մի քանի ամիս աշխատելուց հետո վերջը մնաց անգործադրելի*:

Տպարանն ուներ նաև տառերը հավասարեցնող մեքենա, որը նույնպես յուր տեսակի մեջ հնություն է ներկայացնում:

Փափազյանը յուր տեսչության օրով աշխատում է և տպարանում բացում է նաև ցինկոգրաֆիա: Սորա գործունեությունը ևս կարճատև է լինում:

Չորրորդ. Տպարանի կազմարարական մասն էլ Խրիմյան Հայրիկի օրով հարստանում է արտասահմանից ստացած «Karl Krausei»-ի կտրիչ մեծ մեքենայով: Ձեռք են բերվում ոսկեզօծելու մեծ և փոքր մեքենաներ, նաև կարտոն կտրելու մեծ մեքենա, որոնցից մեծ մասը գործառնության մեջ էին դրվում գազամոտորի ուժով:

Հինգերորդ. Գրաշարանոցը ևս հարստանում է եվրոպական բոլոր ազգերի նոր տեսակի տառերով: Այստեղ կային՝ հայերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, հունարեն, արաբական, հրեական, ինտերնացիոնալ, ասորական լեզուների տառերը:

Այսպիսով ԺԹ դարի վերջին տարիներին Մայր Աթոռի տպարանը յուր գործունեության գագաթնակետին հասավ: Յուր հարստությամբ, որ ձեռք բերեց տպարանը վերջին մի քանի տարիների ընթացքում, և որ տպագրական գործի մեջ Մայր Աթոռի տպարանը համարվում էր առաջինը ամբողջ Կովկասում:

* Հայաստանի խորհրդայնացումից հետո «Küstermann»-ի մեքենան, ձուլարանի հին հնոցը, Ռսկան վարդապետի «մայրերը» Հայաստանի իշխանությունը տեղափոխեց Երևան:

Այնուհետև Մայր Աթոռի տպարանի համար եռանդուն գործունեություն էր սկսվում: Այս շրջանում տպարանի ամբողջ հսկողության գլուխ և տպագրական գործի ղեկավարողն էր վարպետ Ղևոնդ Ղարախանյանը, որ յուր գործին մի շատ հմուտ, եռանդով լի գործող երիտասարդ անձնավորություն էր: Բոլոր հին և նոր մեքենաները քանդող, սարքող հավաքողը, տպագրական գործին արտաքուստ և ներքուստ գեղեցիկ ու շքեղ տեսք տվողը և տպագրական գործի մեջ ճաշակ մտցնողը նա էր*:

* 1923 թվին լրացավ վարպետ Ղևոնդ Ղարախանյանի մեքենավարական, մեքենագիտական և տպարանական գործունեության 35-ամյակը: Այդ ժամանակ նա Խ. Հ. Լուսժողկոմատի Վաղարշապատի տպարանի (նախկին Էջմիածնի) մեքենավարն էր: Տպարանի բանվորներից կազմված հոբելյանական հանձնաժողովը շքեղ կերպով տոնեց ու կատարեց վարպետ Ղևոնդի 35-ամյա հոբելյանը:

Անհետաքրքիր չէ առաջ բերել այստեղ մի համառոտ պատկեր Մայր Աթոռի տպարանի ԺԹ դարի վերջին ունեցած բանվորների կյանքից, թե ի՞նչ աշխատավորներ ուներ տպարանը, ինչպե՞ս էր աշխատեցնում, ինչպե՞ս վարձատրում և ի՞նչ օգնություն հասցնում յուր բանվոր աշխատավորներին:

Մայր Աթոռի տպարանը ամենից շատ բանվորներ ունեցել է 1894 թվին, որ հետզհետե ավելացել է մինչև 1915 թվականը, որից հետո զգալի կերպով պակասում է: Այդ շրջանում բանվորությունը կազմված է լինում հետևյալ բաժանմունքների աշխատավորներից, որը փոփոխության էր ենթարկվում:

1.—ա. գրաշար և գրաշարի աշակերտներ	մոտ	16 հոգի
բ. Տպագրիչներ և աշակերտներ	»	9 »
գ. կազմարար և աշակերտներ	»	8 »
դ. ձուլիչ և աշակերտներ	»	5 »
ե. մրազուրկ և ծառայողներ	»	5 »
զ. վարպետ		1 »
		Բոլորը՝ 44 հոգի
է. 1 քարտուղար		1
		Բոլորը՝ 45 հոգի

2.—Տպարանի բանվորներից՝

ա. գրաշարները ստանում էին ամսական 30—40 ռուբլի և օրական երեք ֆունտ հաց:

բ. Սոցա աշակերտները ստանում էին կատարած աշխատանքի համեմատ 5—15 ռուբլի և օրական երեք ֆունտ հաց:

գ. Կազմարարներն ստանում էին 25—30 ռուբլի և օրական երեք ֆունտ հաց:

դ. Դոցա աշակերտները ստանում էին 5—15 ռուբլի և օրական երեք ֆունտ հաց:

ե. Ձուլիչ վարպետն ստանում էր ամսական 40 ռուբլի և յուրաքանչյուրը երեք ֆունտ հաց:

զ. Տպարանի վարպետն ստանում էր սկզբում ամսական 60 ռուբլի և երեք ֆունտ հաց: Հետո ռոճիկը բարձրացավ հարյուր ռուբլու՝ որպես ամբողջ տպարանի գործառնության հսկիչ և մեքենավար, երբ էլեկտրականություն մտցրին տպարանում 1907 թ.: 1908 թվից տպարանի բանվորները իրենց ռոճիկը ստանում էին կատարած աշխատանքի չափով (հաշվում էին շարված տառերը, տպագրությունը և այլն):

3.—Բանվորներն իրենց ռոճիկի դիմաց աժան գնով շատ անգամ վանքից ստանում էին սերմացու ցորեն, կամ այլ մթերք:

4.—Բանվորներից նոքա, ովքեր դիմել են և այգետեղ կամ տնատեղ են խնդրել վանքից՝ նոքա էլ ստացել են ձրիապես: Վանքը միևնույն ժամանակ ամեն տեսակ աջակցություն ցույց է տվել բանվորներին՝ նոցա սկսած շենքերը վերջացնելու համար:

5.—Տպարանի բանվորները իրենց տնտեսական դրությամբ միշտ էլ գոհ են եղել վանքից: Նոցա տնտեսականը գոհացուցիչ և բարձր է եղել: Նոքա գոհ են եղել իրենց ստացած ռոճիկով: Եվ եթե երբ և իցէ այդ հողի վերա խնդիր է ծագել, տպարանի տեսչի միջոցով դիմել են Բարձր հոգևոր իշխանության և բավարարություն ստացել: Այս բոլորի ապացույցն այն է, որ տպարանի ծառայողները ոչ միայն կարողացել են ապրել, ընտանիք պահել, այլև տներ շինել և զավակներին միջնակարգ կամ ճեմարանական կրթություն տալ: Բանվորները և նրանց ընտանիքները բժշկական օգնություն ստացել են վանքից ձրիաբար: Վանքը յուր սեփական բժիշկն ուներ, որն անմիջապես հասնում էր օգնության հիվանդին և կտրական միջոցներ ձեռք առնելով՝ հիվանդին ազատում վերահաս

Մայր Աթոռի տպարանը դարձավ արդյունաբերական մի հաստատություն, նա դուրս եկավ մրցակցության մյուս տպարանների հետ: 1897—1900

վտանգից, հոգալով բոլոր դեղորայքը նույնպես հենց վանքի սեփական հարուստ դեղատնից: Ծերացած և գործից հրաժարված բանվորներին վանքը ցմահ կենսաթոշակ է տվել (Սմբատ Ճուղուրյան, Ներսես Խաչատրյան):

6.—Բանվորական աշխատանքը տպարանում սկսվում էր ամենայն օր առավոտյան ժամը 7-ին և վերջանում էր երեկոյան ժամը 5-ին: Ժամի 12—2 հանգստյան ժամեր էին ճաշելու համար և այլն: Այդպիսով աշխատանքը Մայր Աթոռի տպարանում տևում էր 8 ժամ: Բացի այդ բանվորական հանգստյան օրեր էին և ազատ էին նոքա աշխատանքից՝ 1) ամենայն կյուրակի օրերը, 2) հինգ նավակատյաց տոնի օրերը, 3) օրացույցում «խաչով» նշանակված շաբաթվա ընթացքում պատահող բոլոր տոները, 4) հունվարի 1-ին Նոր տարվա օրը, 5) Զատկին արձակվում էին 5 օր, 6) Ջրօրհնեքին՝ 4 օր և 7) Բարեկենդանին 7 օր: Այս բոլոր տոները ուրախ կատարելու համար, հատկապես բարեկենդանի օրերը ուրախ և զվարճալի դարձնելու համար վանքը տրամադրում էր բանվորներին ձրիաբար հաց, պանիր, գինի, ոչխար, կամ խոզ իրրև մսացու և այլն:

7.—Բացի բանվորների ստացած ռոճիկները, նոքա ստանում էին նաև իրենց ռոճիկի ու աշխատանքի չափով Նոր տարու օրը որոշ դրամական պարգև-նպաստ:

8.—Վանքը միշտ էլ հետաքրքրվել ու հետևել է բանվորական հարցերին: Եթե ցարական կառավարությունը հրատարակել է բանվորական կյանքը բարվոքելու վերաբերյալ նոր օրենքներ, գործարաններում նոցա իրավունքները ընդլայնելու համար և այլն, վանքի տպարանի տեսուչները նույն օրենքներն ու իրավունքներն են գործադրել նաև վանքի տպարանում: Ուստի և Մայր Աթոռի տպարանում գործադուլ երբեք չի եղել:

9.—Մայիսի մեկին Բանվորական օրը տպարանի աշխատավորները տանում էին մի առանձին ուրախությամբ ու ոգևորությամբ, որի համար արձակվում էին երկու օր (մայիսի 1, 2): Վանքը բանվորներին տրամադրում էր որոշ գումար և պահեստից բաց էր թողնում ամեն տեսակ մթերք (միս, պանիր, հաց, յուղ և այլն): Հայտնի է, որ այդ տոնը սահմանվել է 1889 թվին Փարիզում տեղի ունեցած միջազգային սոցիալիստական համագումարում: Թեև կապիտալիստական երկրներում, ինչպես նաև ցարական կառավարությունը այդ տոնի կատարումը արգելում էին, և մասնակցողներին ցրում էին, բայց Էջմիածնի տպարանի բանվորները այդ տոնը կատարում էին ամեն տարի անարգել կերպով Ներսիսյան անտառի մեծ չինարի ծառի տակ, զուռնայով քեֆ անելով:

Այստեղ կցվում է մի պատկեր[44], որը ցույց է տալիս Էջմիածնի տպարանի բանվորական քեֆը 1895 թվի մայիսի 1-ին: Այդ բանվորներից ոմանք դեռևս կենդանի են: 13.

Աջից դեպի ձախ նստած են.

*1. Հովհաննես Զաքարյան Նախիջևանցի, գրաշար
2. Ներսես Մատթեոսյան, գրաշար
3. Հովհաննես Ներսիսյան, թղթածալ, կազմարար
*4. Վաղարշակ Մարտիրոսյան, ձուլիչ աշակերտ
*5. Արտաշես Ճուղուրյան, տպիչ
6. Մկրտիչ » մրագուրկ
7. Համբարձում Աղանյան, տպիչ

Կանգնած են

1. Ցագոր Բունիաթյան, ձուլիչ վարպետ
2. Ալեքսան Տեր-Մկրտչյան, ձուլիչ օգնական
*3. Հայրապետ Կուքիասյան, կազմարարի աշակերտ
4. Մացակ ... մրագուրկ
5. Գաղուստ Մուշեղյան, մրագուրկ
6. Բագրատ .... Դոխսեցի, գրաշար
7. Մի օտար մարդ
8. Ներսես Խաչատրյան, գրաշար
9. Կարապետ Ենգիբարյան, գրաշարի աշակերտ
*10. Հարություն Ավչյան, գրաշար
11. Սմբատ Ճուղուրյան, գրաշար
12. Մկրտիչ Պուլուզյան, տպիչ

* Խաչանիշով նշանակված բանվորները ողջ են:

թթ. Երևանի ամբողջ նահանգի պետական գործերը տպագրվում էին Մայր Աթոռի տպարանում:

Դորա համար Մայր Աթոռի տպարանը յուր հատուկ գրասենյակն ուներ Երևանում: Գրասենյակի կառավարիչը պետական հաստատություններից ստանում էր հատուկ պատվերներ և նույն օրը Էջմիածնի տպարանական վարչությանը հասցնելով՝ հաջորդ օրը ետ էր ստանում տրված պատվերները տպված և պատրաստ: Զանազան հաստատություններից տրված պատվերները ժամանակին կատարելու համար տպարանի բանվորները աշխատում էին փոփոխակի օր և գիշեր: Գիշերային աշխատանքի համար նոքա ստանում էին կրկնակի վարձատրություն:

1895 թվին Պետրոգրադում (այժմ Լենինգրադ) բացվեց Տպարանական գործոց առաջին ցուցահանդեսը: Մայր Աթոռն ևս շտապեց մասնակցել ցուցահանդեսին յուր տպարանով: Մայր Աթոռի համար այնտեղ առանձին դարակ-ցուցափեղկ էր պատրաստված: Այդ դարակը Պետրոգրադի վաճառականներից պ. Խոջաէյնաթյանը յուր հոժար կամքով հանձն էր առել գորգերով զարդարել: Այս դարակի մեջ զետեղվեցին 1771 թվից սկսած Մայր Աթոռի տպարանում լույս տեսած բոլոր գրքերից մի-մի օրինակ, որքան որ հնարավոր եղավ այդ հրատարակություններից գտնել:

Այս առթիվ 1895 թվի «Արարատ» ամսագրի ապրիլի համարում տպված է հետևյալը.

Ս. Էջմիածնի տպարանի դարակը
Պետերբուրգի տպարանական գործոց Ա ցուցահանդեսում
Հրապարակ 1-ին. № 222

«Հայ պարբերական թերթերից արդեն հայտնի է ընթերցողին, որ Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարանը մասնակցում է Պետերբուրգի Ա Տպարանական գործոց ցուցահանդիսին: Տպարանի վարչությունը թեպետ ուշ տեղեկացավ այդ մասին, այնու ամենայնիվ հարկավոր թույլատվությունը ստանալուց հետո անմիջապես ձեռնամուխ եղավ ուղարկելու ցուցահանդիսին Մայր Աթոռի տպարանում տպագրված՝ (1774-ից) սկսյալ հանգուցյալ Երևանցի Սիմեոն կաթողիկոսի օրվանից 1772 ցարդ լույս տեսած գրքերից մի-մի օրինակ, որքան հնարավոր էր: Նախապես ստանալով մեծապատիվ Ն. Բերբերյանի հաճությունը, որով հանձն էր առնում լինել ներկայացուցիչ Մայր Աթոռի տպարանի, ուղարկում է նորա հասցեին ի ցույց տրվելիք իրերը (էքսպոնատ) խնդրելով հոգալ պատրաստել ցուցահանդեսում տպարանիս համար հատկացյալ դարակը (ցուցափեղկ), ինչպես տեղեկանում ենք, Պետերբուրգի հայ ազգի հայտնի վաճառական պ. Խոջաէյնաթյանը հոժարությամբ հանձն է առել ձրիաբար զարդարել գորգերով տպարանիս մասը՝ առ որ տպարանի վարչությունը հայտնում է շնորհակալություն մեծ. պարոններին, այդ ջանից համար:

Տպարանի 125-ամյա գոյության վերա այն է 1772—1895 թթ. մի որոշ գաղափար կազմելու համար, առաջ ենք բերում այստեղ հետևյալ նկարագրությունը, որը հայ և ռուս լեզվավ, ս. Էջմիածնի և Վեհափառ Հայրիկի պատկերներով զարդարված հայտարարության ձևով տպագրված ցուցահանդեսում՝ ձրիաբար բաշխում էին այցելվաց, որ ցուցահանդեսի վերա տեսություն տվող «Обзоръ» թերթը նույնությամբ տպագրել է յուր № 5-ի մեջ՝ «Ս. Էջմիածնի տպարանը»:

(Շարունակելի)



ՊՐՈՖ. ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԳԱՊԱՍԱԽԱԼՅԱՆ
(1740—1808)

Գապասախալյանը ծնվել է Կեսարիայում 1740 թվականին: Հոր անունը եղել է Գասպար: Սկզբնական կրթությունն ստացել է քաղաքի սուրբ Կարապետի եկեղեցուն կից դպրոցում: Այդտեղ նա սովորում է 10 տարի, ստանում դպիրի աստիճան: Այնուհետև նա մեկնում է Կոստանդնուպոլիս և իր կրթությունը շարունակում կարնեցի Հարություն վարդապետի մոտ: Նա դառնում է նշանավոր երաժիշտ և գրում երեք հատորանոց աշխատություն երաժշտության մասին:

Առաջին հատորն անվանել է «Նվագարան», որը փոքրադիր գիրք է՝ բաղկացած 431 էջից և առաջաբանից՝ 7 էջ: Տպագրվել է Կոստանդնուպոլսում 1794 թվականին Ակնեցի Մինաս Չերազ ամիրայի ծախքով:

Նվագարանը Գապասախալյանի երախայրիքն է, ինչպես գրում է առաջաբանում. «Զի առաջին պտուղ մեր է, որպէս թէ ի նորոյ տնկոյ՝ նոր ծաղիկ և նորահաս պտուղ»: Ինչպես գրում է Պաղտասար դպիրը, նույնը կրկնում է և Գապասախալյանը. ասելով՝ եթե գրքիս մեջ գտնվի որևէ հաճելի և օգտակար բան, այն բարի տուրք է տրված Աստծուց, իսկ եթե անվայել որևէ բան լինի, այդ, վերագրեցեք «մեր տհաստութեան»: Գրքի բովանդակությունը կրոնական է. «Երգ առ ամենասրբուհի կոյսն Մարիամ». «Աստուածածնի», «Երգ թլպատութեան», «Քառասնօրեայ գալստեան Տեառն», «Տեառընդառաջին», «Երգ մկրտութեան Տեառն», «Երգ ծաղկազարդի», «Ողբ խաչելութեան Քրիստոսի», «Երգ Յարութեան Քրիստոսի», «Երգ Համբարձման», «Երգ Հոգւոյ գալստեան», «Երգ այլակերպութեան», «Երգ վերափոխման», «Երգ եկեղեցւոյ», «Երգ սրբոյ խաչին», «Երգ սրբոյ Էջմիածնի», «Երգ լուսացնցուղ սրբոյ գերեզմանին», «Ներբող սրբոյն Յոհաննու Կարապետին», «Սրբոյ ամլորդոյն», «Վասն սրբոյ Մկրտչին Քրիստոսի», «Երգ սրբոյն Ստեփաննոսի Նախավկային», «Երգ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին», «Երգ սրբոյն Բարսղի Կեսարի Հայրապետին», «Երգ սրբոյն Մինասայ արագաւոս վկային Քրիստոսի», «Երգ առ մայրն ողորմութեան», «Առ մայրն երանութեան», «Առ ամենեւերանուին կոյսն Մարիամ», «Երգ առ վերին Երուսաղէմ», «Աղերս առ Որդին անմահի», «Երգ խրատօրէն», «Երգ ի վերայ լուսոյ եղականի», «Ի վերայ լուսոյ անեղականի», «Առ վերինն խնդութիւն», «Երգ յունարէն», «Աղդեցութիւն ինչ երաժշտական» (երկար կանգ է առել այստեղ ազդեցության վրա), «Տաղ աւետեաց», «Երգ յունարէն» (բձ), «Երգ յունարէն» (բկ), «Երգ ցնծութեան արդարոց», «Երգ յունարէն» (բձ), «Ծննդեան, յարութեան, խաչի», «Առ Տէրն զօրութեանց», «Առ անմահ Բանն», «Սաղմոս օրհնութեան, «Առ Բանն Հօր պատկեր», «Առ Որդին Միածին Սաղմոս նուագական», «Առ Երանուին կոյսն Մարիամ», «Ծնընդեանն», «Երգ երաժշտական», «Ողբ տիրամօրն», «Ողբ Երեմիա Մարգարէին», «Սուրբ Աստուած» (հունարեն):

Էջ 161-ից մինչև 218 քննության է առնում երաժշտական հարցեր, խազերը, ութ ձայները (որոնք գոյություն ունեն և հունական եկեղեց. երաժշտության մեջ), շարականներն ըստ ութ ձայների: Այդ հարցերի քննության մեջ ցուցաբերել է խորը գիտություն և հմտություն, համեմատելով իր ժամանակի հայկական և հունական երաժշտության հետ:

Այնուհետև շարունակում է թվել աշխարհիկ և կրոնական երգեր:

Երկրորդ գրքույկը վերնագրել է **Երգարան:** Գրքույկի անվանաթերթի վրա գրված է «Գրքոյկս կոչեցեալ
Երգարան

Շարադրեցեալ ի Կեսարացի Գապասախալեան Գրիգոր դպրէ:

Արդեամբ և ծախիւքն իւրոյ:
յԱմի Տն 1803, և Մերոյս ոմնք
փետրուարի դ
Ի Կոստանդնուպօլիս քաղաքի
Ի տպարանի՝ Յոհաննիսեան Պողոսի»:

Գրքույկը բաղկացած է 159 էջից:

Անվանաթերթից հետո երկրորդ էջը վերնագրված է «Աղերս առ սուրբ հոգին Աստուած»:

«Աղերսը», որ համապատասխանում է առաջաբանին, գրված է չափածո և ընդգրկում է 2½ էջ:

Գրքույկի բովանդակությունը, որ սկսվում է 7-րդ էջից, հետևյալն է.

Երգ ի վերայ երկնի:
Ի վերայ աստեղաց
Ի վերայ օդոյ
«Ի վերայ» երկրի (գրավում է գրքույկի երկու էջը), «Ի վերայ ծովու» գրավում է գրքույկի չորս էջը:

Այնուհետև շարունակվում են կրոնական երգեր՝ «Առ երկնաւոր»,

«Առ Հայրն երանութեան», **«Սրբոյ կուսին»,** որին դիմում է.

«Գեղեցկափայլ գեղ գեղեցիկ ի գերագոյն
Գերանարատ, շքեղատիպ վեհագույն
Լե՛ր ինձ միջնորդ, ծնեալն ի քէն Միածնին
Քեզ պաղատիմ մայր Աստուծոյ մաքրանուն»:

Մյուս երգերն են՝ «Առ փրկիչն», «Առ Տէրն զօրութեանց», «Առ փրկիչն Յիսուս», «Առ սուրբ կոյսն», «Առ կոյսն Մարիամ», «Առ միջնորդն երկնային», «Երգ սրբոյն Յոհաննու Կարապետի», «Երգ խրատին»:

«Երգ խրատին»-ի մեջ հեղինակը ընթերցողին հորդորում է հույս չդնել երկրավոր իշխանների վրա. ավելի բարի է հուսալ Աստծուն, Փրկչին, քան իշխաններին: Գապասախալյանը ապրել է օտար իշխանության բռնության տակ և բնականորեն ընդանցից լավ բան սպասել չէր կարող:

«Մի՛ յուսայք դուք որդիս մարդկան իշխանութեանց, մի՛ յուսայք. զի ոչ գոյ փրկութիւն ի նոսա ճշմարիտ, մի՛ յուսայք: Բարի է յուսալ ի Տէր, քան յուսալ ի մարդ, մի՛ յուսայք, բարի է յուսալ ի Տէր, քան յուսալ յիշխանս, մի՛ յուսայք, զի փրկիչ այն է, որ ի հրոյն յաւիտենից զերծանէ»:

Էջ 37-ից մինչև 56-ը աշխարհիկ երգեր են՝ նվիրված Գարնան, Վարդին, Թութակին, Արեգակին, Երգ ուրախութեան և այլն:

Երգարանի էջ 87—89-ում զետեղված է Էջմիածնին նվիրված երգը.

ԵՐԳ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի փառահեղ Արարատեան յորինեցար
դու աննման
Անճառ փառօք ցուցար խորան
սուրբ Էջմիածին:
Գերապայծառ եօթնաձեղուն, ջահաբորբոք
լուսազեղուն
Զարմանասքանչ բարեբեղուն, գլուխ և
Մայր ամենեցուն,
սբ. Էջմիածին:

Ռենական[1] լոյսն փայլատակեալ.
Երկնահանգոյն ձևօք ցուցեալ
Կամարազարդ Սիոն շինեալ
Մայր հաւատոյ վերաձայնեալ
սբ. Էջմիածին:
Իմաստութեան գահ անուանեալ
Բարձրագիտակ խորան կազմեալ
Առ երկնաէջ լուսով լցեալ
Եւ քան զարփին լուսափայլեալ՝
սբ. Էջմիածին:
Գեր քան զյաւէտ մենաստանց
Խորհրդաւոր բերեալ դիմաց.
Գերահռչակ գոլ հայելեաց,
Աղբիւր առատ եւ ծարաւեաց.
սբ. Էջմիածին:
Որով ըզմեզ առատացո
Անճառ փառօքդ զարդարեցո
Զպասքեալ անձին մեր զովացո՝
Պահելով միշտ ի շնորհըս քո
սբ. Էջմիածին:
Ոստէմ[2] ի քէն մայր հաւատոյ
Վերընկալուչ փառաց լուսոյ.
Ո՞վ մշտափայլ գերայարգոյ
Այց արասցես ծառայիս քո
սբ. Էջմիածին:
Է լուսալի՝ զարմանալի.
Զքնաղաշուք հիանալի
Ի սէր քոյին այս խղճալի
Գոռա, գոչէ միշտ բաղձալի
սբ. Էջմիածին:

Նվագարանի մեջ իշխում են կրոնական երգերը: Նվագարանում տեղ են գտել նաև հունարեն լեզվով կրոնական երգեր հայերեն թարգմանությամբ:

---

[1] Ռենական նշանակում է աստվածային:
[2] Ոստէմ նշանակում է խնդրեմ, հայցեմ:

Հունարեն կրոնական երգերին նվիրել է 21 էջ (89—110 էջը):

Հունարեն երգերից հետո գրքույկի վերջին մեկուկես էջը նվիրել է երաժշտության բնութագրմանը՝ «Ցաղագս երաժշտության, թէ զինչ է»:

Երաժշտությունը գիտություն է, որ ուսուցանում է ձայների համեմատությունները, բոլոր եղանակների կերպերը: Նրա մասերը երեքն են՝ նվագական, եղանակական և սրնգական: Առաջինը այն է, որ միշտ երգում ենք ձայնով, ինչպիսին է տաղը, մեղեդին, շարականը:

Երկրորդն է եղեգնափողը՝ սրինգը և սրանց նմանները:

Երրորդն է սաղմոսարանը՝ քնարը, ծընծղան, որոնց վրա ձեռքով քաղցր ձայն են արձակել տալիս:

Նա էլ առնանի երեք կերպ՝ անհամեստ, համեստ և բարի:

Գրքույկի էջ 115-ից մինչև 141-ը նվիրել է կրոնական բովանդակությամբ մեղեդիների:

Մեղեդիները նույնպես նվիրված են եկեղեցական զանազան տոների: Սակայն Մեղեդիները Գապասախալյանի սեփականը չեն, այլ սուրբ հայրերի շարադրածը: Մեղեդիները շարադրել է հետևյալ վերնագրի տակ:

Մեղեդիք բազումք, ի սրբոց հարցն մերոց ասացեալք, որք միով ձայնիւ եղանակին ըստ ոտիցն չափոյ.

Աւետեաց, Ցարութեան, Վարդավառական (Նարեկացուց), Վերափոխման, Լուսաւորչին, Հայրապետաց, Մարտիրոսաց:

Մեղեդիք ծննդեան

Նոր ծաղիկ այսօր բղխէ յարմարգոյն յեսսեայ:

Այս մեղեդիների թիվը 10 է, Ցարության 3, մեղեդիներ նվիրված Տեառընդառաջին, Ծաղկազարդին, Ցարութեան (5), Համբարձման, Հոգեգալուստին, Վարդավառին, Վերափոխման, Սրբոյ խաչին (3), սրբոյ եկեղեցւոյ, Սրբոյն Յովհաննու Կարապետին, Սրբոյն Ստեփաննոսի նախավկային, Սրբոյ Լուսաւորչի (Զայն բարձեալ յերկինս առ քեզ, այսօր մեք յերկրէ գովեմք, սուրբ հայրդ Գրիգորիս, մեղօք տառապեալ որդիքս), Սրբոց առաքելոց (2), Մարգարէիցն, Հայրապետին (Յակոբոս), Մարտիրոսաց, Հռիփսիմեանց, Հրեշտակապետացն Յոհաննու Ոսկեբերանին, սրբոյն Սարգսի, սրբոց Մարտիրոսաց, սրբոց առաքելոց:

Մեղեդիք ըստ կարգի

Սրբոյ ծննդեանն Քրիստոսի, սրբոյ յարութեան, սրբոյ Համբարձման, սրբոյ մեծահրաշին, Հոգւոյն սրբոյ գալստեան, սրբոյ Վերափոխման, սրբոց առաքելոց (2), սրբոյ Լուսաւորչին մերոյ, Սրբոց Հայրապետացն, սրբոց մարտիրոսացն, սրբոց կուսանացն, սրբոյն Վահանայ (Ցաղթող զօրութեամբ, վերնականաւ լցեալ, քաջն զօրականն երանելին Վահան), սրբոյն Սահակայ և Մեսրոպայ (Ոաբունք պանծալիք, որդւոց մարդկան տածողք, ո՞վ սուրբդ Իսահակ և վարդապետ Մեսրոպ), սրբոյ միւռոնի, սրբոյ Ցարութեան, Ծննդեան (2), Վերափոխման:

Տաղերգութիւնքն են ըստ կարգի

Այս երգերը նույնպես կրոնական են և նվիրված Աստվածածնին (3), Ցարութեան, Ծաղկազարդին, հրեշտակաց, Ս. Ստեփաննոսին, Առաքելոց, սուրբ Ցակոբին, խաչին (2), Աւետեաց, Ծննդեան, Համբարձման, Հոգւոյն սրբոյ գալստեան, մարտիրոսաց, Աւագ հինգշաբթի (3), Որդւոց Որոտման, Ցակոբայ առաքելոյն, Պետրոսի և Պողոսի, ուրբաթի, Աստուածածնի:

Տաղ Ցարութեան

(Օրինեալ ի շնորհալի Հայրապետէ, մեղեդի ծննդեան ի Նարեկացւոյ):

Դրանով ավարտվում է երգարանը: Այդ նյութից հետո տեղադրված է բառարանը այբբենական կարգով, և որին հաջորդում է «Հայր մերը» հայերեն, հունարեն և տաճկերեն:

Գրքույկի վերջում, բառարանից հետո տրված է հիշատակարան («Ցիշատակարան գրքոյս»): Վերջում «Ցանկ և ցուցակ յաղագս դիւրագիտ լինելոյ համբակացն թէ որպիսի կերպիւ վերերգեն իւրաքանչիւր երգն»:

Երրորդ գրքույկը վերնագրված է **Գիրք երաժշտական:** Անվանաթերթի վրա գրված է.

Գիրք
Երաժշտական
Յորում պարունակին հայերէն,
Յունարէն, և պարսկերէն հարց
մունք և պատասխանատուութիւնք
համառօտաբար...
Արդեամբ շարագրողի Կեսարացի
Գապասախալեան Գրիգոր դպրի:
Ի թուին հայոց ռմԾբ: Յուլ. 20:
Ի տպարանի Յոհաննիսեան Պողոսի:

Գրքույկին կցված է առաջաբան, որ վերնագրված է «Առ քաջավարժ հմտացողս»: Գրքույկը բաղկացած է 63 էջից, առաջաբանից 4½: Շարադրված է հարց ու պատասխանի միջոցով, բաժանված է 35 գլուխների:

Գլուխ Ա. Համառօտութիւն երաժշտականի գիտութեան, թէ զինչ է.

Գլուխ Բ. Ցաղագս գովութեան երաժշտութեան.

Գլուխ Գ. Ցաղագս թէ ուստի և յումմէ՞ գտաւ երաժշտութիւն.

Գլուխ Դ. Ցաղագս թէ է՞ր վասն ութն ձայնքն:

Գլուխ Ե. Ո՞րպիսի բաղդատութիւն սորա.

Գլուխ Զ. Յաղագս հին ձայնիցն, թէ զի՞նչ և յումմէ՞.
Գլուխ Է. Յաղագս մասնակցութեան ձայնից.
Գլ. Ը. Յաղագս դարձման ձայնին.
Գլ. Թ. Յաղագս անուանց ութից ձայնից.
Գլ. Ժ. Յաղագս հեգմանց ձայնից.
Գլ. ԺԱ. Յաղագս Մեթոդոսի երաժշտականութեան.
Գլ. ԺԲ. Յաղագս թէ յումմէ՞ գտաւ գիրն հայոց.
Գլ ԺԳ. Յաղագս չափաբերութեան տառից.
Գլ. ԺԴ. Յաղագս թէ է՞ր վասն երեսուն և վեց է գիրն մեր.
Գլ. ԺԵ. Յաղագս չափաբերութեան վանկից.
Գլ. ԺԶ. Յաղագս ոտիցն, թէ զի՞նչ և քանի՞.
Գլ. ԺԷ. Յաղագս անուանց և բաժանման ոտիցն.
Գլ. ԺԸ. Յաղագս չափից ոտիցն.
Գլ. ԺԹ. Յաղագս ենթադրութեան ոտիցն.
Գլ. Ի. Յաղագս ենթադատութեան վեշտասան ոտիցն.
Գլ. ԻԱ. Յաղագս թէ ո՞րպիսի կերպիւ իմանին եղանակադրութիւնք.
Գլ. ԻԲ. Յաղագս խազիցն երաժշտականութեան.
Գլ. ԻԳ. Յաղագս բացայայտութեան խազիցն.
Գլ. ԻԴ. Յաղագս մարմնոց և անմարմնոցն խազից.
(էջ 59) Գլ. ԻԵ. Յաղագս անուանց խազիցն.
Գլ. ԻԶ. Յաղագս թէ քանի՞ ձայն ունին իւրաքանչիւրն.
Գլ. ԻԷ. Յաղագս խազիցն, թէ ո՞րպիսի ձայն ունին.
Գլ. ԻԸ. Յաղագս երաժշտութեան յունաց համառօտաբար.
Գլ. ԻԹ. Յաղագս խազիցն, թէ քանի՞ ձայն ունին.
Գլ. Լ. Յաղագս խազիցն յունաց և բաղդատեցման մերոցս խազից:
Գլ. ԼԱ. Յաղագս մեծամեծ խազիցն յունաց.
Գլ. ԼԲ. Յաղագս նշանագծիցն յունաց.
Գլ. ԼԳ. Յաղագս նշանագծիցն յունաց.
Գլ. ԼԴ. Յաղագս բանաստեղծական երաժշտականութեան.
Գլ. ԼԵ. Յաղագս թէ ուստի՞ հնարեցաւ այս բանաստեղծական երաժշտութիւն:

Վերջին գլուխը ամենաընդարձակն է և ընդգրկում է 88-ից մինչև 144 էջը:

Գապասախալյանը հարց ու պատասխանի միջոցով հարուցում է բազմաթիվ և բազմատեսակ հարցեր և տալիս այդ հարցերին սպառիչ պատասխան: Հարցերի մեծ մասը վերաբերում են երաժշտության և բանաստեղծության: Քննության է առնում նաև աստղաբաշխական, բժշկական, երկրաչափության վերաբերող հարցեր:

Քննության է առնում երաժշտական ձայները: Ի՞նչ անուն ունեն իսկական ձայները: Առաջադրած հարցին պատասխանում է.

«Յօգնականապէս եդեալ են զանունս, բայց իսկականին և պիտանիք ըստ պղատոնականն քնարի է եօթն, համապատասխան 7 մոլորակների՝ եղամանակ, երկամանակ, եռամանակ, քառամանակ, հնգամանեակ, պտուտակ, որը է վեցամանակ (պարսկերեն կոչվում է եթեր կամ երկինք), յոթերորդը կոչվում է եոթամանակ:

Դրան առընթեր դնում է և հայկականը և հունականը, որոնք ութ ձայն են, և տալիս է այդ տարբերության բացատրությունը, որ գիտական չէ և անհամոզիչ է:

Գապասախալյանը հայերի, հույների, պարսիկների, արաբների երաժշտական ձայները համարում է չորս, («իսկական ձայնքն որք ի լոյս է ընծայեցեալ, ի վերայ չորիցն են հաստատեցեալ տարերց»), որովհետև հիմնված են բնության չորս տարերքի՝ հող, ջուր, օդ, հուր և աշխարհի չորս կողմի վրա (86):

Հույները ձայնանունները կոչել են յոթ մոլորակների գոյության համապատասխան «բաղդատեցմամբ եօթանց մոլորակացն ի լոյս ընծայեցեալք են, որպէս թէ եօթն գոտիք» (87—88):

Երաժշտական ի՞նչ եղանակներ ինչպե՞ս են ներազդում մարդուն: Գապասախալյանը այս հարցին տալիս է յուրօրինակ պատասխան: Նայած մարդը ի՞նչ գույն ունի, դրա համապատասխան ազդում է ձայնը. «յորպիսի ձայնէն բերկրի մարդն այն, որոյ գոյնն սևադէմ, և յո՞րպիսի ձայնէն դեղնագոյնն, սպիտակագոյնն և այլն» (էջ 100): Սևադեմ մարդկանց բնությունը մեղմ է և չոր և նրանց դեմ երգելի է նույնպիսի ձայնով. «զի բնութիւնք նոցա ի նոյնոյ ցնծացեալ բերկրի ի ձայնէ» (էջ 104):

Գապասախալյանի առաջին և երկրորդ գրքույկները պարունակում են միայն երգեր: Երգերի ճնշող մեծամասնությունը, ինչպես տեսնում ենք, կրոնական է, նվիրված եկեղեցական տոներին, Աստվածածնին, Քրիստոսի կյանքին, նաև քիչ չափով աշխարհիկ երգեր՝ նվիրված վարդին, պուլպուլին, բարեկենդանին, գարնան, արևին և այլն:

Գապասախալյանն զբաղվում է նաև խազերի հարցով: Այդ խնդրին նա նվիրել է երրորդ գրքույկի ԽԲ—Լ գլուխները (էջ 56—74):

Ի՞նչ է երաժշտական խազը: Խազը երա-

ժըշտական մի գիծ է, որը գործիքի միջոցով հորինվել է օրհնաբանական երգերի համար: Խազերն ըստ ձևի լինում են՝ սրաձև, թրաձև, գրաձև, ճղաձև, օղաձև, կտուցաձև և այլն: Խազերը հորինվել են երաժշտական եղանակի պերճազարդության համար և մանավանդ Աստծո փառաբանության համար:

Խազերը հնարել են փիլիսոփա երգիչները կամ իմաստունները: Սուրբ հայրերը պարզել և կարգի են բերել խազերը: Հայկական խազերի թիվը հունականի նման 14 է (դեկադեսարա): Դրանցից ութը վերելակներ են և երգվում են բարձր, իսկ վեցը ստորիջյալներ են և երգվում են ցածր ձայնով: Խազերն ունեն հետևյալ անունները՝ երկար, սուր, ոլորակ, բեկորհ, զարկ, ծնկներ, ծունկ, թուր, փուշ, երկփուշ, խունճ, պեկորհ, պարույկ, ներքնախաղ: Բացի այս անուններից կան նաև ուրիշները:

Յուրաքանչյուր խազ ունի իր անունը և իր այլ և այլ ձայները, որ մենք անվանում ենք ճախարակ, իսկ հույները՝ գրոխոս:

Հունական խազերը հայկականի նման 14 են և կոչվում են դեկադեսարա: Դրանցից ութը վերելակ է և բարձր (որ հունարեն կոչվում է անիուսա), վեցը՝ ստորիջեալ՝ ստոր (դադիուսա): Գապասախալյանը համեմատում է հայկական խազերը հունականի հետ:

Գապասախալյանը խազերի մասին իսուելիս գործածում է «խաղասացութիւն» բառը, որ բացատրում է «է բանիբուն երաժշտութիւն, որ ընդ քողաւինար գիտութեան միշտ զնոգէնագն եղանակէ երգ. զի խաղասացութեան իսկական յատկութիւն է բարենուագ քաղցրաձինչողութիւն» (էջ 71):

Գապասախալյանը հայկական խազերը համեմատում է հունականի հետ, հունականն ընդունելով 14: Այդ համեմատությունը կատարում է թե ըստ ձայների և թե ըստ ձևի: Համեմատությունը ցույց է տալիս հունականի և հայերենի նույնությունը: Թե առաջնությունը դրանցից որի՞ն է պատկանում, Գապասախալյանը ոչինչ չի ասում:

Այնուհետև նա շարունակելով ուսումնասիրությունը կանգ է առնում հունական և հայկական նշանագրերի վրա և ցույց է տալիս նրանց նմանությունը: Հունարենում ձայնավորի թիվը 7 է, իսկ հայերենում 8:

Այնուհետև քննության է առնում բանաստեղծությունը, բանաստեղծական երաժշտությունը, երաժշտությունը, չորս բուն ձայները, 12 ձայները, նրանց համեմատությունը, 7 ձայները: Բացատրում է, թե ինչո՞ւ հայկական և հունական երաժշտության մեջ ընդունված է 8 ձայն, ձայների բաժանումն ըստ 7 կլիմայի, ի՞նչ է եղանակը, ի՞նչ է ձայների շարժմանությունը, ովքե՞ր են հայ տաղերգուները (Նարեկացի, Ճնորհալի, Գրիգոր Տաթևացի, Գրիգոր Վարդապետ Մերենց, Խաչատուր Կեչառեցի): Ովքե՞ր են շարականների եղանակը երգողները: Դրանք են՝ Սուրբ Սահակը, Մեսրոպը, Մովսես քերթողը, Անանիա Շիրակացին, Հոհան Օձնեցին, Հոհան Մանդակունին, Պետրոս Գետադարձը, Գրիգոր Մագիստրոսը, Գրիգոր Վկայասերը, Գրիգոր Սկևռացին, Ստեփանոս Սյունեցին, Ներսես Շնորհալին:

Առաջադրում է հարցեր՝ ի՞նչ է եղանակագրությունը, ի՞նչ է երգագրությունը: Եղանակագրությունը երգագրություն է, իսկ ի՞նչ է երգագրությունը: Այս հարցին տալիս է հետևյալ պատասխանը՝ երգագրություն է «քաջայայտ գիտութիւն իմն, որ ուսուցանէ վերագրել զեղանակս ձայնից» (էջ 114, գիրք երաժշտական): Այնուհետև բացատրում է հունական մի շարք եղանակներ, որոնց անունները չի թարգմանում:

Էջ 136-ում քննության է առնում միջնադարյան 7 ազատ գիտությունները՝ քերականությունը, հռետորությունը, տրամաբանությունը, թվաբանությունը, երաժշտությունը, երկրաչափությունը և աստղաբաշխությունը: Գրքի վերջում (էջ 137) գովերգում է երաժշտին և երաժշտությունը: «Բայց երաժշտական գիտութիւն ի միջի ընդհանուր գիտութեանցն ծանօթութեանց՝ զանազանութիւնք պանծայ մականունութեամբ: Երբեմն կոչի երգ ցնծութեան, երբեմն հրեղինականն զօրութեանց, երբեմն աստուածային փառաց: Յիրաւի է երգ աստուածային փառացն, զորմէ ասի՝ Տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան և սերովբէքն կային շուրջ զնովա... աղաղակէին մի առ մի և ասէին Սբ՛, Սբ՛, Սբ՛, Տէ՛ր զօրութեանց, լի է ամենայն երկիր փառօք նորա»:

Այնուհետև հարց ու պատասխանի միջոցով պարզաբանում է մի քանի երաժշտական հարցեր:

Գրքույկն ավարտվում է հիշատակարանով՝ գրված չափածո:

Գապասախալյանը, ինչպես տեսնում է ընթերցողը, ստեղծագործական, բարձր կարողությամբ օժտված իր ժամանակի ականավոր դեմքերից մեկն է եղել և անտարակույս՝ վայելել է ժամանակակիցների խորը հարգանքը: Գապասախալյանը օժտված է բանաստեղծական մեծ տաղանդով: Տաղանդը նա դրել է ի սպաս եկեղեցու, որովհետև այդ է եղել ժամանակի պահանջը: Նա գրել է բազմաթիվ ոտանավորներ կրոնական թեմայով նվիրված Քրիստոսին, Աստվածածնին, եկեղեցական բոլոր տոներին, եկեղեցական խոշոր գործիչներին թե հայ և թե օտար: Երգեր է նվիրել և Էջմիածնին՝ արտահայտելով ջերմ զգացմունքներ Մայր Աթոռին;

Երգերի նյութ է դարձրել նաև աշխարհիկ երևույթներ, բայց ոչ մարդկային կենցաղը, այլ բարեկենդանը, գարունը, արեգակը, հողը, ջուրը, հուրը (փիլիսոփայական թեմա), վարդը, սոխակը և այլն: Սիրո զգացմունքը տեղ չունի Գապասախալյանի ստեղծագործության մեջ:

Նա իր ժամանակի ականավոր տեսաբանն է հայկական երաժշտության մեջ: Նա քաջ տիրապետում է հունարեն երաժշտությանը, ինչպես և հունական լեզվին: Հունարեն մի շարք եկեղեցական երգեր թարգմանել է հայերեն: Հայկական և հունական եկեղեցական երաժշտության մեջ անցկացնելով զուգահեռ տեսնում է նմանություն հայկականի և հունականի միջև, սակայն ազդեցության խնդիր չի շոշափում, չի նսեմացնում հայկականը, ընդունում է նրա ինքնությունը, առանց հայկականի մեջ տեսնելու հունական ուժեղ ազդեցությունը, ինչպես վարվել է Սպիրիդոն Մելիքյանը:

Որպես բանաստեղծ և հայ երաժշտության տեսաբան Գապասախալյանը եզակի դեմք է ժամանակաշրջանի հայ մշակույթի պատմության մեջ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայոց Հայրապետի ողջույնի խոսքը Վեհարանի գահասրահում Տ. Պիմեն Պատրիարքի՝ Մայր Աթոռ այցելության առիթով 3

Տ. Պիմեն Պատրիարքի ողջույնի խոսքը Վեհարանի գահասրահում 7

Մոսկվայի և Համայն Ռուսիոց Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը Մայր Աթոռում 9

Հաղորդագրություն 24

Հաղորդագրություն 26

Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը Մայր Աթոռում . 27

Պաշտոնական հայտարարություն 30

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նամակը Անթիլիասի կիլիկյան Աթոռի գահակալ Տ. Խորեն Ա կաթողիկոսին 31

Մայր Աթոռի տպարանի հիմնադրության 200-ամյակի առիթով հանդիսություններ Մայր Աթոռում 34

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 40

ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՑ—Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը 42

ՊՐՈՖ. ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ—Գրիգոր Գապասախալյան 58

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 16/XI 1972 թ.: Ստորագրված է տպագրության 22/XII 1972 թ.:

Տպագրական 4 մամուլ+3 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 821

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1972 թ.